

1486 Ե, 1634-ի

ՔԱՂԿՐԹՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱԳՐՑԵՐ

ՅԵՎ ԶԵՄՆԱԾԿՆԵՐ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԳՅՈՒՂԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ

ՔԱՂԵՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

ՊՐԵԿԱ.

ՀԱՅԵԱՐԱՐԱԿՈՒԽ Ե ՀԱՅ. 1436-Ի ԿԿ-Ի ԱԳԻՏՈՐՈՈՐԱԲՆԻ

ԿՈՂՄԻՑ

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹԸՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ, 1929

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՏՎԵԼ ԳՐՔԻՑ

1. Այս գիրքը հասկացված և քաղընթերցումների և ինքնակրթության խոժերի խոսակալան խմբակներում պարագող ընկերների համար Գիրքը կարելի է առաջործել նաև քաղցրագիտության խոժերի խոսակալան ստացիոնար գորացներում:

2. Քաղընթերցումների խմբակներում ամենից լավ և պարագությունքները կատարել միասնական բարձր ընթերցանության և զրգի ասածին զրուցները վերլուծության լինթարկելու միջոցով: Բարձր ընթերցանությունը պիտօք և կատարեն հերթով խմբակի ամենալավագույն գործադրությունը կարգացներ են:

3. Գետք և կարգալ վոչ թե ամբազծ զրուցը մի անգամից, այլ այն առանձին հատվածների բաժանելով: Հատվածը կարդալուց հետո պիտօք և սոսուզել թե՝ արդյոք նրա բոլոր անդամները հասկացել են կարգացմանը և միասին վերլուծության լինթարկել անհասկանալի տեղերն ու բառերը:

4. Զրուցը վոչ միայն պիտօք և կարգալ այլի վերլուծության լինթարկել կարդացնել և համեմատության մեջ դնել այն ամենի հետ, ինչ վոր կլանքից խմբակի անդամներին հայտնի լի: Դրա համար պիտօք և խմբակի անդամներին առաջադրություն տալ զրուցը համար տեղական նյութեր հավաքեր: Հավաքված նյութերն ողտագործման են լինթարկվում հաջորդ պարագմունքի ընթերցանության՝ ժամանակի:

# ԴԱՍԱԳՐՔԻ ԸՆԴ

ԳՅՈՒՂԻ ԿՈՄՅԵՐԵՏԱԿԱՆ


ՔԱՂԱՔԵՐՑԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ Բ.

16764

A ii / 23496

ՀԵՂԻՆԵՐՑՈՒՄ Ե ՀԵՄ. 14067-ի կողմանութեանը հաջորդութեանը կազմու



Հր. № 917. Գրառեպիտ № 1656 (ր). Տիրութ 4000

Պետքատի առաջին տպարան Վաղարշապատում

Պատվեր № 24

## ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անցած գլխից մենք գիտենք, վոր մեր յերկրի, ինչպես և ուրիշ յերկրների ժողովրդական անտեսությունը կազմված և յերկու մեծ մասերից.—արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից:

Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը կախում ունեն իրարից: Ֆարբիկաններն ու գործարանները չեն կարող աշխատել առանց այնպիսի հում նյութերի, ինչպիսին են. —վուշը, բուրդը, բամբակը, հում կաշին, շաքարի ճակնդեղը և ուրիշ գյուղատնտեսական մթերքներ:

Արդյունաբերությունն ապրանքն արտադրում և վաճառքի համար: Ֆարբիկալին ապրանքների զգալի մասը գնում և գյուղացիությունը:

Վորքան շատ արդյունք և տալիս գյուղական անտեսությունը, գյուղացին այնքան ավելի արդյունաբերական ապրանք և կարողանում գնել՝ թե անտեսության, թե իր անձնական կարիքների համար:

Բայց գյուղատնտեսությունը չի կարող ամրանալ, բարվոքվել՝ առանց լավ զարգացած արդյունաբերության: Յեվ իրոք, գյուղատնտեսությունը բարվոքելու համար անհրաժեշտ են մեքենաներ, գործիքներ, արհեստական պարարտացումներ: Իսկ այս ամենը տալիս և զարգացած արդյունաբերությունը ձիշտ արդարեն՝ վորքան ավելի լե զարգացած արդյունաբերությունը, նույնքան ավելի պահանջ և զգացվում գյուղատնտեսական մթերքների (հացի, արմտիքի, հում նյութերի):

Խոշոր արդյունաբերությունը տանում և իր լեռեցից գլուղաննասությունը՝ ոգնում և, վոր գլուղաննասությունն անցնի հողը մեքենայով մշակելու ձեին, պարարտանյութեր և մատակարարում նրան, վերամշակում և գլուղաննասության արտադրությունները:

Բոլոր կապիտալիստական լերկրներում արդյունաբերությունը հանդիսանում և ժողովրդական տնտեսության զլխավորումը, վոր իրեն և լենթարկում գլուղաննասությունը, Բայց կապիտալիստական արդյունաբերության և պետական, սոցիալիստականի մեջ տարրերությունը հսկացական և:

Կապիտալիստաների հոգածարության առարկան վողջ ժողովրդական տնտեսության բարելավումը չեւ Յուրաքանչյուր կապիտալիստ միայն մի բան և ցանկանում.—Վորքան կարելի լիշտատական միայն մի բան և ցանկանում.—Կապիտալիստն այն ապրանքն և արտադրում, ինչ վոր իրեն ավելի ձեռնառու, շահագիտ և թվում, աշխատում և իր ֆարբիկայում վորքան կարելի լիշտատական միայն բառերում և ապրանքատական միայն:

Կապիտալիստաների մեջ անվերջ պարբար անդի ունի զնորդի համար: Վորպեսզի կարողանա իր ապրանքն ավելի արագ ու աշխատ մեծ վաստակով վաճառել, յուրաքանչյուր կապիտալիստ աշխատում և միշտ նոր ու կատարելագործված մեքենաներ ունենալ, վորոնցով կարելի լինի ապրանքն արտադրել ավելի արագ ու եժան:

Շահ ստանալու անհագ ցանկությունն ստիպում և յուրաքանչյուր կապիտալիստի՝ վորքան կարելի լիշտատական մասում ապրանք արտադրել Մրա հնաեանքն այն և լինում, վոր կապիտալիստական լերկրներում քայլքարիվում և ժողովրդական տնտեսությունը, վորովնեան հաճախ շատ ապրանքներ ավելի լին պատրաստվում, քան լերկիրը պետք ունի: Ֆարբիկաները, գործարանները ժամանակավորապես փակվում են (մինչև պառկած ապրանքի վաճառովելը), բանվորներն արձակվում են, գործարզիկությունն աճում է: Իսկ ապրանք զնողների թիվն ավելի լիշտատական ապրանքի վաճառով գործադրուրին ինչոք կարող ե գնում կատարել: Ֆարբիկաների մի մասը փակվում և—ուրեմն գլուղաննասական մթերքների, հում նյութերի (փայտ, բամբակ, կաշի և ալյն) պահանջն ել և պակասում: Բազմաթիվ մանր գլուղացիական տնտեսություններ կործանվում են: Մի խոսքով— քայլքարիվում և վողջ ժողովրդական տնտեսությունը:

Ժողովրդական տնտեսության քայլքալումից խուսափելու  
համար պետք է վաղորոք մտածված հաշիվ, ամբողջ ժողովրդա-  
կան և նետեսության պլան ունենալը Ազագիսի պլան չկա և չի կա-  
րող լինել վոչ մի կապիտալիստական պետության մեջ, ուր Փար-  
քիկաները, գործարանները, կալվածները գտնվում են իրար հետ  
անվերջ թշնամություն վարող անհատ կապիտալիստների ձեռ-  
քում, վորոնք իրենց Փարքիկաներն ու գործարանները կառու-  
ցում են իրարից բոլորովին անկախ կերպով:

Ժողովրդական տնտեսության միասնական, վաղորոք մտած-  
ված պլան կարելի է մշակել միայն Խորհրդավիճ Միության մեջ,  
ուր համարյա ամրող արդյունաբերությունը, բոլոր լիրկաթու-  
ղիները, և լիքարոկալանները, բանկերը գտնվում են բանվոր դա-  
սակարգի ձեռքում: Հասկանալի է, վոր ԽՍՀՄ-ի վողջ տնտեսու-  
թյան համար միասնական պլան մշակելը հեշտ գործ չե: Մեր պե-  
տության տնտեսությունը շատ է մեծ: Բացի դրանից՝ համարյա  
ամրող գյուղատնտեսությունը վոչ թե պետության ձեռքումն է,  
այլ անհատ գյուղացիների սեփականություն և կազմում: Խնչպիս  
գիտենք ԽՍՀՄ-ում գյուղացիական ծխերի թիվը 24 միլիոնից ա-  
վելի է: Շատ դժվար է միշտ հաշվել, թե գյուղացին վորքանի հող  
կցանի, թնչ կուլտուրաներ, թնչպիսի բերք կլինի, գյուղացին  
վորքան գյուղատնտեսական բերք շուկա կհանի և թնչպիսի ու  
վորքան Փարքիկային ապրանք կգնի:

Այս պատճառով ժողովրդական տնտեսության զարգացման  
այն պլանները, վոր կազմում և Խորհրդավիճ պետությունը, զեռ  
ևս չեն կարող բալորովին նիօտ համարվել: Սակայն տարեց-տարի  
ժողովրդական տնտեսության ավելի մեծ բաժին և անցնում պե-  
տության ու կոռպերացիայի ձեռքը և պլաններն ել ավելի ճիշտ  
են դառնում:

Բանվոր դասակարգը, վոր Խորհրդավիճ Միության արդու-  
նաբերության տերն է, շահի լեռնեից չի ընկնում: Խորհրդավիճ  
սոցիալիստական արդյունաբերության նպատակն ե—լեռկին հար-  
կավոր ապրանքներն ավելացնել, նրանց ավելի եֆանացնել և  
այսպիսով ավելի մատչելի դարձնել աշխատավորությանն, այ-  
սինքն բանվորներին ու գյուղացիներին: Իհարկե, արդյունաբե-  
րությունը Խորհրդավիճ Միության մեջ ևս վաստակ և տալիս:  
Բայց այդ վաստակը գնում է վոչ թե առանձին կապիտալիստների  
գրպանը, այլ ծառալում է ամրող հասսրակություն ոգտին, ժո-  
ղովրդական տնտեսության զարգացմանը և սոցիալիստական շի-  
նարարությունն արագացնելու գործին:

1. Գյուղատնտեսուրյան զարգացման համար ինչո՞ւ ամուռ արդյունաբերելուրյուն և հարկավոր:

2. Ժողովրդական տնտեսուրյան համար ինչո՞ւ պլան և հարկավոր:

### ՄԵՐ ՖԱՐԲԻԿԱՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Ցարական պատերազմը Գերմանիայի հետ, իսկ այնունեած ել քաղաքացիական կոխվը ծանր ազդեցին Խորհրդավորն հանրապետությունների ժողովրդական տնտեսությունների վրա: Առանձնապես տուժեցին արդյունաբերությունն ու լերկաթուղիները: Քաղաքացիական կովի վերջերին, — 1920 թվին, մեր ֆարբիկաներում ու գործարաններում միքանի անդամ պակաս ապրանք երպարաստվում, քանի պատերազմից առաջ, 1914 թվին եր:

Որինակ, 1920 թվին քարածուխ հանվել ե չորս անգամ ավելի պակաս նախապատերազմիանից ( $27\%$ ), նավթ—կիսից պակաս ( $42\%$ ), աղ—մի լերորդը ( $30\%$ ): 1920 թվին նախապատերազմիանի հանդեպ պատրաստվել են—գութաններ՝  $13\%$ , շաքար՝  $7\%$ , աղուսում՝  $2\%$ , լուցկի՝  $14\%$ , և ալսպիս՝ համարյա լուրաքանչչուր ապրանքից:

Միայն քաղաքացիական կոխվը վերջանալուց հետո հնարավոր լեզավ կպչել ֆարբիկաները, գործարանները, լերկաթուղիները, քարածուխի շախաերը նորոգելու գործին: Արդյունաբերական (գործարանալին) ապրանքների քանակը տարեց տարի սկսում և ավելանալը:

Ալսպիս՝ 1923/24 տնտեսական տարում<sup>1)</sup> Խորհրդավորն Միության ֆարբիկաները, գործարանները և արհեստանոցները պատրաստել են 2 միլիարդ 441 միլիոնի ապրանք:

1926/27 թվին Խորհրդավորն Միության ֆարբիկաներն ու գործարաններն արդեն մի փոքր ավելի ապրանք են պատրաստել, քան պատերազմից առաջ (նախապատերազմիանի  $101\%$ ):

1927/28 թվին մեր արդյունաբերությունը տվել ե արդեն  $14\%$  ավելի նախապատերազմիանից:

Խոչու բանվոր դասակարգն ալսպիս շուտու կարողացավ վերականգնել պատերազմներից քալքարված մեր արդյունաբերությունը:

1). Տնտեսական տարին սկսվում է վոչ թե հունվարի 1-ից, այլ հոկտեմբերի 1-ից: Որինակ՝ 1923/24 տնտեսական տարին սկսվեց 1923 թ. հոկտ. 1-ից և վերջացավ 1924 թ. սեպտ. 30-ին:

Հեղափոխությունից առաջ հսկալական փողեր (տարեկան հարցուրավոր միջին ոռությունը) ելին գնում կապիտալիստների և կալվածատերերի զրաքանը, վորոնք ծախսում ելին քեֆերի, թանգագին քարերի ու զարգերի վրա: Խորհրդացին իշխանությունը կալվածատերերից ու կապիտալիստներից գրավեց հողերը, ֆարբիկաները, գործարանները, բանկերը: Ամբողջ յեկամուտը—արդյունքը պետական արդյունաբերությունից, բանկերից, առետրից—այժմ վոչ թե մի խումբ պարագիտաների էն կերակրում, այլ ծառալում են ժողովրդական տնտեսության բարելավման, գործարանների ու ֆարբիկանների վերասարքավորման գոյ ծին: Հարցուրավոր միջին ոռությունը խնայողությունը, վոր առաջ կալվածատերերն ու կապիտալիստներն ելին վատնում, ոգնում և բանվոր դասին՝ արագ վերականգնելու արդյունաբերությունը:

Մեծ ոգուտ և տալիս նաև արդյունաբերության պլանային դեկավարությունը, վորի մասին մենք զիտենք նախընթաց զբուցից:

Բայց զրանից՝ խորհրդացին իշխանության ժամանակ բանվորները բոլորովին այլ վերաբերմունք ունեն դեպի արտադրությունը, քան ունելին կապիտալիզմի ժամանակ: Սոցիալիստական ձեռնարկության մեջ բանվորներն իրենք են ամեն կերպ աշխատում ավելացնել պատրաստվող ապրանքի քանակը, վորովհետեւ ինքը բանվոր գասակարգն և տեր հանդիսանում Փարբիկաների, գործարանների, հանքերի, վորովհետեւ Խորհրդացին Միության մեջ բանվորներն աշխատում են վոչ թե կապիտալիստների, այլ հենց իրենց համար, ամբողջ բանվոր դասի և աշխատավորության ոգտին: Կալվածատերերին ու կապիտալիստներին արտաքսելը, պետական տնտեսության պլանային կերպով վարելը և խնարով ու ուշադիր վերաբերմունքը դեպի արտադրությունը հնարավորություն տվին արագ վերականգնել պատերազմներից քայլաված արդյունաբերությունը:

Բայց այս ըոպելիս ել մեր լերկերը գործարանային ապրանքների մեծ կարիքունի: Այս բանը զիտե ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի: Շուշալում պակաս են ճոթեղենը, մետաղեապրանքը (մեխ, թիթեղ, մեքենաներ, դագդահ), շինանյութերը (աղյուս, ցեմենտ) և արդյունաբերական ուրիշ ապրանքներ: Մեր ֆարբիկաներն ու գործարաններն առաջմ չեն հասցնում այնքան ապրանք, վորքան հարկավոր և մեր լերկերին: Մեր լերկերն այժմ ապրանքային սովէ և ապրում, ալսինքն գործարանային ապրանքները պակաս են:

Ինչու յենք ապրանքի արդպիսի կարիք զգում: Զե՞ վոր պատերազմից առաջ, յեթե ձեռքիդ փող կար, կարող ելիք գնել ուղած ապրանքը—ճոթեղեն, մետաղի իրեր, մեքենաներ:

Նախընթաց գլուխներից արգեն գիտենք, վոր ապրանքալին սովի պատճառն այն ե, վոր հեղափոխության տարիներում բան-վորների և գլուղացիների նույթական գրությունն զգալի կերպով լավացել ե: Այժմ նրանք կարողանում են ավելի ապրանք գնել:

Արդյունաբերությունը ցարական Ռուսաստանում պատերազմից առաջ ել հարկավոր չափով զարգացած չեր: Պակասող գործարանային ապրանքները (մեքենաներ, զաղղաններ, գլուղանական գործիքներ, ճոթեղեն, ներկեր) ձեռք ելին բերվում արտասահմանում: Դրա փոխարեն արտահանվում եր ռուսական հացը և գլուղանական այլ բերքեր:

Ռուսաստանը չերկրագործական յերկիր եր, վոր գլխավորապես գլուղանական ապրանքներ եր արտադրում: Գլուղանական առաջնորդությունը մեկուկես անդամ ավելի ապրանք եր արտադրում, քան արտադրում եր արգյունաբերությունը:

Որինակ, 1913 թվին Ռուսաստանն արտադրել ե 7 միլիարդ 11 միլիոնի արգյունաբերական ապրանք, իսկ գլուղանական՝ 11 միլիոն 281 միլիոն ռուբլու:

Համարյա նույնն ե նաև յերջին տարիներում: 1926/27 թ. արգյունաբերական ապրանք պատրաստվել ե 7 միլիարդ 974 միլիոն ռուբլու, իսկ գլուղանական՝ 12 միլիարդ 70 միլիոն ռուբլու:

Կարող են մեզ հարցնել—ուրիմն ամրող ցավը նրանումն ե, վոր մեր յերկրում գործարանային ապրանք ավելի քիչ ե պատրաստվում, քան գլուղանական: Յեթե մեր արգյունաբերությունը ևս 12 միլիարդի ապրանք արտադրի, այդ դեպքում մեր յերկիրն այսիս հետամնաց չե՞ր համարվի՞ւ:

Վոչ, միայն այդ չե: Մեզ հարկավոր ե, վոր մեր յերկիրը մեքենաներ և արգյունաբերության, տրանսպորտի ու գլուղանական համար սարգավորումը վոչ թե տրտասահմանից բերի, այլ իր ֆարբիկաներում ու գործարաններում արտադրի: Առանց սրան չի կարելի ԽՍՀՄ արգյունաբերությունն այնպիս շարժել, վոր կարողանա համանել և անցնել կապիտալիստական տնտեսապես ամենազարգացած յերկրների արգյունաբերությունից:

Առանց սրան Խորհրդային Միությունը չի աղատվելու ապրանքալին սովորից:

Առանց խոշոր արդյունաբերության արագ դարձացման մեր չերկրի տնտեսությունը չի կարող վոչչացնել իր կախալ վիճակը կապիտալիստական լերկըների արդյունաբերությունից, վորոնցից առաջմհարկադրված ենք մեքենաներու սարքավորումն ձեռք բերել

Անհրաժեշտ է, վոր վոչ միայն ամբողջովին վերականգնենք, նորոգենք պատերազմից վնասված ֆարբիկաներն ու գործարանները, այլև վերաստավորենք նրանց նորիկան:

Շատ ֆարբիկաների ու գործարանների շենքեր, մեքենաներ, դազգաներ են մաշվել, հնացել. խոշոր նորոգության կարիք ունեն, լերքեմն ել բոլորովին պիտի փոխարինվեն նորերով, ափելի ուժեղ, լավ վորակի ու եժան ապրանք պատրաստողներով:

Բայց այս քիչ եւ Արդեն զոյտություն ունեցող, աշխատող միքանի ֆարբիկաներում ու գործարաններում անկարելի յի ծավույթը ընդարձակել այն բոլոր ապրանքների արտադրությունը, վորոնք պետք են մեր լերկընին. Պետք ե մեծացնել գործարանների ու ֆարբիկանների թիվը, կառուցել նոր, խոշոր, լավագույն մեքենաներով սարքավորած ֆարբիկաներ ու գործարաններ:

Միքանի տարի յի, ինչ ԽՍՀՄ-ում աշխատում են հին ֆարբիկաներն ու գործարանները վերանորոգել և նորերը կառուցել. Մեր լերկըն ավելի ու ավելի ֆարբիկային ապրանք և մշակվում: Յեզ մոտ ապագայում խորհրդադին իշխանությունն ըստ ամենալի պիտի աշխատի նոր ֆարբիկանների ու գործարանների կառուցումը ծավալել, վոր շուտով վերանա մեր լերկըն ֆարբիկային ապրանքների պակասը և շուտով մեր ազգարարին լերկիրը դառնա ինդուստրիալ (արդյունաբերական) լերկիր:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Կնշո՞ւմն և խորհրդային ենթակառության առավելությունը:
2. Կ՞նչպես ենք ուզում վերակառուցել մեր ենթակառությունը:

ԳԼԽԱՎՈՐ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԻՏԻ ԴԱՐՁՆԵԼ. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մեր արդյունաբերությունը զանազան իրեր, զանազան ապրանքներ և պատրաստում: Միքանի գործարաններում ու ֆարբիկաններում պատրաստվում են այսպիս կոչված սպառման ապրանքներ—ճոթեղեն, շաքար, լուցկի, կաշի: Արդյունաբերության մի այլ մաս զբաղված է արտադրման միջոցներ—ֆարբիկանների ու գործարանների համար մեքենաներ և հողի մշակության

համար արակտորներ, զութաններ պատրաստելով. այսինքն այնպիսի առարկաներ, վորոնք անհրաժեշտ են արտադրության համար,

Միայն այն լերկիրը կարող է տնտեսապես անկախ լինել վորը կարողանում և իր սեփական ֆարբիկաներում ու գործարաններում պատրաստել իրեն հարկավոր արտադրության միջոցները և առաջին հերթին՝ մեքենաները:

Մեր լերկիրն արտազրութեան միջոցներ պատրաստող ֆարբիկաներ ու գործարաններ քիչ ունի: Յեղածներն ել պետք և փոփոխեր վերակառուցել, բարեկարգել:

Մեքենաներ, զազգահներ պատրաստող արգւունարերութեւնը բաղկացած և խոշոր, մեծ գործարաններից ու ֆարբիկաներից: Այդ գործարանները կահավորելու, մանավանդ նորերը կառուցելու համար շատ ժամանակ ու զրամ պիտի ծախսել: Մի խոշոր, մեքենակառուցվածանի գործարանի կառուցումը 3-4 տարի լի տևում և տասնակ միլիոն սուրբիներ և նստում:

Յերեմին ել այսպիսի խոսակցություն ես լսում.—միթե ավելի լավ չե՞ փոխանակ միքանի տարի սպասելու, մինչև նոր գործարաններ կառուցվեն, մինչև նրանք վերագարձնեն իրենց վրա ծախսված գումարը, ավելի լավ չե՞ ասում ենք—այդ զրամով մեքենաներ զնել գլուզատնտեսության և ֆարբիկաների համար, զորոնք և կպատրաստեն սպասման նորութեր—ճոթեղին և այլն:

Վոչ, այդպես վարվել չի կարելի: Յեթե խորհրդակին կառավարությունն ալզպիս վարվեր, մեր լերկիրը նորից ոտարերեկրլա կապիտալիստների ճորտը կդառնար: Հեղափոխությունից առաջ ցարական միուսաստանում ժողովրդական տնտեսությունը կախում ուներ ոտար կապիտալիստներից հենց նրա համար, զոր այդպիսի ֆարբիկաներ ու գործարաններ, վորոնք պատրաստելին արտադրության միջոցներ—մեքենաներ, արդյունարերության և գլուզատնտեսության համար սարքավորումն, միուսաստանում շատ քիչ ելին:

Բանվորներն ու գլուզացիները չեն ուզում նորից կապիտալիստների ու կալվածատերերի ճորտը դառնալու մորտանալուց խուսափելու համար պիտի աշխատել վորքան կարելի է շուտ և շատ ֆարբիկաներ ու գործարաններ կառուցել, վորոնք կարողանալին արտադրության միջոցներ պատրաստել: Պետք և ավելացնել հողի սակից հանվող մետաղների (լերկաթի, պղնձի, վոսկու) և վառելանութի (ածուխի, նավթի, տորֆի) քանակը և մետաղները վերամշակելով, դարձնել մեքենաներ, զազգահներ և այլն:

Ահա միքանի տարի յեւ, վոր ալսպիսի աշխատանք և տարդում Խորհրդավին Միության մեջ կառուցվել են մի շարք նոր ֆարբիկաներ, գործարաններ, ձգված են մի շարք նոր շախտեր, վերասարքավորվել վերակառուցվել են շատ հին ֆարբիկաներ, գործարաններ: Որինակ, Ոմսկում (Սիբիր) վերասարքավորված և «Կարմիր գեղջուկ» գործարանը: Այժմ այս գործարանը տարեկան մոտ 40,000 գութան և պատրաստում, իսկ պատրազմից առաջ նույն գործարանը միայն 13-14 հազար գութան եր պատրաստում:

Ավարտվելու վրա յեւ կերչի (Ղրիմ) հսկայական մետաղործական գործարանը:

Յերկրի ժողովրդական տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի ելեքտրականությունը:

Ելեքտրոկայանից տասնյակ ու հարյուրավոր վերատեր հեռու ելեքտրական ուժ և տրվում: Այդ ուժը շարժման մեջ և դնում մեքենաների, ֆարբիկաների, գործարանների, ածխահանքերի ու զյուղատնտեսական գազգահների: Ֆարբիկաներն ու գործարանները չեն կարող յոլա գնալ առանց ելեքտրականության նման հարմար ու հժան ուժի:

Խորհրդավին Միության մեջ արգեն միքանի խոշոր ելեքտրոկայաններ են կառուցվել: — Վոլխովստրոյի՛ Լենինգրադի շրջանի համար, Զեմո-Ավչալլան կայանն՝ Անդրկովկասի համար:

Ո՞վ չի լսել Դնեպրոստրոյի մասին: Խորհրդավին Միության մեջ նա ամենամեծ ելեքտրոկայանը պիտի լինի: Սա ելեքտրական ուժ պիտի տա Ռուկայինայի ֆարբիկաներին, գործարաններին, շախտերին, գյուղատնտեսությանը:

Կառուցվել են նոր յերկաթուղարքեր և յերկարացված են միքանի հները: ԽՍՀՄ-ում ընդհամենը 17 հազար կիլոմետրից ավելի յերկաթուղարքիծ և շինված:

Ձեռնարկված և Թուրքեստան-Սիբիրյան յերկաթուղարքի կառուցմանը: Այս գծով Սիբիրից հաց պիտի դնա Թուրքեստան, իսկ այնտեղից—բամբակ, վոր այնքան կարենը և մեր տեքստիլ-գործարաններին

Միաժամանակ նոր ֆարբիկաներ են կառուցվում՝ սպառման ապրանքներ պատրաստող, վորոնց պակասը մեր յերկում դարձլալ զգացվում է:

Իվանո-Վոլոգդանսկում, Վլադիմիրում, Մոսկվայում, Տիֆլիսում, Ռուսանովի նահանգում և Խորհրդավին Միության ուրիշ շատ տեղերում նոր տեքստիլ ֆարբիկաներ են կառուցվում: Այդ

ֆարբիկաների մեծ մասը խոշորներից են, — 40 հազարից մինչև 130 հազար իլիկ պիտի ունենա յուրաքանչյուր նոր ֆարբիկան:

Մոսկվայում խոշոր կաշեգործարան և կառուցվում: Միքիրում, Ռուբանովի նահանգում և ուրիշ տեղերում յուղ և պանիր պատրաստող գործարաններ են կառուցվում:

Կառուցվում են նաև լուցիու և շաքարի գործարաններ: Այս ֆարբիկաների ու գործարանների մի մասն արգեն կառուցված են նրանք արգեն գործում են:

Այսպիսի ֆարբիկաներ ու գործարաններ կառուցելու անհրաժեշտությունն ամեն մինը հասկանում է: Ճոթեղենի և այլ առարկաների կարիքը մեծ և խորհրդակին իշխանության նպատակն և ավելացնել այդ ապրանքների քանակը հենց այժմ, մոտակա տարիներում:

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԻԹՅԱՆ ՎՐԱ ՇԱԽՎՈՂ ԴՐԱՄԸ ՎԱՐՏԵՂԻՑ Ե

Նոր ֆարբիկաներ, գործարաններ, ելեքտրոկայաններ, լերկաթուղիներ կառուցելու և հները նորոգելու և վերասարքավորելու համար մեծ գումարներ են հարկավոր նրինակ, միայն Միքիր-թուրքեատանը լերկաթուղագծի կառուցումը նստելու լե 150 միլիոն ռուբլի: Դնեպրոսարուլը՝ 200 միլիոնից ավելի:

Ցերեք խոշոր մետաղագործական գործարանները նստելու լին 80-ական միլիոն՝ յուրաքանչյուրը:

Իվանո-Վոլոնեսկում կառուցվող մանաժագործարանը՝ 130 հազար իլիկով, նստելու լի 12 միլիոն ռուբլի:

Խորհրդակին Միության մեջ տարեց-տարի մեկը մյուսից մեծ ֆարբիկաններ ու գործարաններ են հիմնվում, հետեարաբ՝ հետզհետե մեծամեծ ել գումարներ են ծախսվում:

Դեռ 1925/26 թվին նոր ֆարբիկաններ ու գործարաններ կառուցելու և հները վերասարքավորելու վրա ծախսված ե 780 միլ. ռուբլի: 1926/27թ. արդյունաբերության զարգացման վրա ծախսվել և մեկ միլիարդ (հազար միլիոն) ռուբլի: Հետազայում այդ ծախսերը տարեց-տարի ավելանալու լին:

Վարտեղից վերցնել մեր՝ առաջման աղքատիկ լերկը համար այսքան մեծ գումարները:

Արտասահմանից կամ ոտար կապիտալիստներից Խորհրդա- լին Միությունն ոգնություն սպասել չի կարող: Արտասահմա- նում մեր կարիքի չափով փոխառություն կնքելը համարյա ան-

կարելի լե, վորովհետեւ կապիտալիստները Խորհրդային Միությանը փոխառություն չեն տալիս, իսկ տալու դեպքում ել միայն ստըրկացնող, վաշխառուական տոկոսներով, իսկ Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիներն այլևս ստրկանալ չեն ուղղում։ Մնում ե, վոր մեր ժողովրդական տնտեսությունը զարդացնելու համար հարկավոր անհրաժեշտ գումարը մեր լերկրի ներսում գտնենք։

Նոր կառուցումների համար ամիսից առաջ ծախսվում է արդգունաբերության տված վաստակից։

Մեր պետական սոցիալիստական արդյունաբերությունը քանի գնում, ավելի ու ավելի լավ և աշխատում, ավելի շատ ապրանք և պատրաստում և ավելի ու ավելի մեծ շահ և տալիս։

1924/25թ. պետական արդյունաբերությունը ավել է 305 միլիոն ռուբլի շահ, 1925/6-ին՝ 464 միլիոն, 1926/7-ին՝ գրանից ել ավելի։ Այս շահը ծախսվում է լերկրի ժողովրդական տնտեսության զարգացման, առաջին հերթին՝ ֆարբիկաների ու գործարանների վերասարքավորման վրա։

Վաստակ ե տալիս նաև առևտուրը՝ թե ԽՍՀՄ-ի ներսում, թե արտասահմանում։

Մեր պետությունը յեկամուտ ունի նաև զանազան տեսակի հարկերից, միասնական գյուղատնտեսական հարկից, յեկամտային հարկից—քաղաքում, տուրքերից (փոստային, դատական) և գինու, ծխախոտի և ուրիշ ապրանքների վրա զրած ակցիզից։ Այս յեկամուտներից մի մասը ծախսվում է զպրոցների, հիվանդանոցների պահպանության վրա, աշխատավարձ և արվում գյուղի ու քաղաքի խորհրդային ծառայողներին։ Իսկ մյուս մասը նույն պես ծախսվում է արդյունաբերությունը, յերկաթուղիները և գյուղատնտեսությունը զարգացնելու վրա։

Ժողովրդական տնտեսության ինդուստրիալիզացիային մեծ ոգնություն են ցուց տալիս նաև պետական փոխառությունները։

Ժենց այս խնայողությունն ել գյուղացիք (և բանվորները) կարող են տալ խորհրդային պետությանը՝ վորպես փոխառություն։ Այս գումարները խորհրդային պետությունը կարող է ուղանառության մեջ գնել, օտապ կերպով նոր ֆարբիկաներ ու գործարաններ շինել, գյուղատնտեսությունը վերակառուցել։

Բացի զրանից՝ բանվորի և զլուղացու համար փոխառությունները խթաններ են խնալողություն անելու Մասմաս վճարելու պայմանով ոբլիգացիա գնելը դժվար չե. մինչդեռ դա խնալողություն և շահում և տալիս ժողովրդական տնտեսությունը զարգացնելու համար բանվորից և զլուղացուց փոխառություն ստանալու նպատակով խորհրդային պետությունը հատուկ արժեքավոր թղթեր և թողնում (նրանք որիկացիա չեն կոչվում):

Աշխատավոր գասի խնալողությունը ժողովրդական տնտեսության զարգացման զրծին ծառայեցնելու համար են նաև խնալողական գանձարկղները: Այս պատճառով յուրաքանչյուր կոմիտեի աշխատական պարտավոր և ազիտացիա անել՝ պետական փոխառությանը զրվելու և խնալածը խնալողական գանձարկղ մուծելու, ներդրելու:

#### ՀԱՐԹԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. ՄԵԽԵՆԱՆԵՐԻ արտադրության զարգացումը զլուղացուն ձեռնությունը յե, թե՞ վոյ:

2. Արգյունաբերության կառուցման համար մեր յերկիրը գործեղից և փող վեցնում:

3. Խորեգային իշխանությունն ինչո՞ւ յե փոխառությունների զիմում:

#### ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱՅԻՌՆԱԼԻՉԱՑԻԱՆ

Մեր արդյունաբերությունը բարվոքելու համար զուր չեն հարյուրավոր միլիոններ ծախսվում: Արդեն ասացինք, վոր արդյունաբերությունը տարեց տարի ավելի ու ավելի ապրանք և պատրաստում:

Բայց շատ ֆարբիկային ապրանք ունենալը միայն բավական չե: Մեր ֆարբիկաների և գործարանների գլխավոր նպատակն ե—պատրաստել լավ վորակի և, վոր ամենից կարևորն ե, եժան ապրանք:

Խորհրդական իշխանությունն ամեն կերպ աշխատում ե իշխաններ գործարանային ապրանքների գները, վորպեսզի բանվորն ու զլուղացին հեշտ կարողանան գնել: Բայց վորպեսզի կարելի լինի ապրանքն իսկապես եժան ծախել, պիտք ե, վոր այդ ապրանքն իրեն, գործարանին եժան նախ: Ամեն մարդ գիտե, վոր ֆարբիկան իր պատրաստած ապրանքը չի կարող ավելի ե-

ժան վաճառել, քան իրեն և նստել, կամ ինչպես ասում են, ին-  
բնարժեքից և ժան ծախել

Հետևապես ապրանքն է ժանացնելու համար անհրաժեշտ ե  
փարբիկաներում և գործարաններում իջեցնել, և ժանացնել ապ-  
րանքների ինքնարժեքը:

Մեր արդյունաբերության մեջ ինչու յե գեռ բարձր Փաբ-  
րիկալին ապրանքների ինքնարժեքը Յեվ ինչ անել, զոր ապ-  
րանքների այդ ինքնարժեքն իջնի, պակասի:

Մեր գործարանային ապրանքների ինքնարժեքի թանգու-  
թյան առաջին պատճառը մեր արդյունաբերության վատ, յետա-  
մաց տեխնիկան եւ Մեր ֆարբիկաներում և գործարաններում  
դեռ բոլոր աշխատանքն ել մեքենայով չի կատարվում: Իսկ ձեռ-  
քի աշխատանքն անհամեմատ ավելի ժամանակ և պահանջում:

Հաշվել են, զոր միենուն ժամանակամիջոցում մեքենան  
ձեռքից ավելի յե աշխատում—կոշիկ կարելիս՝ 9 անգամ, դա-  
նակ շինելիս՝ 29 անգամ, գութան շինելիս՝ 32 անգամ, մեխ շի-  
նելիս՝ 129 անգամ:

Ի հարկե՛ ձեռքի աշխատանքը գործարանի վրա անհամե-  
մատ ավելի թանգ և նստում, քան մեքենայինը: Վորովհետև միենուն  
ժամանակի ընթացքում բանվորները ձեռքով ավելի քիչ ապ-  
րանք են պատրաստում, քան մեքենայով: Ապրանքն իլ ձեռքի  
աշխատանքի ժամանակ՝ և ավելի քիչ և ավելի թանգ:

Սա ապրանքների թանգության մի պատճառը: Մրանից  
պարզ ե, թե ինչու յե մեր արդյունաբերությունն աշխատում  
մեքենայացնել արտադրությունը, այսինքն ֆարբիկաների և գոր-  
ծարանների ամբողջ աշխատանքը կատարել վոչ թե ձեռքով, այլ  
մեքենայով:

Բայց մեքենա յել կա, մեքենա յել: Արդեն ասացինք, զոր  
մեր ֆարբիկաներում և գործարաններում սարքավորման՝ մեքե-  
նաների, դազգաների, գործիքների մեծ մասը մաշվել, հնացել  
ե, վորովհետև տեխնիկան անընդհատ զարգանում և ավելի ու ա-  
վելի կատարելագործված մեքենաներ ե տալիս: Մեր մեքենա-  
ներն ու դազգաներն ալևս չեն կարողանում ամրող թափով  
աշխատել. նրանց ոգնությամբ քիչ ապրանք և պատրաստվում:  
Բացի դրանից՝ հնացած սարքը համախ և փչանում, կոտրվում:  
Սա յել և թանգացնում ինքնարժեքը, զորովհետև վնասված մե-  
քենան նորոգելու համար ժամանակ ու փող և հարկավոր. իսկ  
աշխատանքը կանգ և առնում: Ցերեմն մի մեքենայի կոտրուս-

տի պատճառով մի ամբողջ բաժին, յերբեմն ել հենց ֆարբիկան և կանգ առնում:

Մեր արդյունարերության աշխատանքները բարելավելու համար ձեռք առած միջոցները - ձեռքի աշխատանքը մեքենայով փոխարինելը, այնպիսի նոր, լավագույն մեքենաներ գնելը, վորոնցով կարելի լի ավելի եժան ապրանք պատրաստել, այս միջոցները միասին առած կոչվում են արտադրության ռացիոնալիզացիա:

Բայց արտասահմանում նոր մեքենաներ գնելը կամ կառուցելը մեծ փող արժեն իսկ բարելավել կամ, ինչպես առում են, սացիոնալիզացիայի լենթարկելմեր ֆարբիկաների ու գործարանների աշխատանքը, հաճախ կարելի լի նաև հին մեքենաներով, միայն թե փոքր ծախսոր կատարելուց հետո: Մեր արդյունարերությունը գեռ ամեն ինչ չի արել, վորպիսպի կարողանա հին մեքենաներով ել կարելուն չափ եժան ապրանք ստանալ:

Այս ուղղությամբ զիմափորը և հիմնականը, վոր կարելի լիր և պետք եր կատարել, զա մեքենաներն ամրողավին ծանրաբեռնելը և նրանց վրա աշխատող բանվորների աշխատանքը կանոնավոր կարպով ողտագործելն և Խոշոր ֆարբիկա, գործարան կառավարելը զժվար և Պետք և նախորոք ճիշտ հաշվել, թե ով ի՞նչ աշխատանք պիտի տանի, ժամանակին նորոգել գործիքները, ժամանակին վառելիք ու հում նյութեր հասցնել ֆարբիկա: Յուրաքանչյուր բանվոր ընդհանուր աշխատանքի միայն մի մասն և կատարում. պետք և հետեւ, վոր աշխատանքն ընթանա համաշափ, հարթ, վոր մի բանվորը լիւտ չզցի մյուսին, վոր մի վորեւ աշխատանքի վրա ավելորդ բանվոր իրոք չլինի, վոր վորակւալ բանվորի աշխատանքը չվատնվի այնպիսի աշխատանքի վրա, վորը վոչ վորակւալ բանվորն ել կարող և կատարել: Այլապես կստացվեն անտեղի ընդհատումներ, բանվորի ժամանակի իզուր վատնումն: Արտադրության ռացիոնալիզացիան միաժամանակ նաև աշխատանքների ճիշտ կարգ ու կանոն սահմանելն և գործարանում:

Իսկ այդպիսի մշակված աշխատանք չի կարելի ասել, թե ամեն տեղ կա:

Որինակ, սրանից տարի ու կես առաջ Դոնի ավագանի ածխանանքերից մեկի մի հանքահան փաստորին իր աշխատանքային ժամանակի միայն  $\frac{1}{4}$  եր աշխատել: Մնացած  $\frac{3}{4}$  ժամանակը կամ չեր ողտագործվել, կամ լիթե ողտագործվել ել եր, համենայն

դեպս վոչ ըստ մասնագիտության։ Մի ածխահանքում՝ զանազան անկանոնությունների պատճառով (զատարկ վագոնները ժամանակին չելին մատուցվում, զործիքները կոտրած ելին լինում և այլն) բանվորները չելին աշխատում ամբողջ  $3\frac{1}{2}$  ժամ։

Բայց ահա մի այլ որինակ ևս, վորից կերեա, թե վորքան բան կարելի է անել ճիշտ հաշված ու ոացիոնալ կարգ ու կանոն ունեցող գործարանում։

Ստալինյան մետաղագործական գործարանի գլանիչ բաժնի բանվորները թիթեղը գլանելիս 8 ժամիա բանվորական որից 2 ժ. 46 րոպե ընդհատում ունելին, այսինքն իզուր կորցնում ելին բանվորական որվա մեկ յերրորդից ավելին, Յերկաթը գլանող մեքենան որական 1300 փ. յերկաթ եր պատրաստում։

Այն որից, յերբ բանվորներն ու դեկավարները գործարանում աշխատանքի ոացիոնալիզացիա կատարեցին, ընդհատումները  $2\frac{1}{2}$ , անգամ պակասեցին, և նույն գլանող մամուլն սկսեց որական յերկուս ու կես հազար ֆթից ավելի յերկաթ պատրաստել։ Հասկանալի է, վոր արժեքն ել զդալի կերպով իջապ։


Մեր արդյունաբերությունը լավացնելու այլ հնարավորություններ ևս կան։ Յերբեմն ել բավական ե լինում միայն մեքենայի տեղը փոխել, դազգահներն աշխատանքի համար ավելի հարմար դասավորել, և ահա՝ աշխատանքը դառնում և ավելի արագ և եժան։

Գետք և ապրանքների արտադրումն այնպես կազմակերպել, ձեռնարկություններում (ֆարբիկաներում, գործարաններում, շախտերում) այնպիսի կարգ ու կանոն սահմանել, վոր բանվորը վորքան կարելի է քիչ ժամանակ վատնի աշխատանք ստանալու, գործիքներ վորոնելու վրա։

Շատ ձեռնարկություններում կարելի է և պետք և մեքենաները (շարժիչները) տաքացնելու ծախսերը պակսեցնել։ Յերբեմն միայն վառարան մաքրելն ել բավական ե լինում, վորպեսզի վառելիքի ծախսերը 15—20 տոկոսով կը ճատկվեն։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Մեր ի՞նչպես ենք եժութացնում ապրանքները։
2. Կ՞ա և նույնակում արտադրույան ոացիոնալիզացիա ի՞նչպես պիտի այն անցկացնել։



ԹԱՑԻՌՆԱԼԻԶԱՑԻԱՆ Ի՞ՆՉ Ե ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ՈՒ  
ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Ի՞նչ ե տալիս, արդյոք, բանվորներին, զգուղացիներին և  
ամբողջ խորհրդավին պետությանը արտադրության ռացիոնալի-  
զացիան:

Ռացիոնալիզացիան իջեցնում ե ապրանքների ինքնարժեքը:  
Այս իջեցումից մեր լերկերը կրկնակի ողուտ ունի. Առաջին—  
կարելի յե սպասման մթերքների գներն իջեցնել և արտադրույ-  
թեթեացնել աշխատավորների գրությունը՝ ֆարբիկացին ապրան-  
քները նրանց ավելի ու ավելի հժանացրած գներով վաճառե-  
լով: Ինքնարժեքն իջեցնելու լերկորդ ողուտն ել այն ե, վոր  
արդյունաբերությունն ավելի շահ ե տալիս, իսկ այս շահը ծախ-  
սվում ե ժողովրդական տնտեսության հետագա զարգացման վրա:

Արտադրության ռացիոնալիզացիան բարձրացնում է ԽՍՀՄ-ի  
ֆարբիկացին ապրանքների քանակը: Սրանից շահնվում ե և ան-  
հատ աշխատավորը և մեր ամբողջ լերկինը, վարովնետե արդպի-  
սով նա ավելի յե ազատվում և ապրանքավին սովոր, և ոտար  
լերկիներից կախալ վիճակ ունինարու գրությունից:

Այլև լավանում ե ապրանքների վորակը: Աշխատանքը կա-  
նոնավոր տանելու գեղքում ապրանքն ավելի սակավ ե պակա-  
սում, անպետք ճանաչվում: Յեզ վերջապես՝ արտադրության ռա-  
ցիոնալիզացիայի գեղքում միջոցների ահազին խնարողություն ե  
կատարվում: Փոխանակ նոր, թանգարժեք մեքենա դնելու, կա-  
րելի լե կարգի բերել ունեցած հները: Այսպիսով խնարումն և  
ստացվում, վոր այնքան անհրաժեշտ ե մեր ժողովրդական տըն-  
տեսության համար, վորովհետեւ ԽՍՀՄ դեռ ևս աղքատ լերկիր ե,  
և ամեն մի խնարդած ոուրլին մեղ հարկավոր ե, վոր ավելի ա-  
րագ բարձրացնենք ժողովրդական տնտեսությունը, կարելուն  
չափ շուտ ազատվենք այն մուրացկանությունից, վոր ցարական  
ոեժիմը մեղ ժառանգություն ե թողել:

Ահա այն գլխավոր ողուտները, վորոնք բերում ե իր հետ  
մեր արդյունաբերության արտադրության ռացիոնալիզացիան:

Արդյունաբերության ռացիոնալիզացիա լե կատարվում վոչ  
միայն մեզնում, Խորհրդավին Միության մեջ, այլև կապիտալիս-  
տական լերկիներում: Բայց մեր և կապիտալիստների ռացիոնա-  
լիզացիայի նպատակներուն արտադրության ռացիոնալիզացիա լին անցկաց-  
նում միայն ավելի շահ ստանալու համար, վորպեսզի իրենց լի-

կամուտները մեծացնեն։ Կապիտալիստական ֆարբիկաներում արտադրությունը վորքան ավելի լեռ բարվոքվում, ռացիոնալիզացիալիզացիալի լեռներին ավելի շահ են ստանում և բանվորներին ել ավելի լեռն շահագործում։ Այ, որինակ՝ Գերմանիայի շատ ֆարբիկաներում մրցանակ կն նշանակել՝ շատ ապրանք պատրաստելու համար։ Բանվորները կաշվեց գուրս ելին զալիս շատ ապրանք պատրաստելու, վորպեսզի մրցանակ ստանան և գոնե ազդպիտով մի փոքր ավելացնեն որավարձը։ Աշխատում ելին ավելորդ ժամեր, մինչև քրտնաթոր լինելու աստիճան։ Իսկ այնուհետեւ ստիպում ելին բանվորներին՝ նախկին աշխատավարձով նույնքան ապրանք պատրաստել, վորքան պատրաստում ելին՝ մրցանակ ստանալու համար։ Կապիտալիստներն արձակում ելին բանվորների մի մասին, իսկ մնացածներին հարկադրում ամրող ամրող աշխատանքը։ Մի արհեստանոցում 160 բանվորից 60-ին արձակեցին, իսկ մնացած 100 բանվորին ստիպեցին պատրաստել այնքան ապրանք (նույնիսկ ավելի), վորքան առաջ 160 հոգին եր պատրաստում։

Այս պատճառով արտադրության ռացիոնալիզացիան կապիտալիստական լեռկրներում մեծ գործազրկություն և առաջ բերում, Բանվորների աշխատավարձը նվազում եւ Յեթե բանվորները չեն համաձայնում պակսեցրած որավարձով աշխատելու, կապիտալիստները նրանց արձակում, նորերն են վարձում։

Այլ կերպ ասած, արդյունարերության ռացիոնալիզացիան կապիտալիստական լեռկրներում միայն կապիտալիստներին և հարստացնում։ Կապիտալիստական ռացիոնալիզացիան բանվորների համար միայն գործազրկություն, սով և աշխատավարձի նվազում և առաջ բերում։

Այլ և արտադրության ռացիոնալիզացիան ԽՍՀՄ-ում։ Մեզնում արտադրության ռացիոնալիզացիան կատարվում և վոչ թե շահ ստանալու նպատակով, այլ միայն բանվորների ու գյուղացիների նկութեական դրությունը բարելավելու, աշխատելով արդ ձևով մեծ քանակության ապրանք ունենալու՝ ավելի եժան դնով և ավելի բարձր վորակի։ Կապիտալիստական լեռկրներում բանվորները պարզաբում են կապիտալիստական ռացիոնալիզացիալի դեմ։ ԽՍՀՄ-ում բանվորների կենսական շահն եւ, վոր սոցգիալիստական ռացիոնալիզացիան ամենալավ կերպով կիրառվի։ Այս պատճառով խորհրդակին լեռկրում մասսան ակտիվ կերպով մասնակցում և արտադրության ռացիոնալիզացիակին, հաճախ

Փարքիկաներում ու զործարաններում բանվորներն իրենք են ռացիոնալիզացիայի հախաձեռնող հանդիսանում:

### ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արգլունարերության ռացիոնալիզացիայում առանձնապես գնահատելի լին նոր հնարութները, զորոնք բարվոքում ու հժանացնում են աշխատանքները, Յուրաքանչյուր մեքենա կարելի լի բարելավել Մեքենաների, դազգահների և աշխատակիու լուրաքանչյուր բարելավում եժանացնում և ապրանքի ինքնարժեքը: Այս շատ լավ են հասկանում կապիտալիստները: Բոլոր կապիտալիստական լիբերներում ֆարքիկաներն ու զործարաններն ամեն կերպ խրախուսում են նոր մեքենաներ, դազգահներ, սարքեր հնարողներին, զորոնք ապրանքների արտադրանքն եժանացնում են: Կապիտալիստներն իրենց ֆարքիկաներին կից նույն իսկ հատուկ հիմնարկներ (լարորատորիաներ, ինստիտուտներ) են ստեղծում՝ արտադրությունը բարելավելու նպատակով: Անհամեմատ պակաս ոգուտ այդ գյուտեր անողներն են ստանում: Ֆարքիկաներում ու զործարաններում տեղի ունեցած արտադրության բարելավութները և կատարելագործութներն ամրող բանվորության համար միայն շահագործման ուժեղացումն և առաջ բերում: Կապիտալիստներն այդ նոր հնարութները գործի լին գնում վոչ թե բանվորների աշխատանքը թեթևացնելու, այլ միայն այն ժամանակ, լիբր այդ նոր հնարած բանը կապիտալիստների համար ավելի շահ կրերի, լիբր կապիտալիստը հնարավորություն կունենան կընածել բանվորների թիվը կամ ստիպել, զոր նրանք լարված աշխատեն:

Նույնը չե Խորհրդային Միության մեջ: Գյուտերը թեթեացնում են բանվորների աշխատանքը, շատացնում են ապրանքը, լավացնում են նրա վորակը. — մի խոսքով, մեծ ոգուտ են բերում ամրող բանվոր դասակարգին: Ահա միքանի նոր գյուտերի որինակներ, զորոնք ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսությանը մեծ ոգուտ են բերելու: Պերմի լիբրելավութիւնը մասունք է հնարել՝ առանցքականները (ՊՕՁԱԽՈՆԻԿ) սեղմելու համար: Առաջ 6 հոգի մեկ որում պատրաստում եյին լիբրու առանցքակալ, իսկ այժմ ընկ. Միկրուկովի հնարած մամուլով մի բանվորն որական պատրաստում և ութ առանցքակալ Մըր ոգուտը բոլորին հասկանալի լի:

Ողեսայի լիբրելավուգալին արհեստանոցների վարպետի ոգ-

նական ընկ. Կոտիկովը յերկաթին պողպատի հատկություն տալու միջոց և հնարել Ընկ. Կոտիկովի ձեռվ պատրաստած խարտոցները, յերկաթ կտրելու դանակները և ուրիշ առարկաները վորակով վոչ միայն վատ չեն, ալիև շատ լավ են պողպատից շինածներից:

Առաջձագործ Սավինովը նոր հնձելու մեքենա յէ հնարել նախկին բոլոր հնձող մեքենաներն իրենց հնձածը կապում ելին մի առանձին տեսակի թոկով (շպագատ), վոր մանիլլան թոկ և կոչվում: Մանիլլան թոկը միայն Ամերիկայում և պատրաստվում և բավական թանգ արժե: Սավինովի հնարած մեքենան հնձածը կարող և կապել վոչ թե թոկով, այլ սովորական ծղոտի կեմով<sup>1</sup>: Պէտք և ասած՝ Սավինովի մեքենան անհամեմատ ավելի պարզ ու աշխատանքը խնայող եւ:

Արտադրությունը բարվոքող գյուտերի քանակն ամսե-ամիս, տարեցտարի անվերջ աճում եւ:

Մեր յերկրում Խորհրդացին իշխանության որով բանվոր գասն արգյունաբերության տերեն եւ: Բարեկավելով պետական սոցիալստական արդյունաբերությունը, բանվորն ինքն իրեն և ոգնում: Արդյունաբերությունը վորքան ավելի լավ աշխատի, ալնքան ավելի կրածրանա բանվորի որավարձը:

Բանվոր գասակարգն արտադրության ուցիոնալիզացիա անցկացնելով, թեթևացնում և չքավոր և միջակ գյուղացիության դրությունը, եժանացնում և գործարանալին ապրանքները, ավելի շատ գյուղատնտեսական գործիքներ և պատրաստում, վորոնց շնորհիվ գյուղատնտեսությունն աճում ու ամրանում եւ:

Իսկ բանվորներն ինչպիս են մասնակցում արտադրության բարվոքման գործին՝ ֆարբիկաներում, գործարաններում և շախտերում:

### ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտադրության ուցիոնալիզացիային բանվորների մասնակցելու գլխավոր ձեռ այսպիս կոչված բանվորների արտագրողական խորհրդակցություններն են: Յեթե բանվորը վորնե թերություն և նկատում իր բաժին արհեստանոցում, հայտնում և արտադրողական հանձնաժողովին, վոր բազկացած և տվյալ ֆարբիկալի, գործարանի բանվորներից: Արտադրողական խորհրդակցությունների ժամանակ, վորին մասնակցում են բոլոր հետաքրքըր-

<sup>1</sup> Կեմ—ծղոտի փունչ, վորով գյուղացիք կապում են խուրձը. Ծ. Թ.

գող բանվորները, ինչպես նաև ինժեներները, վարպետները, արհեստանոցների վարիչները, գործարանի վերատեսուչը, քննության և առնվում բանվորների լուրաքանչյուր առաջարկը: Նշանակվում են թերությունները, առաջարկներ են լինում, թե այս կամ այն թերությունն ինչպես և զորանդ կարելի չե վերացնել: Այդ առաջարկները մեծ խնամքով քննության են առնվում և ապա ուղարկվում են արհեստանոցի պետին կամ գործարանի վերատեսչին, վորի կարգադրությամբ ել գործադրվում են:

Բանվորները միայն թերությունները չե, վոր նկատում են նրանք մի շարք ոգտակար ցուցմունքներ ել են տալիս՝ արտադրությունը բարելավելու Յուրաքանչյուր ֆաբրիկալում, լուրաքանչյուր գործարանում բանվորների նախաձեռնությամբ շատ բան և արվում՝ արտադրությունը բարձրացնելու նպատակով:

Միայն արտադրողական խորհրդակցությունների միջոցով չե, վոր բանվորները մասնակցում են ֆաբրիկաններում, գործարաններում արտադրությունը բարձրացնելուն, ամբողջ ժողովը դական տնտեսությունը բարվություն Անեն տեղ, ամեն հնարավոր միջոցներով բանվորներն աշխատում են լավացնել, ուստի նաև աշխատացիալի լենթարկել մեր արդյունաբերությունը, հաջողեցնել գործարանային ապրանքների ինքնարժեքն իջեցնելու: Իսկ արժեքն իջեցնելով, պարզ ե, վոր կիջնեն նաև ապրանքների գները:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՐ

1. Բանվորներն ի՞նչպես են մասնակցում ռացիոնալիզացիային:

2. Ի՞նչ առընթարյուն կա ԽՍՀՄ յեզ կապիտալիստական յերեների ռացիոնալիզացիայի մեջ:

3. Ի՞նչ օակ ունի զյուղացին արտագրության ռացիոնալիզացիայից:

#### ՅՈՒԺԱՄՑԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

Յուրաքանչյուր գյուղացի գիտե, վոր ինքն որվա մեջ վորքան քիչ ժամ աշխատե, այնքան ավելի աշխատ կլինի, աշխատանքն ավելի լավ առաջ կդնա: Յեթե նույնիսկ իր աշխատանքին սովոր մարդն որական անընդհատ 8—10 ժամ աշխատե, նրա գործը վերջում այնքան ել լավ չի դուրս գալ, պակաս կլինի, հենց վորակով ել կվատանա:

Բացի դրանից՝ որվա մեջ 10—12 ժամ աշխատանքը մար-

դու ուժասպառ և անում, նրան վազաժամ հաշմանդացնում, աշխատանքի անպետք եւ գարձնում: Յարական Ռուսաստանում կապիտալիստները բանվորներին աշխատեցնում ելին այնքան, վորքան իրենք ելին կամենում: Բանվորի աշխատանքը պաշտպանող վոչ մի որենք չկար, և բանվորը հարկադրված եր լենթարկվել կապիտալիստին, վորպեսզի անգործ չմնա, սովոր չմեռնի:

Կապիտալիստական լերկրներում բանվորները մինչև որս ել որական 9—10 ժամ, լերկրներ ել կան, ուր ավելի յեն աշխատում: Կապիտալիստները բանվորների առողջության մասին չեն մտածում: Յեթի բանվորն ուժից վեր աշխատանքից հիվանդանա, կապիտալիստը նորը կվարձի:

Մյուս բոլոր լերկրների բանվորներն արդեն տասնյակ տարիներ պայքարում են 8-ժամյա բանվորական որվա համար: Սակայն արգախիսի որ լրիվ կերպով գործադրվում և միայն Խորհրդակին Միության մեջ:

Որվա մեջ 8 ժամ—սա այն ժամանակն ե (կամ, ինչպես ասում են, մաքսիմովմը), լերը բանվորը պիտի աշխատի, վոր կարողանա նաև հանգստանալ, զիրք կարգալ, դասընթացների հաճախել, իր վորակը բարձրացնել, լավ աշխատել: Այն լերկրում, ուր ֆարբիկաների ու գործարանների տերն ինքը—բանվորությունն ե հանդիսանում, այն լերկրում, ուր իշխանության գլուխ և անցած բանվոր դասակարգը, կարելի յեւ և պետք ե ձգտել, վոր բանվորական որվա կարճումը շարունակվի: Կոմունիստական կուսակցության ծրագրում այսպիսի կետ կա: «Համեկ իրեն նպատակ պիտի դնի՝ աշխատանքի արտադրողականության հավելման հետ միասին առավելագույն 6-ժամյա բանվորական որ սահմանել»:

Բանվորների աշխատանքի արտադրողականությունը տարեցտարի աճում, ավելանում ե: Կուսակցության և խորհրդային իշխանության վճիռը՝ անցնելու 7-ժամյա բանվորական որվա—կուսակցության ծրագիրն ի կատար ածելու միջոցներից մեկն ե:

Բանվոր դասակարգի թշնամիները—կապիտալիստներն ու կուլակները, աշխատում են համոզել գյուղացիներին, թե ֆաբրիկաներում բանվորական որվա կրճատումը մնաս և գյուղացիներին: Իրը թե բանվորները քիչ են աշխատում, դրա համար ել ապրանքը պակաս ե և թանգ ե նստում: Բանվորի գործն, ասում են դրանք, հեշտ ե: այդ բավական չե, ժամանակն ել կրճատում են: Իսկ գյուղացին աշխատում ե որական 10—12 ժամ, գործն ել ծանր ե: Ճիշտ են այս կուլակալին ասեկուսեները: Վոչ, ամե-

Նեին վոչ կուլակները դիտմամբ զրգուուի են զյուղացիներին բանվորների գեմ, վորպեսզի բանվորի ու զյուղացու միությունը խախտեն։

Յուրաքանչյուր զյուղացի, մանավանդ կոմիերիտական լավ պիտի հասկանա ալա։

Նախ՝ ճիշտ վոր զյուղացին յերեմն 8 ժամից ել ավելի յե աշխատում, Բայց այդպես և վոչ թե ամբողջ տարին, այլ միայն դաշտային աշխատանքների ժամանակի Խոտհար, հունձ, կարոց։ Դյուղացին ձմեռը շատ քիչ և աշխատում, այնպես վոր միջին հաշվով նաև բանվորից շատ չի աշխատում։ Յերկրորդ՝ բանվորի դործարանային աշխատանքը զյուղացու աշխատանքից ծանր և է լարված։ Այդ աշխատանքը վասնգավոր ել եւ Այսպիս չգարձար, և մեքենան կարող և քեզ խեղել, նույնիսկ սպանել։

Բացի գրանից՝ բանվորն անհամեմատ վատ պայմաններում և աշխատում, քան զյուղացին։ Դաշտառմ թարմ ոդ և իսկ գործարանում, վորքան ել մաքրես, այն ոդը չեղաշտային, անտառային չեւ։ Սա ավելի յե ծանրացնում զյուղացու աշխատանքը և ավելի մհծ հանգստի իրավունք և տալիս։ Մենք տեսնում ենք, վոր կուլակալին ասեկոսները բանվորի հեշտ կրանքի մասին՝ ձիշտ չեն։ Ճիշտ չեն նաև այն զրուցները, թե զործարաններում 7-ժամյա բանվորական որի անցնելուց ապրանքը կքչանա, ուրիշն և կթանգի։

Մենք արդեն տեսանք, վոր գործարանային ապրանքների ինքնարժեքի թանգության պատճառը մեր արդյունաբերության ցածրուակ տեխնիկան, հոգնած, մաշված մեքենաները և աշխատանքի վատ կազմակերպված լինելն եւ Բոլոր ֆաբրիկաներում ու գործարաններում 7-ժամյա բանվորական որը մեկեն չպիտի անցկացնել, այլ աստիճանաբար։ Ազգը այն ֆաբրիկաներում, ուր մեքենաներն ու սարքավորումը նոր են, նոր մեքենաներ ու սարքավորություն ունեցող գործարանի արտադրությունը մեծ լիինի։ Այս ու կա, վոր 7-ժամյա բանվորական որ անցկացնելով, գործարաններից շատերում կարելի յե վոչ թե մի հերթի, այլ լերկու, նույնիսկ լերեք հերթի աշխատել։ Սա, իհարկե, վոչ թե կպակսեցնի, այլ կավելցնի ապրանքի քանակը։

Յեթե բանվորն աշխատել և 8 ժամ և պատրաստել եւ, ասենք, 80 մետր ճոթ, սա հո չի նշանակում, թե 7 ժամ աշխատելով, կպատրաստի 70 մետր ճոթ։ Ամենեին վոչ։ Մենք արդեն դիտենք, վոր պակաս քանակի ժամեր աշխատելով, բանվորը կա-

բող և ավելի ուշադիր, զգուշ և լարված աշխատել: Սա արգեն ապացուցված է: ԶԵ վոր հեղափոխությունից առաջ բանվորներն աշխատում ելին 10—12 ժամ, իսկ այժմ—8 ժամ: Յեզ ինչ, մըթե արտադրողականությունն ընկել և մեկ ու կես անգամ: Ինարկե վոչ:

Անցնելով 7-ժամյա բանվորական որի, բանվորի աշխատանքն ավելի լարված կղառնաւ: Աշխատանքն այսպիս գնելուց, մեքենանաները, սարքավորումն ու գործիքները լավացնելուց, նորոգելուց հետո մեր ֆարբիկաներն ու գործարանները վոչ թե պակաս, այլ ավելի ապրանք կարտադրեն, քան արտադրել են մինչև ալժմ:

#### ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ 7-ԺԱՄՅՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

Գործազուրկների թիվը մեզնում, Խորհրդավին Միության մեջ զետ շատ է: 1927 թվին ամբողջ Միության մեջ գործազուրկների թիվը մոտավորապես  $1\frac{1}{2}$  միլիոն եր ձիշտ է, այս գործազուրկների միայն  $\frac{1}{6}$  մասն եր վարժված, զորակավորված բանվորներից: Մնացածները կամ ծառայողներ ելին, կամ լերեք վարձու աշխատանք չկատարած (նրանց թիվը 400,000 եր) կամ սեղոնալիններ (150,000), զորոնք ամբողջ տարին աշխատել չեն կարող (պատճեփներ, քարտաշներ, այլ կառուցողական բանվորներ, այլև շաքարի գործարաններում աշխատող ու տորֆերը մշակող սեղոնալիններ):

Մեզնում գործազուրկները շատ են վոչ նրա համար, վոր ֆարբիկաներն ու գործարանները կրամառում են աշխատանքն ու բանվորներին փողոց նետում: Ընդհակառակը՝ մեր արդյունաբերությունն աճում է, և պետական ֆարբիկաներում ու գործարաններում բանվորների քանակը հետքնեա ավելանում է: Այսպես, 1923/24 թվին խոշոր արդյունաբերության բանվորների թիվը եր  $1\frac{1}{2}$  միլիոն, իսկ 19:6 27 թվին արդեն  $2\frac{1}{2}$  միլիոն եր: Մեր լերկը գործազուրկների գլխավոր մասսան զյուղից բաղակ աթիատանի յեկող զյուղացիներն են: Ինչպես զիտենք, ԽՍՀՄ-ում գյուղացիությունը գեռ ցած մակարդակի վրա լի, ուստի շատ գյուղացիներ աշխատանք են փնտում քաղաքների գործարաններում: Իսկ զյուղերից ըոլոր յեկողներին մեր ֆարբիկաներն ու գործարանները մեկեն աշխատանքի ընդունել չեն կարող:

Խորհրդավին իշխանությունը գործազուրկներին ամեն աջակցություն ցույց է տալիս: Միայն 1926/27 թվին պետական որդանները 80 միլիոնից ավելի յեն ծախսել՝ գործազուրկներին ոգնելու համար: Բացի սրանից՝ արհեստակցական միություններն

իրենց գործազուրկ անդամներին 10 միլիոն ոռորդուց ավելի լին ըստանել:

Բայց, իհարկե, ամենից լավ ոպնությունը գործազուրկին գործ տախ և Գործազուրկներից արտելներ են կազմում (կոչկառ-կարների, ղերձակների, ծխախոտ վաճառողների և այլն): Միայն 1926/27 թվին այդպիսի արտելների մեջ են մտել 120 հազարից ավելի գործազուրկներ:

7.-ժամկա բանվորական որ մացնելն զգալի կերպով կկրծա-սի գործազուրկների թիվը: 7.-ժամկա բանվորական որին անցնե-լով, շատ ֆարբիկաներ ու գործարաններ կանցնեն լերեք հերթի, իսկ լերրորդ հերթն անցկացնելու համար շատ նոր բանվորների սպահանջ կզաքացվի, վոր կվերցնեն գործազուրկներից: Այդ ճանա-պարհով կկրծատվի գործազուրկների թիվը ամրապղ Խորհրդագին Միության մեջ:

Դերջապես 7.-ժամկա բանվորական որն այն հետևանքը եւ ունի, վոր բանվորը հասարավորություն կստանա ավելի ուշադրու-թյուն նվիրել հասարակական աշխատանքին, ավելի զբաղվել իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործով: Իսկ սա-րարձրացնում ե բանվորի աշխատանքի արտադրողականությունը, վորովհետեւ կուլտուրական բանվորի աշխատանքն ավելի արդյու-նավետ և: Իսկ աշխատանքի արտադրողականության բարձրացու-մը կողնի ապրանքների ինքնարժեքի իջնելուն, ուրեմն և գների եժանանալուն: Վերջապես կուլտուրական և հասարակական աշ-խատանքին ավելի ժամանակ նվիրող բանվորն ավելի լավ կա-րող ե պալքարել բլուրոկրատիզմի դեմ: Իսկ բլուրոկրատիզմի դեմ հաջող պալքարը կողնի մեզ՝ ավելի արագ դիմելու դեպի սոցիա-լիզմ:

#### ՀԱՐԹԵՐ ԶՐՈՒՅՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. ԽԵՂՈ՞ւ խորհրդային իշխանությունն ուզում է 7.-ժամկա բանվորական որ կիրառել արցյունաբերության մեջ:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿՈՄՍՈՄՈԼԻ  
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱՆԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ  
ԽՈՉՆԴՈՏՆ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Սոցիալիզմ կառուցելու գործը պահանջում է մեր արդյունաբերության ու մեր գյուղատնտեսության արմատական վերակառուցումն՝ նոր տեխնիկայի հիմունքներով։ Արորով, գութանով և ուժասպառ լեզած լարով ձիով սոցիալիստական լերկրագործություն չես կառուցիլ, ճիշտ այնպես, ինչպես արյունաբերության մեջ տիրող լեռտանիաց տեխնիկայով մեր լերկիրն ինդուստրիալ լերկիր դարձնելու հարցը չես վճռիլ։ Ըստ այսօն մեր կարենորագույն անելիքն է ոգտագործել այն բոլոր կարելուագույն նվաճումները, վորհին հասել և արեվմաս-յեվրոպական յեզ ամերիկական և յանձնիկան, վորպեսդի վերակառուցենք մեր արդյունաբերությունը, զյուղատեսնուրյան մեջ խոր կերպով մաքնենք մեքենաներ, տակտորներ, ելեկտրականուրյուն, արհեստական պարագացումներ։

Ցեղ այս բոլորը մենք արդեն անում ենք։ Մենք կառուցում ենք հսկայական ելեկտրոկայաններ, վորոնք ելեկտրական ուժ են տալիս ամբողջ ռայոնների։ Մենք տրակտորային գործարաններ ենք կառուցում։ Ստալինգրադում, որինակ, տրակտորային գործարան է կառուցվում, վորը տարեկան 20,000 տրակտոր և թողնելու։ Մեր գյուղատնտեսական փորձագաշտերն ահազին աշխատանք են տանում՝ գյուղատնտեսության մեջ մտցնելու առաջնաշտեսակ սերմեր, արհեստական պարարտացումն, լերկրագործական նոր ձևեր։ Մեր արդյունաբերական ձեռնարկումները մենք վերակառուցում ենք նորագույն տեխնիկայի հիմունքներով։

Մեր նավթալին արդյունաբերության վերասարքավորումը նավթի արտադրությունը նախապատերազմիան շրջանի մակար-

գտկից ել շատ և առաջ տարել և հնարավորություն և տվել մեզ յերեք անզամ ավելի արտահանելը քան արտահանվում եր պատերազմից առաջ: Ընդարձակելով մեր քարածխալին արդյունաբերությունը, մենք շախտել ձգելու նորագույն ձևեր ենք կիրառում, կտրել հանելու մեքենա յենք դնում այնտեղ, ուր առաջ հանքագործի քլունդն եր դանդաղ աշխատում, վագոններկաներն Ելեքտրականությամբ ենք քաշում և այլն: Մենք ձեռնարկել ենք հսկայական գոմեն-վառարանների կառուցման, վորից չկա կապիտալիստական յերկրներում, վորից շատ քիչ կա Ամերիկայում: Մենք անընդհատ, վորքան թույլ են տալիս մեր միջոցները, նորում ենք արգեն գործող ձեռնարկների սարքավորումը, նոր մեքենաներ ու գազզահներ ենք դնում հնացածների տեղ: Մի խոսքով, մենք վոչ միայն խոսքով ենք ասում, թե մեր արդյունաբերությանն ու յերկրագործությանը նորագույն տեխնիկա յի հարկավոր, մենք վոչ միայն յերազում ենք այդ տեխնիկան, մենք այդ տեխնիկան արգեն մացնում ենք մեր ժաղավարական տեսառյան մեջ:

Յեզ հենց այս ճանապարհին մենք հանդիպում ենք մի մեծագույն խոչնպատի, վորի անունն և մեր աշխատավոր մասսաների անկուլտուրականուրյուն: Ընդարձակելով մեր քարածխալին արդյունաբերությունը, մենք վճռեցինք նոր շախտել ձգել Յեթե այդ բանը մենք կատարենք հին ձեռքով, հին անինիկական սարքերով, միքանի տարի յի հարկավոր: Նոր տեխնիկան այդ միենույն գործը միքանի ամսում իրագործելու հնարավորություն և տալիս: Պարզ ե, վոր նոր ձեռով պիտի կատարել Վճռեցինք նորով կատարել Դուրս յեկավ, վոր մեզնում վոչ վոր այդ ձեւերին ծանոթ չե: Հարկ յեղավ գերմանացի ինժեներներ հրավիրել: Կառուցեցինք կոստանդինյան հսկայական ապակե վործարանները: Սարքավորեցինք աշխարհի ամենալավ մեքենաներով և Յելլուդայի համարյա ամենալավ գործարանները դարձան: Ակսեցինք աշխատել, բան գուրս չեկավ: Ստացվում և վոչ թե ամենալավ, այլ ամենավատ տեսակի: բրակ ապակի: Պատճմուր: Պարզվեց, վոր բանվորները մեքենաները բանեցնել չեն կարողանում, իսկ ինչեներները նրանց սովորեցնել չեն կարողանում: Վերցնենք հենց այնպիսի մի մեքենա, ինչպիսին տրակտորն եւ Դրանից ԽՍՀՄ-ում արդեն միքանի տասնյակ հազար հատ կա: Տրակտորը լայն կերպով տարածվում եւ Շատ գլուղական կոմիերիտական բջիջներ են ցանկանում իրենց գլուղում մեքենալական ընկերություն կազ-

ձակերպել և աշխատել, վոր այդ ընկերությունը տրակտոր ձեռք բերի. Սա շատ լավ է, Բայց վատն այն է, վոր գյուղում քիչ զիտեն, —թե տրակտորն ինչպես և շինված, նրան ինչպես պիտի բանեցնել, ինչպես վերացնել լիղած թերությունները. մի խոսքով —ինչպես ախտատել տրակտորով, Հաճախ մեր այս հարցին պատասխանում են. —կասովորենք. Ու պատահում է, վոր տրակտոր գնում ու սկսում են նրանով սովորել, իսկ այս անշնորհք սովորելու հետեանքն այն է լինում, վոր մեքենան փչանում, անպեսք իր և գառնում. Հարցրեք գյուղում, ուր բոլոր գյուղացիք լեռագաղտնան սիստեմի անտեսություն են տանում, վժրն է լավ, — յառագաղտնանը, թե՝ բազմադաշտյանը. Ամեն մինը կասի—բազմադաշտյանը. Վոչ վոք չի վիճիլ, Բայց փորձեցեք հարցնել, թե բազմադաշտնան սիստեմում վժր սերմաշրջանառությունն է լավ: Հաստատ կարելի լի ասել, վոր շատ քչերը կպատասխանեն այդ հարցին:

Ահա սա յե մեր անդրագիտությունն ու անկուլտուրականությունը: Յեկ նա լերեան և գալիս վոչ միայն տեխնիկական ընտագմագառում, վոչ միայն աշխատանքի լավագույն, կատարելագործված ձեռք մեր չիմանալում, այլև ամեն գործում: Վոր կատարում ենք: Մենք դեռ շատ վատ աշխատել զիտենք: Մեկին վորեն աշխատանք և հանձնարարվում: Կարողանեմ ենք արգիոք ժամանակին կատարել, ժամանակ խնայել նա, վորին զործ և հանձնարարված, հների պես և գատում. «զործը գալլ չե, անտառ չի փախչիլ»: Մենք միշտ ենք ասում, թե մեր աշխատանքն անարդյունավետ է, ասում ենք՝ պետք և բարձրացնել արտադրողականությունը: Իսկ աշխատում ենք անփուլթ, անուշադիր, զանդաղ: Աս բոլորին կենին իր ժամանակ «աշխատանքի ստրկական թափ» անունն է տվել: Աշխատում ենք վորպես ստրուկներ, վորոնց քշում են մտրակով: Յեկ մեր աշխատանքի այդ ստրկական թափով ահազին փողեր ենք անտեղի ծախտում:

Մեզ ուտում և սովորույթի ուժը: Մի անգամ կենին ասել է. «Միլիոնների յեվ տասնյակ միլիոնների սովորույթի ուժը — ամենասարսափելի ուժն է»: Դժբախտաբար այս սարսափելի ուժը սարսափելի յել խոչնզու, արգելակ և զառնում: Հինգ մեզնում օտա ուժեղ և նստած. ամեն ենակ նորի նկատմամբ քերակալա ենք. ամեն կերպ աշխատում ենք երանից ոնիք ազատել:

Վերջապես ամենահասարակ գրագիտություն մեզ պակասում

և Աշխատավորական ահազին մասսաները չփառեն՝ վոչ կարգալ, վոչ գրել, չենց ալժմ ել 100 միլիոն աղքարնակությունից միայն 44 միլիոնն ե գրագետ։ Իսկ հեղափոխության սկզբի տարիներում հարյուր հոգուց միայն 30 եր գրագետ։ Ել վճրառեղից պահանջենք տեխնիկական գրագիտություն, անխնիկական շնորհք, խնամքով վորոնելու և աշխատանքի նոր ձեռք կիրառելու կարողություն Անկուլտուրականությունը մեզ հաղթել է ։ Նա մեծ և մանավանդ գյուղում։ XV կուսակցական համագումարում ընկ. Մոլոտովը զեկուցելով գյուղում կուսակցության տարած աշխատանքի մասին, կտրուկ կերպով ցույց ե տալիս այս անկուլտուրականությունը։ «Ներկայումս ի՞նչ ե պակասում մեզ գյուղում, ասում եր նա, մանավանդ նոր անելիքների հետ կապված։ Կուլտուրացած գաղցալ յեվ գարցյալ կուլտուրացած։ Ներկայումս գյուղում բառի բուն նշանակությամբ ամեն ինչ զեմ ե առնում կուլտուրայի բացակայությանը ինչ բնագավառի յել մոտենալու լինեք—մեր անկուլտուրականությունը, յետամնացությունը, յերբեմն ել աւզդակի վայրենությունը չեն թույլ տալիս ծավալել այն նորք, վոր կա գյուղում։ Վոր մասսաների անկուլտուրականությունը սոցիալիստական շինարարության համար մեծ արգելք ե հանդիսանում, ասվել և նաև կոմսոմոլի վերջին VIII համագումարում, վոր նշեց, թե «Լիջեմ-ի հիմնական անելիքը վճռական զրոն ե կուլտուրական և իդեոլոգիական ֆրոնտներում»։

Յեվ գորքան հեռու, վորքան խորն ենք ծավալում մեր սոցիալիստական շինարարությունը, այնքան մեր անկուլտուրականությունն ավելի ու ավելի յե զգացվում։ Գիտակ, փորձված ու կարող մարդկի գտնեն ավելի ու ավելի դժվար ե դառնում։ Սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում այլօլիսի մարդկանց կատարյալ պակասը հետզնետե ավելի ու ավելի յե աճում։ Սոցիալիզմ կառուցում են վոչ թե հազարավորները, նույնական հարյուր հազարավորները, սոցիալիզմ կառուցում են ասանցակ միլիոնավոր բանվորներ։ Ենք յերե այս ասսթյակ միլիոնները օքես, անուս մենան, կարող ե ծամանակ գալ, վոր նրանք իրենց անուսուրյան, անկարօղուրյան, անկուլտուրականուրյան պատճառով այլեվս անկարող լինեն կառուցումը շարունակել։

Ահա, թե ինչու կուսակցության XV համագումարն այնքան համառորեն ընդգծեց, վոր մեր կուլտուրական ֆրոնտը սոցիալիստական շինարարությունից յետ և մնում, և այնքան վճռական

կերպով առաջ քաշեց կուլտուրական հեղափոխության լինինյան լոգունգը:

Վ. Ի Լենինն իր վերջին հոգվածներում, գրված մահից քիչ առաջ, ամբողջ ուժով կուսակցության, գործի այս կազմի վրա ի դարձնում բանվոր զասի և ամբողջ աշխատավորության ուշադրությունը: Ժողովրդական կրթության մասին նա հատուկ հոգված դրեց, վորում մեր իրերի մասսայական անդրագիտությունը բնորոշող թվեր առաջ բերելով, անում եր, վոր այս գործի վրա առաջիկա տարիներում ավելի ու ավելի մեծ ուժ ու միջոցներ պիտի դնել: Կոռագերացիայի մասին գրած հոգվածում Լենինը գրում եր, թե կյալգացիության գլխովին կոռագերացության անկարելի յի առանց իսկական կուլտուրական հեղափոխության: Այսպիսով, ըստ Լենինի, կուլտուրական հեղափոխությունն անհրաժեշտ պարան և հանդիսանում սոցիալիստական լերկրագործություն կառուցելու համար:

Մենք լայն ֆրոնտով պայքար պիտի մղենք անկուլտուրականության, սոցիալիստական շինարարության այս թշնամու գեմ՝ ավելի ու ավելի թարմ ուժեր նետելով պայքարի այդ ասպարեզը, վորոնք տողորված լինին հեղափոխության կամքով, վոգերությամբ և այս թշնամուն հաղթահարելու վճռականությամբ: Կուլտուրական հեղափոխության ֆրոնտը նետված այս ուժերն ամբողջ կուսակցության և կոմսոմոլի ուժերի հետ միասին պիտի վճռական, կարող և պատրաստակամ լինեն՝ կազմակերպելու մասսաներն ալնակես, վոր նրանք իրենք կարողանան հաղթահարել իրենց անկուլտուրականությունը, իրենք առաջացնեն այդ կուլտուրական հեղափոխությունը:

Ծիծաղելի կլիներ կարծել թե այն մարդիկ, վորոնց կուսակցությունը նետել ե կուլտուրական հեղափոխության ֆրոնտը, կարող են իրենք կուլտուրական հեղափոխություն առաջ բերել, յեթե մասսաներն անտարերե են: Զետեղ հեղափոխություն, յեթե նրան չեն մասնակցում մասսաները: Կազմակերպել մասսաներն ալնակես, վոր նրանք պայքարեն հոգուտ գրագիտության, կուլտուրայի, մասսաներում կուլտուրական խնդիրներ բարձրացնել, մասսաներում աճող կուլտուրական հարցերը բավարարելու լավագույն միջոցներ վորոնել — ահա կուսակցության, կոմսոմոլի և այն բոլորի անելիքը, վորոնք աշխատում են կուլտուրական ֆրոնտում: Անհրաժեշտ ե, վոր ամբողջ մասսան հասկանա, թե արդպես ալլես առաջ գնալ չի կարելի, թե անկուլտուրականու-

թյունը կատաղի թշնամի լե, վորին վերջ պիտի տալ նույնպիսի վճռականությամբ, վորով քազաքացիական կույի ժամանակ վերջ տվինք կազմածատերերի ու կապիտալիստների դինված դիմադրությանը:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՅԻ ՀԱՄԱՐ

1. Խնչո՞ւ յեվ ինչպէս և ցած կուլտուրական մակարգակը խանգարում մեր սեսենուրյան զարգացմանը:

2. Խնչո՞ւ հենց այժմ և այդպէս սուր կերպով զգացվում կուլտուրականուրյան պակասը:

### Ի՞նչ և ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Ի՞նչ ենք հասկանում կուլտուրականություն ասելով, մեղ ինչ-պիսի կուլտուրականություն և հարկավոր: Ոտարերկրյա բուրժուազիան, որինակ, մեզ անկուլտուրական և համարում, վորովինեւ մենք խլել ենք հողը կարգածատերերից և ֆարբիկաները գործարանատերերից: Կուլտուրական մարդիկ, ասում և բուրժուազիան, այդպիս չեն անում: Կուլտուրական մարդիկ, բուրժուազիայի կարծիքով, պիտի գոհ լինեն, վոր կարգածատերերն ու կապիտալիստները նստած են իրենց զղին: Միթե այսպիսի կուլտուրա լի մեզ պետք: Պարզ ե, վոր վահ: Կուլտուրան, ասում եր վ. ի. լենինը, այն ամենն ե, ինչ սենդել են մարդիկ, այն բոլորը, ինչ սենդել և ասխատանքը վորպես հակագիր այն ամենի, վոր տալիս և բնուրյունը մարգուն: Կուլտուրան վոչ միայն գրադիտությունն ե, լրագիրը, գիտությունը, արքեստը, առողջապահությունը և այլն: Կուլտուրա լի նաև տեխնիկան, մեքենաները, յերկաթուղիները, հեռագիրը, հեռախոսը, փոստը և այլն: Կուլտուրա-այդ ամենն ե, ինչ մեծացնում և մարզու իրավունքը բնուրյան վրա, վոր մարզուն հնարավորուրյուն և տալիս իր ասխատանք վասենելով իրեն յենքարեկել բնուրյան ուժերը յեվ սեխպել, վոր երանք իր կարիքները բազարակելուն ծառայեն:

Այսաեղից կարծես պիտի լինթագրել, թե մեր լերկրի կուլտուրական վերելքում մեր անհիքները պիտի կայանան նրանում, վոր տիրանանք կուլտուրայի այն բոլոր նվաճումներին, վորոնք գոյություն ունեն կապիտալիստական լերկրներում: Մակայն դա այդքան ել հասարակ բան չե: Փանի հասարակուրյունը բաժանված և զասակարգերի, բանի մի զասակարգ իշխում

և մյուսուրան վոց միայն բնուրյան ուժերը մարզուն  
ավելի յենքարկելուն և ծառայում, այլեվ իօխանուրյան գլուխ  
անցած դասակարգի գրուրյունն ամրացնելուն, վորպեղի մյուս  
բոլոր դասակարգերը լնիթարկե տիրող դասին: Դասակարգային  
հասարակության մեջ կուլտուրան ևս անխուսափելիորեն դասա-  
կարգային բնույթ և կրում: Այն հասարակության մեջ, ուր իշ-  
խանությունը բուրժուազիային և պատկանում, կուլտուրան ևս  
անխուսափելի կերպով բուրժուական կլինի, այսինքն կծառալի  
բուրժուազիայի շահերին:

Ինչպիսի կուլտուրա լե պետք բուրժուազիային: Նրան այն-  
պիսի կուլտուրա լե հարկավոր, վոր արդարացնի բուրժուական  
սեփականությունը, բուրժուական շահագործումը, վոր ողնում և  
բուրժուազիային՝ հնագանդության մեջ պահելու աշխատավոր  
մասսաներին, վոր այլանդակում, փչացնում և այդ մասսաների  
գիտակցությունը, ջլատում և նրանց կամքը Ահա, թե ինչու  
բուրժուազիան այնքան ամուր և պահում կրոնը, թեպես հաճախ  
իրենք կապիտալիստները վոչ աստծուն են հավատում, վոչ սա-  
տանալին: Ահա, թե ինչու լե բուրժուազիան մասսաների մեջ  
կրոնական պրոպագանդ մղում: Մասսաները հնագանդության  
մեջ պահելու համար միայն սոսկ բռնություն դորձագրելը քիչ եւ  
Բուրժուազիայի իշխանությունը Ֆիալն բռնությամբ պահվել չեր  
կարող: Այս պատճառով բուրժուազիան կուլտուրայի բոլոր նվա-  
ճումները ծառայեցնում և իր հայացքներն ու գաղափարները  
մասսայի մեջ ամրացնելու գործին: Իր հայացքները տարածելու  
նալատակով բուրժուազիան ողտագործում և գպրոցները, համալ-  
սարանները, կինոները, թատրոններն ու բազմաթիվ լրագրերը:  
Բուրժուազիային բնավ ձեռնառու չե, վոր աշխատավոր մասսա-  
ները գիտակցեն իրենց դասակարգային շահերը, հասկանան կա-  
պիտալիստական շահագործման ելությունը: Այս պատճառով իր  
գպրոցների միջոցով բուրժուազիան աշխատավորությանը միայն  
այնպիսի գիտելիքների և տալիս, վորոնք բանվորի աշխատանքն  
ավելի արդյունավետ են զարձնում, ուրեմն և՛ ավելի շահ կարելի  
լե ստանալ: Սակայն բուրժուազիան վճռական պալքար և մղում  
ամեն տեսակի գիտելիքների, ամեն տեսակ գիտական տեսու-  
թյունների դեմ, վորոնք մասսաներին իրենց ազատազրման ձա-  
նապարհներն են ցուց տալիս, վորոնք մասսաների վրա ունե-  
ցած բուրժուական ազդեցությունն են խախտում:

Արդյոք սրանից մին և բղխում, թե հին, Հոկտեմբերյան

որերի ձեռքով թաղվածատիրական կապիտալիստական հասարակության կուլտուրան մենք պիտի դենք զցենք՝ վորովես անպետք լաթի կաոր Վոչ, ալդ չի նշանակում: Հին կուլտուրան բազմաթիվ արժեքներ և ստեղծելու վերցնենք թեկուզ տեխնիկան գիտելիքները: Բուրժուական հասարակությունն ահազին տեխնիկական կուլտուրա յի կուտակել, ամբարել: Բուրժուական հասարակության նվաճումների մեծ մասը (հեռախոս, հեռագիր, մեքենաներ, գիտական գյուտեր և այլն) մենք կարող ենք ոգտագործել: Իսկ նրա կուլտուրայի այնպիսի պատառ, վոր ամբաղնդում և աշխատավորության շահագործումը (կրօն, բուրժուական որենքներ, սովորակթներ և այլն) մեզ պետք չեն Հին կուլտուրայից պիտի վերցնենք այն, ինչ վոր մեզ պետք ե, վոր ավելցնում և մարզու իշխանությունը բնության վրա, մի կողմ պիտի նհանք ալն, ինչ վոր մասսաներին սորկացնում և բուրժուագիտի լծի տակ:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՍՏՐ

1. Կ՞նց բան ե կուլտուրան:
2. Բուրժուագիտ ինչպես և ոգտագործում կուլտուրան:
3. Բանից զասակարգ ինչպես և վերաբերվում բուրժուական կուլտուրային:

#### ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹԻՒԹԻՆ ԱՆՑՑԱԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մենք գիտենք, վոր յեթե մեխերն ու պտուտակները խառնված են մի կուլտի մեջ և հարկ կա պտուտակները մեխերից զատել, պետք և ամբողջ կուլտը խառնելու ճիշտ ալդպիսի խնդիր և ծառանում մեր առաջ, յեթե մենք կամենում ենք բուրժուական կուլտուրայում պիտանին անպետքից ու վնասակարից զատել: Մենք պետք ե «Ամբողջ կուլտը խառնենք». պետք ե նվաճենք հին կուլտուրան և վերամշակենք նրան, հարմարեցնենք մեր կարիքներին: «Առանց պարզ հասկանալու, — ասում եր Լենինը կոմսոմոլի համագումարում — թե միայն մարդկության ամբողջ զարդարան ստեղծած կուլտուրան ճիշտ գիտենալով և ալդ կուլտուրան վերամշակելով կարելի լի պրալետարական կուլտուրա կառուցել, առանց ալդպես հասկանալու, մենք ալդ ինչիրը չենք վճռիլ»:

«Պրոլետարական կուլտուրան, ասում եր նա, ինչ վոր մի անհայտ տեղից հայտնված բան չե, հնարածը չե ալնպիսի մարդ-

կանց, վորոնք իրենց պրոլետարական կուլտուրայի մասնագետներ են անվանում: Այս բոլորը դատարկարանություն եւ Պրոլետարական կուլտուրան պիտի հանդիսանա այն գիտելիքների պաշարի որինական գարգացումը, վոր մարդկությունը մշակել և կապիտալիստական հասարակության, կարվածատիրական հասարակության ճնշման տակ:

Մեզ կուլտուրականություն և հարկավոր, վորպեսի սոցիալիզմ կառուցենք: Հին կուլտուրայից մենք պես և վեցնենք, վերամշակենք յեվ յուրացնենք այն, ինչ վոր կողնի մեզ սոցիալիզմ կառուցելու: Ենչ վոր պես յեւ սոցիալիստական կառուցման համար, ինչ վոր վճառակար ե, պիտի մի կողմը նետենք:

Յեվ ահա սոցիալիստական կուլտուրա մշակելու այս ձանապահնին, ինչպես և մեր շինարարության ուրիշ ասպարեզներում, կատաղի պայման պիտի մղենք քենամիների գեմ: Յեվ այս ասպարիզում ավելի կատաղի, քան մլուս: Մեր յերկրի սաւավ կուլտուրական և անկուլտուրական աշխատավորական մասսաները, վորոնք նոր են սկսում իրենց սոցիալիստական շինարարությունը, սկսում են հին կուլտուրան յուրացնելուց և վերամշակելուց: Բուրժուազիան և նրա ազնատները (բուրժուազ պրոֆեսորներ, բուրժուազ իրավաբաններ և այլն) աշխատում են հրամցնել իրենցը, բուրժուազիանը, սովորաբար ջանալով թեթե կերպով քսմսել, ներկել այդ հրամցրածը, վորպեսզի բուրժուազիան իյությունը նրա միջից առանձնապես վառ կերպով չզբսերվի: Աշխատավոր մասսաների բուրժուազիան հայացքներով վարակվելու վտանգը մնե և ներկայումս, յերբ մենք հերթի յենք դնում կուլտուրական հեղափոխությունը: Մենք պետք եւ պարտավոր ենք բարձրացնել մասսաները՝ դեպի պայքար կուլտուրային տիրելու, հին կուլտուրան վերամշակելու, նոր կուլտուրան զարգացնելու: Մեր թշնամիները փորձում են ուժեղացնել իրենց դիմադրությունը բանվոր դաստիարակի գաղաքականությանը, վոր սոցիալիզմ և կառուցում: Նրանք փորձում են կուլտուրական ֆրոնտում ևս սրել իրենց պայքարը բանվոր դաստիարակի դեմ, վորպեսզի կարողանան աշխատավորական ավելի յայն մասսաներ խճճել բուրժուազիան իդեոլոգիալի ցանցերում: Սրան պիտի հետեւ ամենայն աշարժությամբ, սրա հետ պիտի անխնա կովել: Սա դաստիարակի պայքարի ամենակարևոր ասպարեզներից մեկն եւ:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒԹՅԻ ՀԱՄԱՐ

1. ԽՍՀՄ-ի աօխատավութերն ի՞նչ պիտի սովորեն բուրժուազիայից:

ԳՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱ-  
ՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Խնդպես մյուս բոլոր ասպարեզներում, այնպես և այսանդ, ղեկավարող զերը պատկանում է յեվ պետք և պատկանի պրոլետարիատին։ Մեր լերկրում կուլտուրական կառուցվածքը հանդիսանում է հասարակությունը սոցիալիստականորեն վերակառ-սուցելու միջոցներից մեկը։ Միանգամայն հասկանալի լին, վոր սոցիալիստական կառուցումը ղեկավարող բանվոր դասակարգը չի կարող ձեռքից թողնել մի այնպիսի կարեռը թակ, ինչպիսին մասսաների կուլտուրականությունն է։ Կուլտուրական կառուց-ման ժամանակ, վոր ինքնարությ կերպով և զնում, առանց ղեկավարության վոչ բայրոր աշխատավորական մասսաները կրաշ-վին այդ գործի մեջ։ Անկասկած և, վոր բանվորների ու զուղացիների ամրող շերտեր պոչում քաշ կգալին, և հետզհետե լեռ կմնացն շարունակ տուած գնացողներից։ Մասսաներում կուլտու-րական խզումն կտաեղծվեր։

Վերցնենք կուլտուրական աշխատանքի այնպիսի ասպարեզ, ինչպիսին անգրագիտառության վերացումն է։ Թվում և, թե այս-տեղ դասակարգային զիծ պնդելու առանձին բան չկա: Դեռ ա-հազին քանակությամբ անգրագեաներ ունենք, շտապինք կարե-լույն չափ շուտ վերացնել անգրագիտությունն—ուրիշ վոչինչ։ Սակայն՝ լիթե լավ նաևնք, թե գլուղում վճրքան անգրագիտ կա-չքավորների, միջակների և կուլակների մեջ, կաեսնենք, վոր չքավորների մեջ անգրագեաների տոկոսն ավելի մեծ և, քան կուլակների, նույնիսկ միջակների մեջ։ Ցուրաքանչյուրի համար պարզ ե, վոր չքավորն ավելի գծվար կարող և զնալ անգրագի-տությունը վերացնող գալրոց, քան ավելի հարուստ գլուղացին։ Դուրս և գալիս, վոր լիթե այս գործում դասակարգային զիծ չը-տարվի, ամենքից կարեռ խնդիր չդառնա՝ գլուղում առաջին հերթին չքավորներից ու միջակներից վերացնել անգրագիտու-թյունը, քանվոր դասակարգի միակ հենարանը զուղում կուլ-տուրապես լեռ կմնա ավելի ունեոր շերտերից։ Պարզ ե, թե սրա շնորհիվ ինչ վտանգ կստացվի սոցիալիստական շինարարության համար։ Մյապիսի որինակ կարելի լեռ բերել վորքան ուզեք։

Ուրեմն կուլտուրական կառուցվածքում բանվոր դասակարգի ղեկավարությունը հարկավոր է, վորպեսզի կարելի լինի աշխա-տավորական ամրող մասսան պատրաստել՝ շինարարությանը, կառուցվածքին մասնակցելու, այլև նրա համար, վորպեսզի բուր-

ժուազիան չկարողանա այս ասպարեզն իր ողափին ծառալիցներ կուլտուրական կառուցման ֆրոնտում բուրժուազիայի գեմ կովկելու համար բանվոր դասակարգն իր ձևոքում մի սուր զենք ունի —մարքսիստական—լինինյան թեորիան (ուսմունքը): Կոմսոմոլի Ա համազումարում Լինինն ասում եր, թե ինչումն և կայանում Մարքսի տեսության երությունը — «Մարքսն, —ասում եր Լինինը, — հենվում եր կապիտալիզմի ժամանակ ձեռք բերած մարդկային գիտելիքների հաստատուն հիմքին: Ուսումնասիրելով մարդկային հասարակության զարգացման կանոնները, Մարքսն հաշկացավ կապիտալիզմի զարգացման անխուսափելիությունը, զոր զեպի կոմունիզմ եր տանում ե, զոր գլխավորն ե, նա այս ապացուցում եր ճիշտ, մանրամասն ու խորն ուսումնասիրելով այդ կապիտալիստական հասարակությունը: Նա այս բանը կատարում եր նախկին գիտության ովածները ամենալրիվ կերպով լուրացնելով: Լինինը լրացրեց ու զարգացրեց Մարքսի ուսմունքը՝ պրոլետարական հեղափոխության, պրոլետարիատի զիկտատուրայի, սոցիալիստական շինարարության ճանապարհների ու միջոցների մասին: Անա այս Մարքս — Լինինյան ուսմունքն ել գարձագալ բոլոր լերկրների պրոլետարիատի ուսմունքը, զարձագ համաշխարհային պրոլետարիատի գաղափարախոսությունը (իունիոնի գիտան):

Ահա այս ուսմունքով զինված պրոլետարիատը բուրժուազիայի և նրա ագենտների գեմ պայքար և տանում՝ կուլտուրական կառուցման ֆրոնտում: Նա այս պայքարը տանում ե, ձըգտելով աշխատավորության գաղափարական միատեսակություն (հայացքների միատեսակություն) ստեղծել մեր պայքարի և շինարարության բոլոր հարցերում, միատեսակություն՝ մարքսիստինինյան հայացքների հիման վրա: Այս պատճառով պրոլետարիատը պրոպագանդ է մղում, ձգտում ե բանվորների ու զյուղացիների ավելի լայն մասսաներ ծանոթացնել այն բոլորի հետ, զոր սովորեցրել են Մարքսն ու Լինինը: Նա պաշտպանում է այդ ուսմունքն ամեն տեսակ բուրժուական գաղափարախոսության գեմ, նա պաշտպանում է նրան ամեն տեսակ խեղաթյուրումների փորձերից, վորտեղից ել գալու լինեն այդ փորձերը: Նա ամեն կերպ ձգտում ե, զոր աշխատավորները մեր շինարարության բոլոր հարցերին, դրանց թվում նաև կուլտուրական շինարարության հարցերին այնպես մոտենան, ինչպես սովորեցրել են Մարքսն ու Լինինը: Մարքսիզմ — Լինինիզմի սիրապեսությունը, պրոլետարա-

կան զաղափարախոսության սիրապետությունն աշխատավորների ուղանում՝ զաղափարական միասնականություն ապահովելով, և նեց գրանով ել նպաստում և նայել գործողության միասնականության՝ կովի յեվ աշխատանքի մեջ։ Տարրեր հայացքները տարրեր ել գործնականի լին առնում։ Յեթև բանվորների և զլուղացիների մեծամասնությունն սկսեր մտածեր, թե զլուղատնտեսության զարգացումը պիտի գնա առանձին ուժեղ տնտեսությունների զարգացման ճանապարհով, թե այդ ճանապարհին թույլ տնտեսությունները պիտի վոչչանան, թե դրանք իրենց ձեռքը պիտի առնեն ուժեղ տնտեսությունները, վորոնք զարգանալով, կկիրառեն յերկրագործության լավագույն ձեհր, մեքենաներ և այլն, այդ գեղքում այլպիսի բարեժուական թեսրիան իր յետեց ել համապատասխան գործնական կրերեր։ Ազդպիսի հայացքները ունեցողները կսկսելին պահանջել, վոր համապատասխան տնտեսական քաղաքականություն տարվի, ալիքնքն ամուր պաշտպանվեն և կուլակալին տնտեսությունները, նրանց թույլ տրվի զարգանալ չքավորի և միջակի հաշվին, կուլակներին վարկ տրվի, ինչպես նաև արտոնություններ՝ մեքենաներ ձեռք ըերելու, հարկերի հիմնական ծանրությունը չքավորների և միջակների վրա ընկնի և այլն։ Իսկ ալսպիսի քաղաքականությունը կտաներ դիպի կապիտալիստական յերկրագործության վերականգնումն, զլուցում նոր կազմակերեր կերեալին Յուրաքանչյուր տեսությունները, չերենում և և գոյությունն ունի նրա համար, վոր վորոշի գործնական գիծը, գործողության գիծը։ Ահա, թե ինչու պրոպագանդը վոչ պրոլետարական տեսությունների, մարքսիստ-լենինյան տեսության խեղաթյուրումն վորոշ վասնգ են ներկայացնում սոցիալիստական շինարարության գործի համար։ Ահա, թե ինչու վեռական պայքար պիտի սանել, վոր պրոլետարական իգենոզիան օհրապետող լինի մեր յերկում։ Հոգուտ մարքս-լենինյան ուսմունքի տիրապետության։ Պրոլետարական իդեոլոգիալի տիրապետությունն աշխատավորության շրջանում ապահովում և աշխատավորության հայացքների միասնականությունը սոցիալիստական շինարարության բոլոր խնդիրներում։ Հայացքների միասնականությունն ել իր հերթին ապահովում և աշխատավորության համերաշխ մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ։

### ՀԱՐԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. ԽԵՆՈ՞Ն ԽՍՀՄ-ում պրոլետարիատ ղեկավարում է կուլտուրական հեղափոխությունը։

2. Ե՞ն և «պրոլետարական հայացքների սիրապեսությունը» եզ ինչո՞ւ նա հարկավոր ե:

**ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՔԸ**

Պրոլետարական խգեռոգիպի տիրապետությունը հեշտացնում է հնի մնացորդների հետ կովկելու խնդիրը, մեր հասարակական հարաբերությունները հին բուրժուական հասարակության ցեղից մաքրելու խնդիրը։ Մեր լերկրի աշխատավորությունը հնից գեռ շատ բան և պահպանել իր կենցաղում, իր փոխարարերություններում, իր գեղի աշխատանքն ունեցած վերաբերմունքում և այլն։ «Բանվորն, ասում ե Վ. Ի. Լենինը, լերեք հին հասարակությունից պատով բաժանված չե լեզեր Բանվորները նոր հասարակություն են կառուցում, առանց փոխարկվելու, դառնալու նոր մարդիկ, վորոնք մաքուր լինեն հին աշխարհի ցեղից, այլ մինչեւ ծնկները կանգնած են արդ ցեղում։» Լենինի այս խոսքերը կարելի լե ազելի ուժեղ կերպով վերազրել գյուղի աշխատավոր մասսաներին։

Հին աշխարհի այս ցեղը կազում ե նաև լերիտասարդությանը՝ թեպետ մեր արժման լերիտասարդությունն իր մեծամասնությամբ անձանոթ ե կապիտալիստական հասարակությանը, սակայն այդ հասարակության ցեղից սա լել ազատ չի։ Յերիտասարդությունն ամենից քիչ կոփված մասն ե՝ թե բանվոր դասակարգում, թե աշխատավորության մեջ։ Շրջապատող միջավայրը կապիտալիստական «ցեղը» լերիտասարդությանն և անցկացնում։

Մինչև ականջները հին հայացքներում ու սովորություններում խրված մարդն իրեն համար բոլորովին աննկատելի կերպով մնում ե գերի բուրժուական սովորությունների, վարժությունների և բուրժուական ազգեցության։

Բուրժուական հայացքների և նրանցից բզմող սովորությունների ու վարժությունների բնորոշ գիծն ե ցալտուն կերպով արտահայտված ինդիվիդուալիզմը<sup>1</sup>։ Բուրժուական գաղափարախոսությունն ամբողջովին տոգորված ե ինդիվիդուալիզմով, տոգորված ե անձնական, սեփականատիրական ձգտությունով։ Բուրժուան (կապիտալիստը) միայն իր շահերի մասին և մտածում։ Թող ամեն

<sup>1</sup> Ինդիվիդուալիզմ բառը հակագիր ե կոլեկտիվիզմ բառին։ Ինդիվիդուալիզմ նշանակում է անձնական, սեփական, հականատիրակական, կամ ինչպես ասում են, անտիհասարակական։ Իսկ կոլեկտիվիզմ նշան ակում է ընդհանուր, հասարակական։

ինչ կորչի, միայն թե նրա վաստակները կանոնավոր կերպով նրա գրապանը հոսեն Աւրիշների հետ նա գործ չունի: Մնացած բոլորի վրա նա թշնամանքով և նայում, վորոնք վորեն կերպ կարող են վաս հասցնել նրա հարստանալուն, կարող են նրա կոնկուրենտը, մրցակիցը զառնալ (շուկայի հակառակորդ), կարող են ձեռք մեկնել գեղի նրա վաստակը: Այս պատճառով բուրժուան կոյեկաթիվստ չե, նա ինդիվիդուալիստ ե: Նրա համար իր անձնականը, սեփականը շատ ավելի կարեոր ե, քան հասարակականը: Իսկ գեղ վորքան բուրժուական ինդիվիդուալիզմ կա թագնված հենց մեր — բանվորներիս, գլուղացիներիս ու աշխատավոր լիբերատորակության մեջ: Կոմսոմունիզմ մեջ նա հայտնի յէ քաղքենիություն անունով միշտ ե, շատ անգամ ենք բազգենիություն անվանում այն, ինչ վոր բնավլ քաղքենիություն չե: Բավական ե, վոր մեկը մաքուր վերնաշապիկ հագնի ու փողկապ կապի, նրա համար քաղքենի անունը պատրաստ ու: Սա, ինարկե, ճիշտ չե: Դրանում քաղքենիություն չկատ Շատ լավ ե, լիթե կոմիկիտականը մաքուր ու կարգին ե հագնվում: Նրան քաղքենի անունով միրտելը հիմարություն, իսկական քաղքենիությունը չտեսնել ե: Քաղքենիուրյուն և սեփական օահերն առաջին հերթին զնելը, բանվոր յեկ աշխատավոր գասի օահերին անեարբեր վերաբերվելը: Հանախ ել անեարբերուրյունն ուղղակի դավանանուրյուն ե զառնում:

Վերցնենք այսպիսի գեղք: Կոմիկիտականն ուզում և սովորելու գնալ, ավելի գրագիտ ու կուտուրական դառնալ, վորակալ աշխատակից դառնալ: Միանգամայն որինական ձգտում և վերջին հաշվով աշխատավորության շահերի ոգտին Բայց այս ձգտումն ել պիտի սահման ունենա: Յեթե կոմիկիտականը սովորելու յէ գնում վոչ թե հետագալում բանվոր դասակարգին մեծ ոգուտ բերելու, այլ «մեծ ոսճիկ» ստանալու, «հեշտ կերպով հաց ձեռք բերելու», իր գասակարգին պատկանող շատ մարդկանցից բարձր գիրք գրավելու համար, ուրեմն երանում բաղենին ե նստած:

Անկարելի յէ սոցիալիստական հասարակություն կառուցել, լիթե ավելի մեծ թվով աշխատավորական մասսաներ չձվեն այդ աշխատանքին: Մեր շինարարության դործում մենք հսկայական թերություններ ունենք, վորոնք րդխում են մասսաների կուլտուրականության ցած մակարդակից, վորից ել պետական ապարատի չարագույն բլուրոկրատիզմն և բղխում: Բյուրոկրատիզմի գեմ հաջող պայքար տանելու համար անհրաժեշտ ե, վորպեսզի

մասսաները ցանկություն յեվ կամք ունենան իրենց վերահսկողությանը յենքարեկելու պետական ապարատի աշխատանքը՝ ցածից:

Բուրժուազիան իր տիրապետության ժամանակ բոլոր միջոցներով աշխատում է խլացնել բանվոր և գյուղացի մասսաներում հասարակական գործերով զբաղվելու ցանկությունը, ամեն կերպ աշխատում և նրանց մեջ այն հասկացողությունը խորացնել, թե հասարակական գործի հաջողությունը, բուրյոկրատիզմի դեմ պարքարի հաջողությունը, բնդհակառակը, կախված և նրանից, թե մասսաները վորքան են գիտակցում, վոր «ամեն բան իրենց գործն ե», թե վորքան «ճաշակ» ունեն զետի հասարակական գործը: Բուրյոկրատիզմի դեմ պարքարելու ցանկությունն ու շնորհը մեր պայմաններում ամբողջովին մասսաների կուլտուրականությունից և կախված: Կուլտուրական ենդափոխության լոգությի իրականացումն ամենից եթես միջոցն ե բյուրոկրատիզմի գեմմավող պայմարի:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչո՞ւ բուրժուական հայացքները քափանցում են աշխատավորական մասսաների մեջ:

2. Ի՞նչպե՞ս պիտի վերաբերվել զետի սեփական օահը յեվ անենաությունը, զուրպեսզի կարելի լինի իսկապես սոցիալիզմ կառուցող զառնալ:

3. Ի՞նչ ետակություն ունի կուլտուրական ենդափոխությունը՝ բյուրոկրատիզմը վոչնացնելու համար:

#### ՊԱՅՔԱՐ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Բուրժուական գաղափարախոսության ազդեցությունն արտահայտվում է աշխատավորների ունեցած կրոնական նախապաշարմունքների մեջ: Կրոնականությունը սերտ կապ ունի բուրժուազիայի այն պահանջի հետ, վորով ցանկանում է իր շահագործմանը չընդդիմացող հլու, հնագանդ «հոտ» ունենալը. Վերջն ժամանակները կրոնական պրոպագանդն առանձնապես ուժեղացել է զանազան գույնի հոգեորականության և աղանդավորության կողմից: Ուղղափառ, կաթոլիկ, հրյական ու մահմեդական տերտերներն աշխատում են կրոնն այնպես հարմարեցնել, վոր նա ավելի ուժգին ազդի մասսաների վրա: Նրանք իրենց շարքերը

դաստիարակելու, պատրաստելու դորձին մեծ ուշադրություն են նվիրում, նույնիսկ մեր հակակրոնական զրականությունը, մարքսիզմն են ռւսումնասիրում, վորագեղի կարողանան դիմագրավել մեր հակակրոնական պրոպագանդին:

Վորագեղի կարողանան մասսաները դեպի լեկեղեցի զրավել նրանք աշխատում են լեկեղեցական խորհուրդների մեջ բանվորներ ու չքավոր գլուղացիներ անցկացնել: Մեծ տաճերին լեկեղեցիներում հսկայական համերգներ են կազմում թատրոնից լերդիչներ հրավիրելով, լեկեղեցում պատի թերթեր են թողնում և այլն: Բազմաթիվ ազանգավորական կազմակերպություններ են առաջ դալիս: Յերեսում են ազանգավորական լերխտասարդության կազմակերպություններ — քրիստոնէրխտականներ. ծ. թ.) և այլն: Կրոնական պրոպագանդիստները մեր աշխատանքի ձերեն են փոխ առնում: Նրանք ել իրենց կին բաժինները, եկոնոմ հանձնաժողովները, ագիտապրոպագներն ունեն: Տեղադրդ նրանց ազգիցությունը կոմսոմոլին ել և դիպում, ինչպես, որինակ՝ Բարնաուլի շրջանում:

Կրօնական ուսմունքի գարգացումը համազոր և աօխատավորուրյան մեջ երանց համար խորը գաղափարախոսուրյուն՝ յոնարհուրյուն ու հնազանդուրյուն ամրացնելուն: Խոկ կրօնական կազմակերպուրյունների գարգացումը վոչ այլ ինչ և, յերե վոչ՝ պրոլետարիատին ու աօխատավորուրյանը զասակարգային խորը ու քննամի բաղաբական կազմակերպուրյունների բողարկված անումն: Ներկայումս ունակցիալի միակ լեզու ապաստանը լեկեղեցին և համարվում: Խօսւը չե, վոր կրօնական աղանդների ղեկավաբների պատճենին այնքան «անցյալի մարդիկ» — կալվածաերեր, զործարանաերեր, ժանգարեններ ու ո՛չիցերեներ են զնում: Բուրժուազիան կրօնական ցանցի մեջ և զցում անգիտակից ու պակաս կուլտուրական աշխատավորների: Նա աշխատում և ալղաբիսիններին ոգտագործել պրոլետարիատի դիկտատուրայի գեմ՝ խաղալով նրանց կրօնական նախապաշարմունքների հետ:

Անցյալի ժառանգություններից մինն ել ազգայնական պառակտումն և հանդիսանում, անվստահ վերաբերմունք դեպի մի այլ ազգի մարդիկ, վորպես «ոտարների»: Բուրժուազիալին ձեռնուու լեր տարբեր ազգերի բանվորներին ու գլուղացիներին միմյանց գեմ հանել, վորովհետեւ աշխատավորության ազգայնական պառակտումն հեշտացնում եր բուրժուազիալի տիրապետու-

թլունն աշխատավորութիւն վրա՝ ձեզքելով նրանց շարքերը՝ բուրժուազիայի առանձնապիս սիրելի միջոցն եր թշնամանք սերմաննելը հրաների նկատմամբ։ Սա կոչվում է հակասեմիտականություն։ Հակասեմիտականությունը միշտ գենք և ծառալի ամենասու սեակցիայի ձեռքում։ Յերբ հին Ռուսաստանում աշխատավորության մեջ ատելութիւն ալիք եր բարձրանում գեղի շահագործողները, ցարն ու նրա արքանյակներն աշխատում ելին այս ատելությունը կեղծ հունի մեջ դնել, իսկական թշնամիներից գարձնել գեղի հրաները՝ նրանց ժողովրդի թշնամիներ ներկայացնելով։ Այս պատճառով ցարական կառավարությունը հեղափոխական շարժման վերելքի տարիներում հրական ջարդեր եր կազմակերպում։ Հենց սրբ համար ել քաղաքացիական կոիվների ժամանակ հրական ջարդեր ելին կատարում բոլոր սպիտակ գվարդիական բանակները։

Նույնիսկ մեր որերում կուլակները, առևտրականները, հին աշխարհի բոլոր տականքներն աշխատում են աշխատավորական մասսաներում ատելություն ու թշնամանք սերմաննել գեղի հրաները։ Յերեմի հակասեմիտական տրամադրություն և յերեսում նաև կուսակցության ու կոմսոմոլի այս կամ այն անդամի մեջ Բանվոր գասակարգի, կուսակցուրյան ու կոմսոմոլի պարտեն և վճռական կոիվ մղել հակասեմիտականուրյան գեմ, բացատել մասսաներին, վոր երաների մեջ յեվս, ինչպես յեվ ուրիշ ազգություններում, կան աշխատավորականներ ու շահագործողներ, վոր երյա աշխատավորականները շահագործողների ղեմ մղվազ կովում (անկախ երանց ազգությունից) ընկերներ են մյուս բոլոր ազգությունների աշխատավորականներին։ Կոմսոմոլի յուրաքանչյուր անդամ, ամեն մի աշխատավորական, պիտի դիտենա, վոր հակասեմիտականությունը բանվոր դասակարգի ու գյուղացիության թշնամիների համար կովի միջոցներից մեկն և պրոլետարիատի դիկտատուրայի գեմ։ Նա կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը վերադարձնելուն և ծառալում։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչո՞ւ յե բուրժուազիան ծածկվում յեկեղեցական կազմակերպությունով ու հակասեմիտականուրյամբ։

2. Ո՞վ և շահագելու հակասեմիտականուրյունից։

## ՆՈՐ ՄԱՐԴ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ԽՆԴԻԲԸ

Հին աշխարհի ժառանգություն և նաև հարբեցողությունը՝ Մոռացված, լքված, հարստահարված ու շահագործված րանզորն ու զբուղացին հին ժամանակ թունավորվում եր ալիոնորվ, վորպեսզի հարբեցության մեջ զոնե ժամանակավոր կերպով մոռանանա իր ծանր կլանքը Հարբեցությունն արծատացած և հարլուրավոր տարիներով և նույնիսկ մինչեւ այսոր իրքն մի ծանր բեռ ձնշում և մեզ: Բանվորներն ու զբուղացիները հարյուրավոր միլիոն ոռւրիներ են թողնում գարեջրատներում ու գենեաներում, այնինչ այդ գումարները կարող ենին կուլտուրական նպատակների ժառայեցնել (կիսո, թատրոն, գիրք, լրագրեր և այլն), մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնել: Հարբեցությունը մայր և ագիտության, խուլգանության, հայուանքին, նաևնտանիքներում ալլանգակում և յերեխաններին: Հարբեցությունն աշխատավորին զանցառու լի դարձնում իր գործում, ձգում և աշխատանքի արտադրողականությունը Հարբեցությունը խախտում և մարդու որգանիզմը, ալլանգակում ու թուլացնում նրա մտավոր ընդունակությունները, մարգուն դարձնում և թույլ և ամեն տեսակ ազգեցությունների յինթակա:

Խուլգանություն, հակասենմիտականություն, ընկերոջը, աշխատավորին չգնահատելը, ուրիշներին արհամարելը, սեռական սանձարձակություն, անձշտապահություն, բլուրոկրատիզմ, թափառաշրջիկություն և այլն, այս բոլորը հին ցեխ և, վորի մեջ կանգնած ենք մինչեւ մեր ծնկները: Վյու բոլորը եին բուրժուական աշխարհի ժառանգությունն ե: 'Նա մեզ կաօկանզում և քե՛ մեր կենցաղում, քե՛ մեր աշխատանքում: 'Նա խոնցոս և հանգիսանում մեր սինարարական աշխատանքին, նա խրախուսում և մեր անկուլտուրականությունն ու անօնորհերթությունը յեկ միաժամանակ այն աննկատելի հաղորդիչն և հանգիսանում, վորի միջով բուրժուազիան ազգում և աշխատավորության վրա:

Սոցիալիզմ կառուցելը միաժամանակ և նաև պալքար նոր մարդու համար. պալքար այնպիսի մարդու համար, վոր աղատինի բուրժուական սեփականատիրական հայացքներից, տողորված լինի կողեկտիվ հասարակական տնտեսություն և կենցաղունենալու ցանկությամբ, աղատ լինի հին բուրժուական աշխարհի ցեխից: Խսկապես սոցիալիզմ կառուցողների կաղըքը պիտի կովրինի հին նախապաշտառությունների, վասակար սովորուկթների, պրոլետարիատին թշնամի ազգեցությունների դեմ մղված պալքարում:

Դեռ Մարգսն և ասելի թե պրոլետարիատը, վորակեսղի կարողանաւ նոր աշխարհ կառուցել, պիտի հաղթահարե իր իսկ բնավորությունը իհարկե, մեր հեղափոխության ընթացքում, շահագործողների գեմ մզվող դասակարգային կատաղի պայքարում, սոցիալիստական շինարարության ընթացքում բանվոր դասակարգն ու աշխատավորությունը հաղթահարում են իրենց բնավորությունը, ազատվում են հին աշխարհի ցեխից: Բայց այս նոր, սոցիալիզմի իսկական կառուցաղի սահղագործության պրոցեսը պիտի ամբողջանա բուրժուական ու մանր-բուրժուական գաղափարախոսության, սովորութների, վարժումների, պատկերացումների և նախապաշտարումների գեմ գիտակից պայքարով: Այս պայքարը կուլտուրական հեղափոխության ամենից ելական ելեմենտներից մեկն եւ Այդ պայքարն առանձնապես կարենոր և ներկայումս, յերբ ուժեղացնում ենք մեր գրոհը՝ գյուղի ու քաղաքի կապիտալիստական ելեմենտների վրա և յերբ սրանից բավելով, մեր թշնամիները—կուլակները, մասնավոր առեւրականները և այլն, աշխատում են ավելի ուժեղ գիմազրություն ցույց տալ պրոլետարիատի գրոհին: Սա ելական ու բաղկացուցիչ մասն և կոմոմոլի գաստիարակչական աշխատանքի, վոր սոցիալիզմ կառուցողների նոր ու թարմ կազմեր և պատրաստում:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչու պիտի վերակառուցել աօխատավորության կենցաղը:

2. Ի՞նչ կարող ե անել կոմսոմոլը գյուղում—գուղացությունը վերակառուցելու համար:

#### ՊԱՅՔԱՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գիրուրյունն ե այն հիմքը, վորի վրա կառուցում ենի կուլտուրական հեղափոխության ժենքը: Առանց ազգաբնակության գրագիտուրյան չի կարելի փոխ ի տաեւ լուրջ խոսել կուլտուրական հեղափոխության մասին: Անգրագետ մարդը զիրք, լրագիր չի կարդալ, անգրագետն ամենահասարակ բաներ չի հասկանալ, անգրագետների մեջ ամենահասարակ տեխնիկական գիտելիքներ տարածելն անգամ անկարելի էն: Աշխատավոր ազգաբնակության գրագիտությունը կուլտուրական հեղափոխության առաջընթերն եւ Այս պատճառով ահազին նշանակություն ունի անգրագիտությունը վերացնելու աշխատանքը: Անգրագիտության

վերացումը աշխատավորականության ամենալայն շրջաններում զիտություն տարածելու սկիզբն եւ Անգրագիտության վերացմանը զուգընթաց պիտի յերեխաներեթ քննդիանուր պարտադիր ուսումը մացնել զպրոցներում։ Այս հսկայական կարմորություն ունեցող կուլտուրական միջոցը կիրարկելու նախապատճառությունը ներկայումս մեր կինտրոնական ուշադրության առարկան եւ, վորովհետեւ առանց այս միջոցն իրականացնելու, ազգաբնակության անգրագիտությունը վերջնականապես վերացնելն անկարելի է։

Գիտություն ձեռք բերելու գենքը— զբեր, կարդալը լուրացնելուց հետո, աշխատավորական մասսաներն այնունեան համեմատարար հեշտ կմանեն ընդհանուր կուլտուրական շարժման մեջ։ Գրագետ ազգարնակություն ունենալուց հետո ԽՍՀՄ աշխատավորության շրջանում գիտությունը մասսայականացնելու գործը վորոշ չափով կախված կլինի ալդ գործը կարող ու կանոնավոր կերպով կազմակերպելուց։ Հենց այժմ խորհրդադին կառավարությունն ու խորհրդադին հասարակականությունը ջանք են զնում, վոր անգրագիտության վերացման հետ միասին գրագետների շրջանում գիտությունը տարածելու և խորացնելու աշխատանք տարիի։ Այս նպատակին են ծառայում՝ Ռուսաստանում իր բաժանորդագնուով և հասկանալիությամբ ամենքին մատչելի «Рабочая газета»-ի և «Деревенская газета»-ի տարածելը, եժան զիտական-հանրամատչելի պարբերականների հրատարակությունը («Сам себе агроном», «Хочу все знать») և այլն, քաղաքական, գյուղատնտեսական ու տեխնիկական հարցերին նվիրված եժան դրաւուկիների հրատարակությունը։ Այս նպատակին և ծառայում նաև տարեցտարի ավելի ու ավելի ծավալվող ինքնակրթական աշխատանքի սիստեման, ինքնակրթական խմբակների կազմակերպումն, ինքնազարգացման ի բացակալի աշխատանքը, վորոնց ոգնության են զալիս համարյա ամեն քաղաքում զոյություն ունեցող կոնսուլտացիոն բլուրոները, հատկապես ինքնակրթությանը պարապողների համար հրատարակվող լրագրերը՝ «Учись сам», «Рабфак на дому», «Коммунистический университет на д. м.», շրջիկ հրանագիշների կազրերը, վորոնց պարտականությունն և բացատրել, թե ինչպես պիտի տանել ինքնակրթական աշխատանքը, սրա համար վորտեղից և ինչպես ոգնություն ստանալ։ Այս ամբողջ սիստեման մի նպատակ ունի.— զիտությունը մասսաներին հասցնել։ Խորհրդադին հասարակականու-

թիունն ել և աջակցում զրանու Հատուկ ընկերություններ են յերեան գալիս, վորոնց նպատակն է գիտելիքներ տարածել աշխատավորության լայն մասսաներում։ Աղդպիս են, որինակ, «Կոռչի անգրագիտությունը», վոր ոգնում և խորհրդային պետությանը՝ նրա պալքարում անգրագիտություն դեմ։ «Техника массам»-ը, վորի նպատակն է բանվորների ու գլուզացիների մեջ տեխնիկական գիտելիքներ տարածելը։ Այս ընկերությունը հրատարակում և պարբերականներ, բրոցուրներ, բաց և անում լարորատորիաներ ու արհեստանոցներ, վորտեղ կարող են սովորել ընկերության անդամները։ «Друзья радио» ընկերությունը լայն պրոպագանդ և անում մասսաների մեջ ելեքտրականության և կապի մեջ նրա գործադրության մասին գիտելիքներ տարածելու։ «АВТОДОР» ընկերությունը նույնպես պարբերականներ և հրատարակում, վորոնք ժողովրդականացնում են այնպիսի գիտելիքներ, վորոնք կապ ունեն ավտոմոբիլի, տրակտորի հետ, շուֆերներ, տրակտորիստներ պատրաստող կուրսեր և բանում և այլն։

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՅԻ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ պիսի վերացնել անգրագիտությունը։

2. Ինչպե՞ս կարելի յե սովորել գուղում։

#### ԿՈՄՍՈՄՈԼԸ ՑԵՎ ՊԱՅՔԱՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մասսաների մեջ զրագիտություն և գիտելիքներ տարածելու այս գործում աչքի ընկնող տեղ պիտի զրավի և զրագում և կոմսոմոլը, վոր այս աշխատանքը կազմակերպում և յերիտասարդության մեջ։

Աշխատավորության և յերիտասարդության հասարակ անգրագիտության կոմի գործում կոմսոմոլն առաջապահ զունդ և հանդիսանում Մեծ բազ կոմյերիտականներ են զբաղված բաղադրի յեվ զյուղի աշխատավորության անգրագիտությունը վերացնելու աշխատանքով։ Կոմսոմոլի վերջին VIL համագումարը վճռեց այս աշխատանքի վրա ավելի ևս ծանրանալի նա կոմսոմոլի շարքերից 1,000 մարդ ընտրեց հատկապես անգրագիտությունը վերացնելու գործով զբաղվելու, պարտավորեցրեց յուրաքանչյուր կոմյերիտականի առնվազն մեկ անգրագետի սովորեցներ, կարելուն չափ մեծ թիվ կոմյերիտականների ուղարկել մանկավարժական տեխնիկումները՝ նրանցից ուսուցիչներ պատրաստե-

լուս Համազումարը կոմսոմոլի յուրաքանչյուր բջիջի առաջարկեց յերիտասարդության միջից անգրագիտությունը վերացնելու հատուկ լիսպոր այն նպատակով, զոր վերջինիս միջոցով ստուգե բջիջի անդամների աշխատանքն անգրագիտությունը վերացնելու գործում և ուղղություն տա այդ աշխատանքին:

Կոմսոմոլը մեծ մասնակցություն և ընդունել ֆարբիկ-գործարանային աշակերտության և գյուղատնտեսական աշակերտության պարոցների կազմակերպման գործում: Այդ պարոցներում մատադ սերնդից պատրաստվում են՝ ֆարբիկաների, գործարանների և խորհրդային անտեսությունների վրակելալ աշխատանքների համար: Ներկայումս այդ պարոցների թիվը 1,025 և հաշվում, ուր 108 հազարից ավելի սովորողներ կան: Կոմսոմոլը հետեւմ և այդ պարոցների աշակերտության, ուսուցչության ընտրության, պարոցներում աշխատանքի վորակը բարձրացնելու վրա և այլն:

Կոմսոմոլի մոտավոր մասնակցությամբ աշխատանք և տարվում վորոշ կրթություն տալու այն պատանեկությանը, զոր գործուվ գրադարձ՝ չի կարողանում կանոնավոր կերպով գորոցներ հաճախել: Դրանց համար կազմակերպվում են արհեստակցական դասընթացներ, յերեկոյան դպրոցներ, յերեկոյան տեխնիկումներ, յերեկոյան բանֆակներ և համարաբաններ: Այս բոլոր պարոցներում սովորողների քանակի մասին կարելի է գտնել հենց նրանով, զոր միայն ամբողջ ԽՍՀՄ արհեստակցական դասընթացներում 162 հազար հոգուց ավելի է սովորում:

Այնուհետև գալիս են արհեստակցական դպրոցները, վորոնք ելքարումանտլորներ, յուզ հանողներ, տրակտորիստներ են պատրաստում, գյուղերիտական դպրոցները՝ ստեղծված կոմսոմոլի հարկագրական պահանջով: Ներկայումս այս վերջին տիպի դըպրոցների թիվը 780 և, ուր 68 հազարից ավելի յերիտասարդ գյուղացիներ են սովորում:

Յերեմն անմիջական մասնակցությամբ կոմսոմոլի, յերեմնել այնպիսի կազմակերպությունների միջոցով, ուր կոմսոմոլն անհատական գերն ունի, տասնյակ հազարավոր յերիտասարդ բանվորներ ու գյուղացիներ են ուղարկվում վուղերը, տեխնիկումներն ու բանֆակները՝ յուրացնելու այն գիտական ու տեխնիկական գիտելիքները, վորոնց մասին ասել և լենինը:

Յեզ վերջապես կոմսոմոլն ահազին քաղաքական-դաստիարակչական աշխատանք և տանում ինչպես իր շարքերում, այն-

սիս և բանվորական ու գյուղացիական լերիտասարդության չը-  
կազմակերպված լերիտասարդության շարքերում: Թաղդպարոցները,  
շարժական-դպրոցները, ընթացիկ քաղաքականությամբ հետա-  
քրքրվողների խմբակները, կուսակցության և կոմսոմոլի պատ-  
մությամբ հետաքրքրվողների խմբակները հարլուր հազարավոր  
լերիտասարդ բանվորներ ու գյուղացիներ են ընդգրկում: Յերի-  
տասարդության համար կոմսոմոլը 60 զանազան թերթեր և 25  
պարբերականներ և հրատարակում: Այդ լրագրերն ու պարբերա-  
կանները լուս են տեսնում ԽՍՀՄ-ում խոսվող ՀՅ լեզուներով:

Կոմսոմոլն իր վերջին VIII համագումարում մեծ տեղ և ու-  
շագրառված հատկացրեց լերիտասարդության ուսուցման ու գաս-  
տիարակության հարցերին Նա մի շարք վորոշումներ կայացրեց  
ժողովրդական կրթության սխստեմը վերակառուցելու մասին, այդ  
սխստեմը սոցիալիստական շինարարության պահանջներին հար-  
մարեցնելու, վուգերում և ահիճնիկումներում սովորողների սո-  
ցիալական ընտրությունը լավացնելու մասին և այլն:

Կոմսոմոլի լուրաքանչյուր կազմակերպություն, կոմսոմոլիս-  
տական լուրաքանչյուր րջիջ պիտի ձգտի գյուղական լերիտա-  
սարդության մասսաներն ավելի մեծ չափով ընդգրկելու կուլտու-  
րական կազմակերպություններով: Այս անհիճների մասին Վ. Ի.  
Լենինը կոմսոմոլին մատնանշել է գետ III համագումարում:

«Դուք շատ լավ եք հասկանում, վոր անդրագետ մարդիկ  
ելեքտրոֆիկացիալին չեն մոտենալ, և այստեղ միայն հասա-  
րակ գրադիտության մասին խոսելն ել քիչ եւ Այստեղ ելեքտրա-  
կանության ինչ լինելը հասկանալը քիչ եւ, պիտի գիտենալ նաև,  
թէ ի՞նչպես պիտի գործադրել այն արդյունաբերության, լեր-  
կրագործության և արդյունաբերության ու լերկրագործության  
լուրաքանչյուր առանձին ձյուղում: Այս բանն ինքներդ պիտի  
սովորեք ու սովորեցնեք մեծացող աշխատավորական մասսա-  
ներին:

«Ահա խնդիր, վոր ծառանում ե լուրաքանչյուր գիտակից  
կոմունիստի առաջ, լուրաքանչյուր լերիտասարդի առաջ, վորն  
իրեն կոմունիստ և համարում և պարզ գիտակցում ե, թէ կոմու-  
նիստական լերիտասարդական միության մեջ մտնելով, իր վրա  
պարտք և վերցնում ողնելու կուսակցությանը՝ կոմունիզմ կա-  
ռուցելու:

Վորքան կարելի յե շատ գիտուրյուն, վորքան կարելի յե  
շատ կուլտուրա բանվօրա-գյուղացիական լերիտասարդությանը.

այս և էնեինի ավանդք կոմսոմոլին: Յեվ այս ավանդի իշտագործումը մեկն և այն խուզավագույն յեվ ամենալուրջ խնդիրներից, վրանի ծառանում են կոմսոմոլի առաջ:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Ա. Է՞նց կարող և անել ձեր բժիշկը զուղարկան յերիտասարդուրյան մեջ գիտելիքներ առաջար:

### ԳԱՅՔԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ

Աշխատավորական մասսաների շրջանում զիտելիքներ տարածելուց բացի, կուլտուրական հեղափոխության կարերադույն խնդիրներից մինչ ել պայքարն և՝ աշխատանքի կուլտուրայի համար:

Վերը մենք արդեն խոսել ենք մեր կուլտուրականության մասին այդ ասպարիգում: Կոլեկտիվ կերպով աշխատել չկարողանալը, ժամանակի աննպատակ կորուսար (ինչպես ժողովների գալը), կանոնավոր կերպով աշխատել չիմանալը, կանոնավոր կերպով հանգիստ ու աշխատանք տանել չիմանալը, ռաշխատանքի սորդական թափը, անփութությունն ու անբարեխզգնությունն աշխատանքում, բյուրօկրատիզմը, ձգձգումներն—այս բոլորն արդյունք են աշխատանքի ժամանակ աշխատանքի այս անկուլտուրականությունը հսկայական վատնումի յեվ փոխիում, մեզ շատ թանգ և նստում: Կարողանալ աշխատել, կարողանալ կարեն ժամանակում շատ բան անել, այն ել ճիշտ, կանոնավոր յեվ պարզ, կարողանալ գործի մեջ յեղած թերուրյունները տեսնել յեվ խկույն ուղղել երանց—ահա քե ինչի պիտի նգտնենք մենք: Մենք մեր արդյունարերությունն ու գյուղատնտեսությունը սոցիալիստական ձևով ենք կառուցում: Մենք մեր յերկիրն ինդուստրիալիզացիայի լինք մենք իններկում: Մենք ձգտում ենք մեր արդյունաբերությունը և մեր գյուղատնտեսությունը կառուցել նորագույն տեխնիկայի հիմունքներով: Իսկ յեթե աշխատանքի անկուլտուրականությունը մեզ միշտ հաղթահարե, յերկրի ինդուստրիալիզացիան կկաղի, կղանդաղի, նրա հետեւանքները շատ դանդաղ կերեան:

### ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՈՒՄԸ

Կուլտուրական հեղափոխության պլանի մեջ մտնող խոշորագույն խնդիրն աշխատավոր մասսաների կենցաղի կուլտուրակա-

նուքյան համար մղվող պայքարն և հանգիսանում։ Անկուլտուրա-կանությունը բռն և զրել կենցաղում։ Մենք կուլտուրապես ապ-րել չգիտենք։ Կենցաղի պայմանները ձնշում և սորբկացնում են կահանց։ Կինը հաճախ և ծանրաբեռնված ընտանեկան գործե-րով, համարյա միշտ հանդիսաւ չունի, վոչ ել հասարակական աշ-խատանքը տանելու հնարավորություն։ Նաև ժամանակ չունի իր գիտելիքները լրացնելու կենցաղի անկուլտուրականությունը պատճառ և գառնում էրեխտաների սխալ դաստիարակվելուն, մա-տաղ սերնդի այլանդակվելուն։ Նրան մի շարք վիասակար ու ան-պետք սովորություներ, նախապաշարումներ պատվաստելուն և այլն, մի խոսքով՝ մենք զեռ կուլտուրապես ապրելու շնորհքից զուրկ ենք։ Խոկ կենցաղային անկուլտուրականությունն ազգում և մեր կուլտուրալի ընդհանուր մակարդակի վրա, աշխատանքի կուլտու-րալի վրա և այլն։

Կենցաղը վերակառուցելու համար մղվող պալքարն ամենից զժվարն է, զորովհետև կենցաղային սովորութներն անչափ ու-ժեղ են։ Անհրաժեշտ և, վոր կուլտուրական կենցաղի հենակետեր ստեղծվեն և հենց արդարացնեց ել զրոհ տրվի հին կենցաղի վրա։ Ստեղծել հասարակական բազանիքներ, մասունքներ լերեխտաների հա-մար, ամրուլատորիաներ, հանգստան տներ, մանկապարտեզներ, մանկական հրապարակներ, բանջարանոցներ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, — սովա ին այդ հենակետերը, վորտեղից ել պար-քար պիտի սկսել հոգուտ նոր կենցաղի։ Կենցաղի կոլեկտիվաց-ման և կուլտուրականացնելու պալքարում կոմսոմոլը շատ բան կարող ե անել։ Յուրաքանչյուր կոմիերիտական կարող ե և պետք է հենց իրենից, իր ընտանիքից սկսի։

Կոմսոմոյն առանձին ուշազբություն պիտի նվիրի լերիտա-սարդության կենցաղին։ Պալքար հարբեցողության, ծխելու գեմ, պալքար խուլիգանության, սեռական անժութկալության և այլ կենցաղային աննորմալությունների և թերացումների զեմ—ընդ-հանրապես կոմսոմոլի աշխատանքի բաղկացուցիչ մասերից մեկն ե։ Պրոպագանդ ու կազմակերպումն ֆիզկուլտուրալի, խելացի հանգստի, կրանքի՝ առողջապահական պայմանների և այն, այս ամենը միաժամանակ նաև պալքար և հոգուտ կուլտուրական կեն-ցաղի, հոգուտ առողջ ու կուլտուրական լերիտասարդության։

## ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք հաճախ ենք լսում, ինքներու ել ասում ենք, թե մեր ԽՍՀՄ տնտեսապես յիտամաց լերկիր եւ Յեղ սա ճիշտ եւ Հարկավոր ե լավ զիտել մեր ժաղավարդական տնտեսությունը և կհամոզվենք նրա յիտամացության մեջ:

Վերցնենք մեր գյուղատնտեսությունը: Մեր լերկիր տասնկակ միլիոն մարդկիկ աշխատում են գաշտերում, արոտներում, բանջարանոցներում, և այդ մարդկանց աշխատանքի արդյունքը շատ ե փոքր: Համեմատենք, որինակ, ԽՍՀՄ գաշտային բերքատվությունն ուրիշ լերկրների բերքատվության հետ: Մեզնում հաճարը մի գեպատօնից միշին թվով 53 փութ ե ստացվում, այնինչ Անգլիայում նա տալիս ե գեպատինից 150 փթից ավելի, Բելգիայում 130 փ. և այլն: Յեղ ինչու միայն գաշտավարության մեջ՝ անասնապահության մեջ, կաթնառնտեսության մեջ՝ նույնպես՝ աշխատանքի արագրողականությունը մեզնում ավելի պակաս ե, քան ուրիշ լերկրներում: Յեղ այդ նրանից չե, վոր այնտեղ հողն ավելի լավ ե, քան մեզնում: ԽՍՀՄ հողն իր վորակով վոչ միայն վատ չե, այլև շատ տեղ ավելի լավ ե, քան ուրիշ լերկրներում: Իսկ մեր գյուղացին աշխատում ե առավոտից մինչև լերեկո, այնպես վոր ծովության մեջ նրան մեղաղբել չի կարելի:

Ուրեմն ի՞նչն ե պատճառը: Պատճառն այն ե, վոր մեր լերկիր նախկին տերերը, կալվածատերերը, կապիտալիստներն ու նրանց իշխանությունը—ցարական ինքնակալությունը—անխնա կերպով կողոպտում ելին գյուղի աշխատավորությանը: Տնտեսությունը բարվոքելու վրա գյուղացին վոչինչ չեր կարողանում ծախսել, վորովհետեւ հարկերը, կապալը, մնացած բոլոր տուրքերը վճարե-

լուց հետո հազիվ հազ կարողանում եր մինչև յեկող բերքը քաշ տալ, կուլակը, առետրականը, վաշխառուն ամեն կողմից պաշարում ելին գլուղացու տնտեսությունը, Գյուղացիների միայն ան-նշան վերնաշերտերն ելին աճում, շունչ քաշում. մնացած մասսան քայլացիում եր Այս դրությամբ տնտեսությունը լավացնելու մասին մտածել անգամ չեր կարելի Այս պատճառով դաշտերը մշակվում ելին արորով կամ խղճուկ գութանով: Գյուղացիք տրակառի մասին գաղափար չունելին: Հողը պարարտացնում ելին միայն աղբով, վոր այնքան քիչ եր Արհեստական պարարտացման մասին զյուղացին վոչ մի հասկացողություն չուներ: Խոտացանությունը միայն ուժեղ կուլակային տնտեսություններին եր մատչելի: Շատ վատատեսակ ու սակավույժ անասուններ ելին պահում, վորի տված միսը, կաթը, նույնիսկ աղբը քիչ եր չին ժամանակից ահա այս աղքատությունը մեզ բաժին մնաց: Հենց զրանով ել պիտի բացատրել այն հանգամանքը, վոր զյուղատնտեսության մեջ զրած աշխատանքը մինչև որս ել քիչ արդյունք ե տալիս, քիչ ե արդյունավետ: Իսկ աշխատանքի պահաս արդյունավետության հետ կապված ե նաև տնտեսական լիտամնացությունը:

Ցարական կառավարության, կալվածատերերի ու կապիտալիստների կատարած կողոպուտը զուգակցվում եր գյուղացու խղճուկ գրագիտության, պակաս կուլտուրականության հետ, վորովհետեւ ցարական կառավարությունն այն կարծիքի յեր, թե ցարական իրավունքի լավագույն հենարանը ժողովրդի խավարն ու տղիտությունն են: Վերջապես մեր գյուղատնտեսության լիտամնացության գլխավոր պատճառներից մեկն ել այն ե, վոր հողային մակարդակը բաժան-բաժան ե արված միլիոնավոր մանր ու ամենամանր հողամասերի, տնտեսությունների, վորի հետեանքն ե գյուղատնտեսության ապրանքայնության թույլ զարգացումը և այլն: Այս բոլորը, վորպես ծանր բեռ, կախված ե մեր տնտեսության վրա, կասեցնում ե նրա զարգացումն ու պահպանում լիտամնացությունը:

Մեր ժողովրդական տնտեսության մի այլ մեծ մասում— արդյունաբերության մեջ ես մենք յետ ենք տեխնիկապես՝ համեմատած կապիտալիզմի ավելի զարգացած յերկրների հետ: Որինակի համար վերցնենք մի գործարան: Մոսկվայում գոյություն ունի ԱМО գործարանը, ուր ավտոմոբիլներ են պատրաստում: Մոտերքում այս արտադրության հետազոտումը տեղի ունեցավ՝

պարզելու, թե վորքան ժամանակ և անցնում, մինչև լերկաթի՛  
հանքից ձուրած պողպատան ալս գործարանում համապատասխան  
վերամշտկման լենթարկվելուց հետո ավտոմոբիլ և գառնում: Հե-  
տագոտությունը պարզեց, վոր հանքի հարվածքից մինչեւ պատ-  
րաստի ավտոմոբիլի լերեալին անցնում է  $8\frac{1}{2}$  ամիս իսկ Ամերի-  
կայում նույն աշխատանքը կատարվում է  $5\frac{1}{2}$  որում: Այս մեր  
արդյունաբերական լետամնացության մի որինակ այնպիսի գոր-  
ծում, ինչպիսին ավտոմոբիլների արտադրությունն եւ ճիշտ և  
արդյունաբերության ուրիշ ճյուղերում լետամնացությունն ար-  
պիսի չափերի չի հասնում, բայց և այնպես նա կա և զոյտություն  
ունի արտադրանքի համարյա բոլոր ճյուղերում՝ իրեն ժառանգու-  
թյուն հին, մինչհեղափոխության ժամանակից մնացած:

Կապիտալիստը ֆարբիկա իր կառուցում: Վորպեսզի այդ  
ֆարբիկան մեծ արգյունք տար, հարկավոր եր ֆարբիկան լավ  
մեքենաներով սարքավորերի և ավ մեքենաները թանգ արժեն: Կա-  
պիտալիստին վաստակը շահ և հարկավոր, և լեթե նա մեծ շահ  
կարող և ստանալ նաև վատ կահավորած ֆարբիկալիցից, նա թան-  
գարժեք մեքենաներ չի գնիր Կապիտալիստը հաշվում, տեսնում  
եր, վոր վատ սարքավորումով ել կարելի լու լավ աշխատել հա-  
րստանար Պետք և միայն ավելի ուժեղ սեղմել բանվորին:— Նրան  
կարելուն չափ քիչ վճարել, ստիպել, վոր գորքան կարելի լու շատ  
աշխատի. այդ դեպքում ֆարբիկան վատ սարքավորումով ել հար-  
կավոր վաստակը կտա: Նախահեղափոխական շրջանում կապիտա-  
լիստը հեշտ կարող եր իր հաշիվները կառուցել բանվորից քամած  
քրտինքի վրա: Յեթե բանվորը համառորեն ընդդիմանում եր, կա-  
պիտալիստին ոգնության ելին գալիս վոստիկանությունը, ժան-  
գարմները, դատավորները: Գլուղի շերտավորումը, գլուղական չքա-  
վորության ծանր նյութական դրությունը գործազուրկների ահա-  
գին բանակներ ելին քաղաք քշում: Նրանց չքավորությունը չա-  
փազանց եժանացնում եր բանվոր ձեռքը: Մեծ հաշիվ չկար ա-  
վելի կատարելագործված մեքենաներ մուծել, ինչպես եր մի շարք  
բուրժուական լերկրներում, հատկապես Ամերիկայում, վորտեղ  
բանվոր ձեռքը շատ թանգ եր: Այդ պատճառով ել մեր արդյու-  
նաբերությունը զարգանում եր ի հաշիվ բանվորի զաժան շահա-  
գործման, իսկ տեխնիկապես լետամնաց եր, վատ սարքավորված:

Նախկին իրավակարգից մեզ ժառանգուրյուն մնացած  
անօնական լետամնացությունը մեր լերկրում սոցիալիզմ կա-  
ռուցելու գլխավոր դժվարությունն ե: Սոցիալիստական տնտե-

սությունը կտրված չե, մաս-մաս լեզած չե, այլ միասնական տընտեսություն, հասարակականացրած տնտեսություն եւ Սոցիալիստական տնտեսության մեջ առանձին տերեր չկանու Այնտեղ տերը բոլոր աշխատավորներն են: Նրանք այս հասարակական տնտեսության մեջ աշխատում են բոլորը միասին և աշխատանքի արտադրած բարիքից ստանում են իրենց համար անհրաժեշտը: Մի կողմէ թուզներով բոլոր մյուս դժվարությունները, տեսնենք, թե մեր լետաթեագ տնտեսությունը կարգ և բոլորին բավարարել ամեն տեսակ անհրաժեշտ միերքներով: Բոլորը զիտեն, վոր մեզանում, ԽՍՀՄ-ում, գեր ապրանքալին սով ե, այսինքն լայն գործածության առարկաների պակաս ե:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՍՏՐ

Ա. Կնշո՞ւ յե մեր արզունաբերությունը յետ մնացել:

ԽՍՀՄ-ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հարց ե ծագում, թե ինչպես կարող ենք հաղթահարել սոցիալիզմ կառուցելու ալս հիմնական դժվարությունը—մեր տնտեսական լետաթեացությունը:

Այս հարցին պատասխանելու համար ուշադրությամբ զիտենք տնտեսության այն առանձին տեսակներն ու ձերք, վորոնք ներկայումս գոյություն ունեն մեր լերկում: ԽՍՀՄ խուլանկուններում, վորոնք հեռու յեն ընկած քաղաքներից ու առետրա-արդյունաբերական կինտրոններից, լերկաթուղարքից հարցուրավոր վերստեր հեռու այնպիսի տնտեսությունների կարող ենք պատահել վորոնք նատուրալ կամ բնական անունն են կրում: Այս տնտեսություններն աշխատանքալին են, բայց չափազանց լետաթեաց: Ինչ վոր արտադրում, իրենք ել սպառում են, շուկայի հետ համարյա վոչ մի կապ չունեն: Այսպիսի տնտեսության մեջ աշխատավորներն իրենք են իրենց հացը ձեռք բերում, իրենք են իրենց անդրջրնեղեղյան գործիքները շինում, հագնում են տանը գործած կտորներ, իրենք իրենց վունամաններն են պատրաստում, խրձիթները լուսավորում են մարիսով (ծլանդ) կամ կանթեղով և այլն: Այսպիսի տնտեսության մեջ աշխատանքը չափազանց սակավ արտադրողական ե, տված արդյունքը չնշին ե:

Մի փոքրիկ որինակ կարող ե հաստատել մեր ասածը: Այսպիսի տնտեսության մեջ աշխատող մեկին սովորական վարուիք և հարկավոր: Դրա համար 3—4 ֆունտ վուշի մանած և պետք:

Յեթև մանածն ալզպիսի տնտեսության մեջ նույնիսկ վոչ թե իլի-  
կով, այլ ջահրայով են մանում, այնուամենախիվ արդ 3—4 ֆուն-  
տի համար առնվազն 3—4 որ անընդհատ պիտի աշխատել: Իսկ  
ֆարբիկայում մի բանվորուհի մեքենայի ողնությամբ 3—4 բան-  
վորական որգա ընթացքում 150—200 ֆութ մանածն ե պատրաս-  
տում: Տվյալ որինակից պարզ տեսնում ենք, վոր ալզպիսի տնտե-  
սության մեջ աշխատանքը 2 հազար անգամ պակաս ե տալիս,  
քան մեքենայի աշխատանքը: Տնտեսական յետամացությունը  
հաղթահարելու համար այսպիսի տնտեսությունները պիտի վե-  
րակառուցեն: ԽՍՀՄ-ում այլ տիպի տնտեսություն ես կատ: Դա  
այսպես կոչված պարզ ապրանքային տնտեսություն ե: Դրան որի-  
նակ կարող ե ծառայել այն միջակ գլուզացու սովորական տնտե-  
սությունը, վոր վարձու աշխատանք չի կիրառում: Այդ տնտեսու-  
թյունն ապրանքային ե կոչվում, վորովհետեւ նա կապ ունի շու-  
կայի հետ: Այս տնտեսության արտադրած մթերքների մի մասը  
վաճառվում ե շուկալում, իսկ ստացած փողավ այնպիսի արգու-  
նաբերական ապրանքներ են գնվում, վորոնք անհրաժեշտ են  
տնտեսությունը վարելու և այդ տնտեսության մեջ աշխատողնե-  
Մենք արդեն զիտենք, թե կապիտալիստական լերկրներում հարսառության ու չքավորության այս հակադրությունն ինչո՞ւ կա և ինչպես և զարգանում: Դա նրանից և առաջանում, վոր հողերը, ֆարբիկաները, գործարանները, մեքենաները, մեծ շենքերը, շոգենավերը, լերկաթուղիները և այն սակավաթիվ հարուստների յին պատկանում: Այս հարուստների համար միլիոնավոր մարդիկ են աշխատում՝ վարձով, մի կտոր հացի համար: Այն բոլորը, ինչ վոր ստացվում և այս վարձկան բանվորների խղճուկ որավարձից ավելի, զնում և հարուստ-կապիտալիստների զրպանը, վորպես նրանց «լեկամուտ»: Հոկալական գործարաններից, կատարելագործված մեքենաներից, արտադրության լավացը առաջած ամբողջ շահը բաժին և ընկնում կապիտալիստների չընշին խմբակին, իսկ բանվորներն այդ հարսառությունից միայն փշրանքներ են ստանում, վորպեսզի կիսաքաղց կյանք քարշ տան:

Հարյուրավոր, հազարավոր, տասնյակ հազարավոր բանվորներ են աշխատում մի ֆարբիկալում, մի զործարանում, կալվածատիրոջ խոշոր կարմածքում: Մի զործում աշխատանքի այսպիսի միավորումը, մեքենաների և արտադրության բարելաված ձեւերի կիրառումը խիստ և բարձրացնում աշխատանքի հաջողությունն ու գործի արտադրողականությունը: Բայց աշխատանքի այս արտադրողականությունից ստացած շահը բաժին և ընկնում վոչ թե բանվորներին, այլ դարձլաւ կապիտալիստների փոքրիկ խմբակին:

Ի՞նչ ունեն բանվորները կապիտալիզմի ժամանակ և ի՞նչ են ստանում բուրժուական իրավակարգի որով: Զափազանց քիչ բան: Ամենորյա ծանր աշխատանք, չնշին աշխատավարձ, անապահով ընտանիք, անզործ ֆեալու և սովամահ լինելու հավիտե-

նական սպառնալիք: Մրան կարելի լի ավելցնել նաև բանվորի մշտական անգոնությունն իր ծանր վիճակից և նրա ատելությունը դեպի կապիտալիստները, վորոնք առըռում են այդ բանվորի ծանր աշխատանքով: Կարճ ասած—կապիտալիստական իրավակարգը բանվորին սովի շղթաներ և հազցնում և այդ շղթաներով նրան ծանր, մաշիչ աշխատանքի լի կապում: Յեթե նա վոչնչանա, բանվորը վոչինչ չի կորցնել, բացի իր ողբաներից:

Այս, թե ինչու բանվոր դասակարգում հեշտ են հող գտնում այնպիսի հալացքներ, վորոնք պահանջում են կապիտալիստական իրավակարգը նորով, կոմունիստականով փոխարինել: Առաջադիմ բանվորները համոզվում են, վոր ժողովրդական չքայլությանը վերջ դնելու միակ միջոցը բուրժուական իրավակարգը վոչնչացնելը և կոմունիստական հասարակությունն հաստատելու և՝ կարվածաերերից խել նրանց կարվածները, կապիտալիստակարից՝ Փարբիկաները, գործարանները, յերկաթուղիները, բանկիրներից՝ նրանց դրամական կապիտալը, վերցնել մասնավոր սեփականությունը և արտադրության միջոցները (Փարբիկաները, գործարանները, հանքերը, հողերը և այլն) դարձնել ընդհանուրի սեփականություն: Այդ ժամանակ ընդհանուր աշխատանքից, մեքենաներից, արտադրանքի բարելաված միջոցներից ստացած արդյունքը կդնա ամբողջ բանվոր դասակարգի և աշխատավորության ոգտին: Այն ժամանակ բանվորների աշխատանքի տնօրինողները վոչ թե կապիտալիստները կլինեն, այլ բանվոր դասակարգը և նրա ընտրալները: Այն ժամանակ հարստությունն ավելի արագ կանի, վորովհետև կաշխատեն բոլոր աշխատանքի ընդունակներն, այն ել՝ վոչ թե կապիտալիստների խմբակի, այլ իրենց համար: Այն ժամանակ այդ քննիանուր հարստության աճման հետ միասին աշխատավորության կանքն ավելի արագ ու անընդհատ կլավանա:

Կապիտալիզմը վոչնչացնելու և կոմունիստական հասարակությունն ստեղծելու համար պրոլետարիատը կապիտալիստական յերկրներում բուրժուազիայի դիմ համառ ու անընդհատ պայքար և մղում: Այս պայքարում նա չի ուզում կանգ առնել և կանգ չի առնիլ, մինչև չտապալի բուրժուազիայի իշխանությունը, ինչպես տապալից մեր յերկրի պրոլետարիատը. մինչև չվոչնչացնի բուրժուական սեփականությունը և չկառուցի սոցիալիզմը: Այս ահստակեալից բանվոր դասակարգը մինչեւ վերջը հեղափոխա-

կան ե: Պալքարի վերջնական նպատակի նկատմամբ վոչ մի տարրակուսանք ու տատանում չկա: Նա պալքարել ե ու պիտի պալքարի բուրժուազիայի դիմ—մինչև նրան հաղթելը:

ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչո՞ւ բանվուցեց պայքարում են կապիտալիստների գիմ:

2. Ի՞նչի վրա յե իիմնված կապիտալիստների սերապեսուրունը:

ՀԱՄԿԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱԾԻ ԱՌԱՋԱՊԱՀՆ Ե

Անընկճելի, հաջորդական ու վճռական հեղափոխականությունը բանվոր դասակարգի հիմնական հատկությունն ե: Այս հատկությունը նրանում մշակվում է կրանքի ու աշխատանքի այն պայմաններում, վոր նա ունի բուրժուական հասարակության մեջ: Բանվորը հեղափոխական չի ծնվում. նա արդարիսին դառնում է կապիտալիստի ֆարբիկայում տարիներ շարունակ աշխատելով: Կապիտալիստական շահագործութիւն ու ճնշումը բանվորից հեղափոխական են պատրաստում: Էստ իրենց հեղափոխական փորձի և դասակարգային պալքար տանելու կարողության, բանվորների մեջ տարբեր շերտեր կարելի յե տեսնել կանխական, արմատական բանվորներ, ծնված բանվորի ընտանիքում, փոքրությունից աշխատած կապիտալիստական ձեռնարկներում. դա բանվորների հիմնական շերտն ե, բանվոր դասակարգի ելական կմախքը, «տոնմական պատվավոր պրոլետարները», ինչպես լերբեմն կատակելով անվանում են նրանց: Սա զիտակից պրոլետարների շերտն ե, վոր շատ լավ և հասկանում բանվորների չքափորության պատճառները, վոր զիտե, թե բանվորներն ինչո՞ւ համար և ինչպես պիտի պալքարեն: Ավելի պակաս բանիմաց բանվորների շերտ կա, վոր այնքան ել լավ չի ըմբռնում շուրջը կատարվածը, վոր չզիտե՝ այն միջոցներն ու ճանապարհները, վորոնցով կարելի յե ազատվել կապիտալիստական ստրկությունից: Կան և այնպիսի բանվորներ, վորոնք գլուզից նոր են ֆարբիկա լեկել, կամ ֆարբիկայում սեղոնով են աշխատում: Սովորաբար նրանք գլուզում ունենում են իրենց տնտեսությունը, հողի կտորը, ագարակը, բանջարանոցը և այլն: Մոքա կես-բանվոր—կես-գլուզացիներն են: Դրանցից շատերը վոչ միայն չզիտեն, այլ չեն ել լսել, թե ինչ բան ե դասակարգային կոիվը:

Այսպիսով, ուրեմն, բանվոր գասակարգի ներսում զանազան շերտեր գործություն ունեն՝ իրենց գասակարգալին շահերի տարրեր ըմբռնումներով։ Այս պատճառով բուրժուազիայի զեմ մղած պալքարում կարող ե պատահել, վոր տարրեր շերտեր տարրեր ճանապարհով զնանու վոմանք ուղիղ ճանապարհի վրա կեանդնեն, վոմանք եւ անդիտակից լինելով, կարող են սալթաքել և սխալ ճանապարհի վրա կանդնել, ուր նրանց միան պարտություն կարող ե սպասել:

Ահա, վորպեսզի կարելի լինի խուս տալ ուժերի ալոպիսի բաժանումից, վորպեսզի կարելի լինի սեփական գասակարգի ուժերը միացնել՝ բուրժուազիայի զեմ միացած ու համերաշխ պալքարի համար, և վորպեսզի կարելի լինի բոլոր բանվորներին զիտակցության բերել, հասցնել նրա ավանդաբարդի աշխարհահանչացքին, առաջադեմ գիտակից բանվորները լավ հասկանալով, վոր աշխատավորության լելքը կոմունիզմի մեջ ե, կազմում են առանձին միություն—կուսակցություն։ Ուրեմն կուսակցությունը բանվոր գասակարգի առաջադեմ ու ավելի գիտակից մասն ե։ Նա անցնում է իր գասակարգի գլուխ ու զեկավարում նրա պալքարը—բացարում և ուղիղ ճանապարհ և ցույց տալիս նրանց, վորոնք սխալվում են, յետամնացներին առաջ և քշում, առաջվագողներին զսպում ե, գասակարգի ուժերը վարժեցնում, միացնում և բուրժուազիայի զեմ պալքարելու համար։

Դասակարգի անունից գուրս գալու իրավունք ով և տախո կուսակցությանը։ Այդ իրավունքը կուսակցությունը ձեռք և բերել իր պալքարով՝ բուրժուազիայի և առնասարակ բանվոր գասակարգի թշնամիների զեմ, բանվոր գասակարգին այդ պալքարում զեկավարելով։ Այդ պալքարի փորձով բանվոր գասակարգը տեսնում է կուսակցության նշանակությունը՝ վորպես գասակարգի առաջնորդի։

Մեր յերկրի առաջադեմ բանվորները վաղուց են արդպիսի կուսակցություն ստեղծել, վոր կոչվում ե Համամիութենական կոմունիստական կուսակցություն (բայլշեկիների)։

Համամիութենական կոմունիստական կուսակցությունն ստեղծվել է յերեսուն տարի առաջ, 1898 թվին. այդ թվին կազմվեց կուսակցության առաջին համագումարը։ Այդ ժամանակ նա կոչվում էր «Ռուսական սոցիալ-զեմոկրատական բանվորական կուսակցություն»։ Նա բաղկացած եր գիտակից հեղափոխական բանվորների և հեղափոխական ինտելիգենտների (սրանց թվում

եր նաև վ. ի. Անդրեյ) առանձին խմբերից, վորոնք անցել ելին բանվոր դասակարգի տեսակետին և ամբողջովին նվիրվել ելին բանվոր դասակարգին ու նրա գործին: Բանվոր դասակարգի պալքարը զեկավարելու այդ 30 տարիների ընթացքում շատ դասակարգավին՝ ճակատամարտեր ու կոփվարեր են տեղի ունեցել, ցտրական դահճճները՝ կարգածատերերի ու կազինալիստների հավատարիմ ծառաները՝ շատ բանվորների արյուն են թափել: Հարվածների ու հետապնդումների կարկուտի տակ, մտրակների շառաչի տակ, աքսորի, բանտի, տաժանակիր աշխատանքների, կախաղանի սպառնալիքի տակ, կուսակցությունն՝ առանց կորանալու, առանց գլուխ խոնարհելու տարել և բանվոր դասակարգին մի ետապից մշուսը՝ գեղի նպատակ:

Յեթե վերցնենք հիմնական հտապները, վորոնցով կուսակցությունը հաղթական կերպով հասցրեց պրոլետարիատին ու աշխատավորությանն այսորվա որին, յերեք հիմնական հտապներ կունենանք: Առաջին՝ ինքնակալության գեմ պայքարի ետապ: Յարական ինքնակալությունը, վոր գոյություն ունեցավ մինչև 1917 թվիը, ծանր կերպով ճնշում եր աշխատավորությանը: Լինելով կարգածատերերի և բուրժուազիայի հավատարիմ գործակատար, ցարական կառավարությունն ոգնում եր նրանց՝ ճնշելու պրոլետարիատին և աշխատավորական լայն մասսաներին: Իրավագուրիկ վիճակ, ծանր հարկեր, վոստիկանական հետապնդումներ, ազգերին իրար դիմ հանել, ջարդեր, կոտորածներ—ահա աշխատավորության բաժինն ինքնակալության ժամանակ: Մտածել անգամ չեր կարելի մարդաբայել գոյության, շահագործողների գեմ փոքրիշատե հաջող պալքարի մասին, քանի վոր վերջիներիս պաշտպանում եր լայն վոստիկանական-ինքնակալական թիկունքը: Պետք եր նախ ինքնակալական սեփմելը տապալելը Բանվորների 1905 թվի առաջին փորձը՝ տապալելու ցարական դահն, անհաջողությամբ վերջացավ: Յերկրորդ ճնշումը՝ 1917 թվին, հաջողությամբ պսակվեց: Ինքնակալական իրավակարգը տապալվեց: Ինքնակալության տապալումից հետո իշխանության գլուխ անցան կապիտալիստները, վորոնք ամեն կերպ պաշտպանում ելին իրենց բարեկամ կալվածատերերին: Կուսակցությունը բանվորության համար նոր նպատակներ նշեց, գեղի վորը պետք եր քայլ անել: Պետք եր հենց այժմ տապալել կապիտալիստների իշխանությունը: Յեվ կուսակցությունը յեռանդով ու անդադրում պատրաստեց պրոլետարիատին ու աշխատավորությանը: Նախա-

պատրաստությունը հաջող անցավ և 1917 թվի հոկտեմբերին կապիտալիստների իշխանությունը տապարվեց, բուրժուական պետությունը վոչչացավ։ Իշխանությունն անցավ պրոլետարիատին, վոր նոր, Խորհրդային պետություն հիմնեց։ Շահազործողների գեմ պալքարելու ճանապարհին լերկրորդ ետապն ել անցավ, մեաց թիկունքում։

Կուսակցությունը նոր պայմաններում պրոլետարիատին ու աշխատավորությանն առաջադրեց այն խնդիրը, վոր բանվորների ամբողջ պալքարի հիմնական նպատակն եր լեզելը։ Շահազործողներին տապալելուց հետո զրա համար ամեն տեսակ հնարավորություն ստեղծվեց։ Այժմ հարկավոր եր և կարելի էր այնպիսի պալմաններ ստեղծել, էր ալևս վոչ միայն անկարելի կլիներ շահազործողներին նորից իշխանության վերադառնալը, այլև ինքը շահազործումը։ Պետք եր այնպիսի հասարակություն, այնպիսի տնտեսություն ստեղծել, վոր մարդկանց հավասարեցներ վոչ թե բառերով, այլ գործով։ այսինքն այնպիսի, ուր դասակարգեր չլինեն, վորովհետեւ քանի գեռ գորություն ունեն դասակարգեր, անպատճառ գորություն կունենա նաև անհավասարությունը։ Պետք եր սոցիալիզմ կառուցել։ Սա պրոլետարիատի մղած պալքարի լերբորդ ետապն եր։ Այս բոպելիս մենք այս ետապով ենք անցնում։ Մեր լերկրի պրոլետարիատն ու աշխատավորությունը կուսակցության ղեկավարությամբ սոցիալիզմ են կառուցում։ Յեզ այս աշխատանքում, ինչպես և միշտ, կուսակցությունն առաջից ե գնում։ Այս աշխատանքում ևս նա որինակ ե ցուց տալիս։

### ՀԱՄԿԵ Ի ԿԱԶՄԸ

Յերբ ասում ենք, թե կուսակցությունը բանվոր դասակարգի կուսակցություն ե, թե նա ղեկավարել ե բանվորների պալքարը, թե նա պալքարել ու պալքարում ե բանվոր դասակարգի շահերի համար, սա բնավ չի նշանակում, թե նա գործ չունի մեացած աշխատավորության (աշխատավոր գորուղացիության, տնայնագործների և այլն) շահերի հետ։ Կուսակցությունը լերբեք այն տեսակետի վրա չի կանգնել, թե՝ այ, սա մեր, բանվորական գործն ե, իսկ մեացած աշխատավորության հետ մենք գործ չունենք։ Ըսդհակառակը—ալղպիսի տեսակետի գեմ կուսակցությունը միշտ պալքարել ե, ալղպիսի տեսակետը միշտ ժխտել ե։ Ինչպես աշխատավորներ—գլուղացիք, մանը արհեստավորները։

տնալնագործները և այլն - կապիտալիզմի ժամանակ լինթակա լին լեզել խոշոր կապիտալի շահագործմանը, ինչպես աշխատավոր-ներ նրանք շահագործոված են, վոր նրանց չշահագործեն: Այս ոլատճառով նրանք բանվորների հետ միասին կարող են պայքա-րել շահագործողների դեմ: Կուսակցությունը միշտ ձգտել է միաց-նել բոլոր աշխատավորների ուժերը՝ բանվոր դասի ղեկավարու-թյամբ պայքարելու շահագործողների դեմ: Նրանց պայքարով ոլրութարիատը վոչ միայն կենդանի կերպով հետաքրքրվել ե, այլև միջամտել և արդ պայքարին, միտե աշխատավորության կողմը բռնւլով՝ ընդդեմ շահագործողների:

Կուսակցությունը ձգտել է, վոր բանվորները կովին գլու-դացին րի հողի համար, գլուղից կարվածատերերին արտաքսելու համար, հարկերը պակասեցնելու համար, բարյոր աշխատավորու-թյան քաղաքական իրավունքների համար, ձնշված աղքերի ա-դատագրման համար և այլն: Ցեվ պրոլետարիատի հաղթանակից հետո յել կուսակցությունը շահագործման ու ճնշման դեմ մղած պայքարում միացնում ե մեր յերերի աշխատավորությունը և նրա ջանքերն ուղղում ե գեղի սոցիալիզմի կառուցման հունը: Աշխա-տավորները հետզհետև համոզվեցին, վոր կուսակցությունն իրենց ուղիղ ճանապարհով և տանում, վոր նաև պայքարի ուղիղ միջոց-ներ և ընտրում: Դանդաղ ու աստիճանաբար կազմվում ե պրո-լետարիատի ու գլուղական հիմնական մասսաների և մլուս աշխա-տավորության միությունը, և այս՝ կուսակցության ղեկավարու-թյամբ: Լայն աշխատավորական մասսաները դանդաղ ու աստի-ճանաբար կուսակցությանը հավատացին պայքարի ղեկավարու-թյունը, — անսահման հավատի զգացմունքով դեպի այս միութ-յամբ մարտիկը:

#### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչո՞ւ յե կուսակցությունը հարկավոր բանվոր գասա-կարգի 6:

2. Ի՞նչու յե կովում բանվոր գասակարգը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ Ե ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Աշխատավորության պայքարի և սոցիալիստական շինա-րարության ղեկավարությունը կուսակցությունը տանում և աշխա-տավորության մասսայական կազմակերպությունների միջոցով: Մլպակիսի կազմակերպություններից կարենքադույնն են՝ արհես-տակցական միությունները, խորհուրդները և կոռպերացիան:

Բայց մասսաներին դեկավարելու համար նրանց հետ պիտի կապված լիներ «Կուսակցությունն»—առում և Վ. Ի. Լինինը,—պիտի սուսպի ամեն քայլում մանրագննին և որդեկափ կերպով, մասսաների հետ կապ պահպանվում ե, թե վոչ, արդոք կենդանի յե նա»:

Կուսակցության կապը մասսաների հետ ամենից առաջ կենդանի կապ պիտի լինի: Կուսակցությունն իր ամբողջությամբ, և կուսակցական մարմիններից լուրաքանչուրն առանձին, ուզած վայրկանին պիտի զիտենան, թե աշխատավորական մասսաներն «ինչով են ապրում ու չնշում»: Նրանց ինչ և հետաքրքրում, ինչ հուզում, ինչ խնդիրներ ու պահանջներ են առաջարկում: Ազսպիսի կենդանի կապ, կուսակցության կապ մասսաների հետ, կիրագործվի միայն այն ժամանակ, իբր կուսակցությունը մասսաների հետ կապրի մի բնդիկաննուր կյանքով, իբր նա չի կարգի նրանցից, չի փակիլի իր պատյանում, չի մեծամատիլ, նրանց վրա վերից չի նայիլ, իբր կուսակցությունն ապրում ու իրեն իբրեւ մասսայի մի մասն և զգում: Այդ ժամանակ աշխատավոր մասսաներն ել իրենց չեն բաժանիլ կուսակցությունից իրենք իրենց չեն հակազրիլ կուսակցությանը, կուսակցության վրա վորպես մի կողմանիկի բանի վրա չեն նայիլ այլ իրենց մասը կշանին: Մեր կուսակցությունը գիտե կապ պահպանի մասսաների հետ: Նույնիսկ ուսակցիայի և ընդհատակյա աշխատանքների ժամանակ, մերը իր թվով՝ փոքրիկ կուսակցություն եր, մասսաների հետ կապվելու և նրանց պատքարը զեկավարելու իր կարողությամբ նա խկական մասսայական կուսակցություն եր: Կուսակցության մասսաներից կարգած լինելը մեծ վտանգների հետ և կապված:

Բոլորին հայտնի յե ազմուկ հանած «Ամոլինսկի գործը»: Ամոլինսկի նահանգում կուսակցության վերնաշերտը կարվեց մասսաներից, խրվեց քաղքենիության մեջ: Մասսաներն իրենց կյանքով հիմն ապրում, կուսակցական կազմակերպությունն—իր Հետզեհետե կուսակցական զեկավարությունը խուլ հանդիսացավ նահանգի բանվորական ու զյուղացիական մասսաների շահերի, խնդիրների, բողոքների ու պահանջների նկատմամբ: Խորհրդացին ապարատը լցվեց, ազտոտվեց սոցիալիստական շինարարությանը խորթ բուրոկրատական և կուլակային տարրերով: Նրանց և նահանգի կուլակային-նեպմանային ելեմենտների մեջ «կատ» հաստատվեց: Հետևանքն այն լեղավ, վոր նույնիսկ կալվածատերերին իրենց ստացվածքից արտաքսելու Խորհրդավին իշխանության որենքը չկիրառվեց: Կուլակները շատ գեպքերում խոր-

Հուրդների մեջ սովորելու համար ավելի առավելություններ ունելին, քան չքավորությունը և այլն:

Այսպիսով կուսակցությունը կարող և իրականացնել բանվոր դասի մասսաներին, նրանց միջոցով ել բոլոր աշխատավորներին զեկավարելու գործը, վորովհետեւ կարողանում է սերտորեն կատվել նրանց հետ՝ առանց իր պատկերը կորցնելու, կարողանում և մասսաների կուսակցություն դառնույթի միաժամանակ՝ առանց նրանց պոչում քաշ պալու:

Առանց իր շարքերի չերկաթե դիսցիպլինալի կուսակցությունը չեր կարող մասսաներ զեկավարել: Այդ դիսցիպլինալի հիմք կազմում են՝ կուսակցության լուրաքանչյուր անդամի անհախընթաց նվիրվածությունը բանվոր դասակարգի շահներին, մասսաների հետ ունեցած կապը, մասսաներից պաշտպանված շինելը, վերջապես կուսակցության ճիշտ քաղաքականությունը, ձըշտած յերկար ու ձիղ տարիների պայքարով ընդդեմ բանվոր դասակարգի բոլոր թշնամիների:

Մայոլենսկի կուսակցական կազմակերպության վերնաշերտը, վոր կորված եր մասսաներից, խուլ եր մնում: — Նա չեր տեսնում այս յերեւլիթները, չեր տեսնում մասսաների զմդոհությունը: Մայոլենսկի նահանգի գործերի զրությունն իր վրա հրավիրեց կուսակցության կենտրոնական Կոմիտելի ուշադրությունը, վորն ստիպված չեղավ մի լավ թափահարել սամոլենսկյան կուսակազմակերպությունը, զտման յենթարկել նրան և ոգնել, վոր նորից կապվի մասսաների հետ:

Ուրիշն կուսակցության կտրված լինելը մասսաներից տում և դեպի դասակարգային թշնամու աշխուժացումը, մի կողմ թողած, վոր այդպիսի կտրվածությունը կործանիչ կերպով և աղդում իրեն՝ կուսակազմակերպության վրա: Մասսաներից կարված կուսակազմակերպությունը հեշտ և յենթարկվում ամեն տեսակ հիվանդությունների, նրանում զարգանում ու բռն են դնում հ բրնձություն, բուրողատիզմ, քարքարություն և այլն:

Կուսակցությունն աշխատավորության հետ ընդհանուր կլանքով պիտի ապրի: Թայց այս չի նեանկում, քե կուսակցությունը պիտի ծասսաների հետ յավ իր պատկերը կորցնի, քաշ գա մասսաների պոչում: Կուսակցությունը կենդանի կապ պիտի ունենա մասսաների հետ, վորպեսզի դեկավարի նրան, կազմակերպի նրա ուժերը՝ սոցիալիստական շինարարության և շահագործողների դեմ պայքարելու համար:

Կուսակցությունը զեկավարում ե, ուրեմն չի կարող և չպետք է մասսաների պոչում մնա: Այս զրուցի սկզբում մենք արգեն ասել ենք, վոր նույնիսկ բանվոր դասակարգում շերտեր կան, վորոնց դասակարգային գիտակցությունը տարբեր աստիճանի ին: Իոկ գլուղում նույնիսկ բանվոր դասակարգի հենարանը—չքավոր թյունը շատ ուժեղ կերպով վարակված ե բազմաթիվ մանր բուրժուական նախապաշտումներով: Յեթե կուսակցությունը թնկուղ մի վայրկան մոռանա իր զեկավարական գերը, ձեռքից թողնի զեկավարությունը և թույլ տա, վոր մարդիկ հոսանքի հետ զնան, կուսակցության ձեռքից բաց ընկած զեկն իսկուն կշտապեր իր ձեռքն առնել դասակարգային թշնամին: Այդ թշնամու համար ամենից հեշտն աշխատավորական անդիտակից մասսաների միջոցով գործ տեսներն ե: Թշնամին ամենից առաջ կաշխատեր իր ոգուին ծառալեցնել այդ շերտերը, վորից հետո նրանց միջոցով իր յետերից մնացած մասսան քաշ կտար: «Պոչականության» վասնզը կուսակցության համար նաև նրանում ե, վոր այդ գեղքում նա շատ շուտ կիրցնի մասսաների անսահման վստահությունը, վոր վայելում ե իրքեւ ավելի գիտակից մասը դասակարգի, վոր կարողանում ե ավելի հեռուն տեսնել, քան տեսնել կարող ե մասսան: Զի կարելի ասել, թե մասսաների կողմից կուսակցությանն առաջարգությունը բոլոր պահանջներն ել համապատասխան են սոցիալիստական շինարարության և շահագործողների: գևմ պատքարի իսկական շահերին:

Վերցնենք մի ալսպիսի որինակ: գլուղում աշխատողները դիտեն, վոր յերեմի գլուղացիների այս կամ այն խմբակները հարց են բարձրացնում բաժանել իրենց մեջ նախկին կալվածատիրական անտառները, ինչպես վարելահողերն ու արոտատեղիներն են բաժանված:

Կուսակցությունը վոչ միայն չի պաշտպանում գլուղացոց այս պահանջը, ալլև նրանց ընդդիմանում ե և աշխատում և ապացուցել վոր այդ պահանջն անհիմն ի: Բատ յերեսութիւն կարծիս լավ կլիներ. գլուղական աշխատավորությունն անտառ կստանար: Սակայն իսկապես այդպես չե: Անտառալին անտեսությունը՝ կարող բաժան-բաժան լինել: Նա պիտի տարվի պլանով, ամբողջ շրջանների շահերն ինկատի առնելով: Ցարի ժամանակն եր, վոր կալվածատերերն ու կուլակները վարվում ելին անտառների հետ այնպես, ինչպես ցանկանում ելին: Բայց ինչ նուրոս յեկավ նրանց տիրապետությունից: ԽՍՀՄ հարավ-արևել-

քում ել անտառը չմնաց. իսկ այդ անտառներն այդ կողմից փչող չոր քամբիների գեմ պատճեց ելին. Անտառը կտրտեցին և ներկայումս տուժում եւ ալգանդից միքանի հարլուր վերստ հսուռ ընկած Պովորդին: Մենք բոլորս հիշում ենք Պովորդինի սարսափելի յերաշտն ու սովոր 1921 թվին: Քամբիների ճանապարհը բաց եւ և նրանք մի ահազին շրջան են չորացնում: Խորհրդացին իշխանությունն այժմ աշխատում է վերականգնել հարավ-արևելյան անտառները, ահազին տարածություններ անտառածածկել: Դե, դնառ ու սրանից հետո անտառի բաժանում պահանջիր: Պարզ ե, վորկուսակցությունը չի կարող ալսպիսի պահանջ պաշտպանել, վորովհետեւ բավարարելով մեկին, նա վեսա և տալիս ուրիշներին, ամրող յերկրին:

Հաճախ բանվորների այս կամ այն խմբակն ալսորված շահերից կամ իր խմբի շահերից գենը չի տեսնում: Իսկ կուսակցությունը, վոր զեկավարն և ամբողջ բանվոր զասի, պիտի հաշվառի ինթարկի բանվորության քննիանուր շահերը և մերժի բոլոր խմբական պահանջները, վորոնք հակասում են ընդհանուր շահերին:

Կուսակցության պատմության ընթացքում դեպքեր ել են յեղել, յերբ բանվորական ահազին մասսաներ տարակարծիք են յեղել կուսակցության հետ՝ նրա տեսակետը սխալ համարելով: Ակդպիս յեղավ, որինակ, 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ վոչ միայն գլուզացիք, այլև բանվորների մեծ մասը՝ չնայած բայլշեիկների նախազգուշացումներին, գնացին համաձայնողական կուսակցությունների յետեից (մենշեիկների, հսերների), վորոնք պաշտպանում ելին կապիտալիստների իշխանությունն ու յետ ելին պահում բանվորներին՝ այդ իշխանությունը տապալելուց: Բայլշեիկներն այդ որերին չգնացին մասսաների յետեից, չհարմարվեցին նրանց յետամեսաց արամադրություններին, այլ նպատակ գրին ամենայն համբերությամբ բացատրել մասսաներին իրենց տեսակետի ճշմարիտ լինելը: Հետապնդված բուրժուազիալի և համաձայնողականների կողմից, բայլշեիկները համառորեն ու համբերությամբ սկսեցին հասկացնել բանվորներին, գլուզացիներին ու զինվորներին, վոր համաձայնողական կուսակցությունները դավաճանում են աշխատավորության շահերին: Այս բացատրությունների ազդեցության տակ մասսաներն սկսեցին ավելի աչալուրջ նայել մենշեիկների ու հսերների արածներին ու վարքագծին և վերջիվերջո համոզ-

վեցին, վոր բայց եթիկները միշտ են ասում: Այդ ժամանակ կուսակցության զեկավարությամբ նրանք տապալեցին բուրժուազիալիքին իշխանությունն ու աքացիզին մենշևիկներին ու ևսերներին, վորոնք պաշտպանում եին այդ իշխանությունը: Համեկ (ը) միշտ մասսաների առջևում և յեղել աշխատելով ամենահասմանագների գիտակցությունը հասցնել առաջադեմների մակարդակին, աշխատելով խմբակալին ու ժամանակավոր շահները յինդարկել բանվոր դասակարգի վերջնական նպատակներին:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Կենցու կուսակցությունը գեկավարում է բոլոր աօլաւագության պայմանը:

2. Կենցուվ ե վտանգավոր կուսկազմակերպությունների կրեպածությունը մասսաներից:

3. Կ՞ե և պոչականությունը:

### ՅԵՐԿՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՆԹՈՒՅԻԱՏՐԵԼԻՌՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ԽՍՀՄ-ում միշտ կուսակցություն գոյություն ունի - Համեկ (ը), Ռերիշ կուսակցություններ չկան: Ինչու ալղակա լեզավ: Ալղակս գարձավ վոչ նրա համար, վոր ուրիշ կուսակցություններ կազմել ցանկացողներ չկան: Բուրժուազիան, վոր դեռ պահպանվել և մեր յերկրում, դեմ չեր լինիլ իր կուսակցությունը կազմակերպելու: Կուլակները ևս գեմ չելին լինիլ զբուղում իրենց կուսակցությունը կազմակերպելու: Մոտիկ անցրալում Համեկ (ը) ոպողիցիան Տրոցկու գլխավորությամբ փորձեց առանձին կուսակցություն կազմել՝ հակակշիռ Համեկ (ը): Բայց այդ բոլոր ցանկություններից ու փորձերից վոչինչ չեր գուրս դալիս և չեր ել կարող դուրս գալ: Մեր յերկրի բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը չեն քուլ տալիս յեվ չեն ել քուլ տալ ուրիշ կուսակցություն կազմել:

Բուրժուազիան քաղաքում և կուլակը զբուղում թշնամիներն են բանվոր դասակարգի և աշխատավոր գլուղացիության: Հիմարություն կլիներ թուլլ տալ, վոր մեր թշնամիները քաղաքականապես կազմակերպվեն: Դա միայն կհեշտացներ նրանց պատքարը պրոլետարիատի գեմ:

Բուրժուազիան և կուլտուրայի շատ լավ գիտեն, վոր բաղաքական կուսակցություն կազմելու լուրաքանչյուր փորձ բանվոր դասակարգի կողմից վճռական գիտադրության կհանդիպի և կձնշիի: Այս պատճառով համախ նրանք զուղում պրոպագանդ են անում արտպես կոչված «զյուղացիական միություն» կազմելու:

Անկառակած ե, վոր «զյուղացիական միության» մասին յեղած զրուցները հականեցափոխական ընուլիթ են կրում: Յերբ կուլակներն ազիտացիա լին մղում հոգուա «զյուղացիական միության», նրանք անշուշտ աշխատում են կուլակային կուսակցություն կազմիլ, վորը կարողանար պալքարել պրոլետարիատի դիկտատորայի գեմ՝ հոգուա բուրժուական դիկտատորայի: Մենք բորբոք լավ գիտենք, թե ինչի հանգավ տրոցիֆուների փորձը՝ Համեկ (բ)-ից անկախ կուսակցություն կազմակերպել: Դուրս չեկավ, վոր բուրժուական ինտելիգենցիան իսկուն հարվեց նրանց, ամեն տեսակ քաղաքականորեն կասկածելի «անկուսակցականներ» ոգնեցին նրանց գաղտնի տպարաններ կազմակերպել, գաղտնի փաստաթղթեր տպագրել: և այլն: Դեռ տրոցիկտատական կուսակցությունը չեր ել կազմվել, վոր պրոլետարական դիկտատորային թշնամի ուժերի կենտրոն գարձավ, վոր բուրժուական տարբեր փորձեցին ոգտագործել նրան փորպես զենք՝ պրոլետարիատի դիկտատորայի և մեր կուսակցության դեկավարող զերի գեմ: Զե վոր թշնամին աշխատում ե մեր շարքերում բացված լուրաքանչյուր ճեղքից, լուրաքանչյուր բացվածքից ներս մտնել: Այս պատճառով լուրաքանչյուր ալսպես կոչված «գյուղացիական միության» կազմակերպումն բուրժուազիայի համար պալքարի աղքանշան կդառնար պրոլետարիատի դիկտատորայի և բանվոր դասակարգի կուսակցության գեմ:

Բայց թուլլ տանք անկարելին: Ասենք, թե այնպիսի զյուղացիական միություն կազմվեց, վորին բուրժուազիան հիմարար չի ուզում իր շահերին ծառայեցնել, վորի մեջ կուլակն ել չի ուզում մտնել, վորի մեծ մասը բաղկացած լիներ զյուղի աշխատավորության հիմնական մասսայից—զյուղական միջակներից: Ուրեմն, այդ կուսակցությունը «միջակի» քաղաքականություն սիմբի վարեր: Բայց արդակի քաղաքականությունը ընության մեջ չկա, չի լիլ կարող լինել: Իններորդ զյուղում մենք արդեն ասել ենք, վոր զյուղացին մանր ապրանք արտադրող եւ նու աշխատավորական ե իրեն արդակի շահագրգոված ե, վոր շա-

հագործումը վոչնչանա: Բայց նա միաժամանակ և մանր սեփականատեր ե, և իր ալս հատկությամբ նա այն իրավակարգի հետ և կապված, ուր տեր և մանր սեփականատերությունը—այսինքն բուրժուական իրավակարգին: Քաղաքականության մեջ ել չի կարելի միաժամանակ և բուրժուական իրավակարգին կողմանակից լինել և շահագործումը վոչնչացնելուն: Դեմ լինել շահագործմանը, նշանակում և պայքարել բուրժուական իրավակարգի դեմ, նշանակում և կողմանակից լինել շահագործմանը, պաշտպանել շահագործողներին: Այս գործում միջին տեղ չկա և չի կարող լինել:

Ե՞նչ քաղաքականություն կվարեր արդպիսի «զյուզացիական» կուսակցությունը: Յերկուսից մեկը—կամ պիտի շահագործողների դեմ պայքարելու քաղաքականություն վարեր, այդ դեպքում արդպիսի «զյուզացիական» կուսակցության կարիք չեր լինի, վորովհետև այդ պայքարն ավելի վճռական ու կարող կերպով տանում և Համեկի (ր), կամ թե չե, այդ «զյուզացիական» կուսակցությունը սեփականատերերի քաղաքականություն պիտի վարեր, արսինքն բուրժուական քաղաքականություն: այդ դեպքում նա հականեղափոխական կուսակցություն կդառնար:

Այս, թե ինչու բանվոր դասակարգը և Համեկի (ր) վճռականորեն դեմ եր և այսուհետև ել բոլոր ուժով ու միջոցներով գեձ կրինի մեր յերկրում մի այլ կուսակցություն կազմակերպելուն: Մի այլ կուսակցություն մեր յերկրում, ինչ անուն ել կրելու լինի նա—«բանվորական», «զյուզացիական» և այն—անխուսափելիորեն այն կենտրոնը կդառնա, զեպի վորը կձգտեն այն բոլոր ուժերը, վորոնք աշխատում են վոչնչացնել պրոլետարիատի դիկտատուրան և վոչնչացնել հեղափոխությունը:

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում եր կենինը,—համառ պայքար ե, արյունոս յեվ անարյուն, բռնացող ու խաղաղ, զինվորական ու Տնտեսական, մանկավարժական ու վարչական՝ եթե հասարակուրյան ուժերին յեվ ավանդներին հակագիր»: Միանգամայն հասկանալի յե, վոր այսպիսի համառ ու դաժան պայքարում աշխատավորության ուժերը պիտի առավելագույն չափով միացած, կազմակերպված, կենտրոնացած ու մի զեկավարության յինթարկված լինեն: Միայն աշխատավորության բոլոր ուժերի գերազույն լարումն, միայն մեր յերկրի միակ կուսակցության—Համեկի (ր)-ի զեկավարությունն ե, վոր պրավական են պայքարի հաջող վախճանի:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա այս պատճառներով եւ վոր կոմունիստական կուսակցությունն իր շարքերի կատարյալ միասնականություն և պահպանում: Նա չի թուզլ տալիս, վոր իր շարքերում ֆրակցիաներ, խմբակներ գոյանան, վորոնք կարող են նրա միասնականությունը խանդաբեր: Սակայն միասնականություն ասելով չի նշանակում, թե նա աշխատում է իր շարքերում պահպանել ամենարին—թե նրանց, վորոնք համաձայն են կուսակցություն մեծամասնության հայցքների հետ, թե նրանց, վորոնք համաձայն չեն: Այդպիս չե: Հենց իր միասնականությունը պահպանելու համար կուսակցությունն իր շարքերից վտարում ե բոլոր նրանց, վորոնք այս կամ այն ձեռվ կարող են խանդաբել նրա միասնականությունը: Արտաքսելով իր շարքերից հարբեցողներին, կրոնական տրամադրություն ունեցողներին, անազնիվ արարքներով իրենց արատավորողներին, կուսակցությանը ղեկավարում ե այն ժիշտը, թե ինքը վտարում է իր շարքերից ուղղակի վասատուներին: Դրանք աշխատավորության գործի մարտիկներ չեն, այլ ամենաանպետք մարդիկ, վորոնք կուսակցության մեջ մնալով, նրա վարկը կգցեն, մարտական հզորությունը կթուլացնեն, աշխատավորության շահերը կվաճառեն մի շիշ ողիով կամ կաշով: Այսպիսի մարդիկ կուսակցության համար միանգամայն վասակար են:

Բայց, սրանից բացի, կուսակցությունն իր շարքերից այնպիսիներին ել ե վտարում, վորոնք կուսակցությանը խորթ գաղափարներ են քարոզում, ազիտացիա լին մղում հոգում այնպիսի քաղաքականության, վորի հետ կուսակցությունը համաձայն չե: Իր միասնականությունը խանդաբողներին իր շարքերից վտարելով, կուսակցությունն իր հզորությունն ե կոփում: Յեկի իրոք, լինթաղբենք, թե ուղողը մտնում ե կուսակցության մեջ իր առանձին հայցքներով, իր առանձին քաղաքական գծով, իր առանձին առաջարկներով, վորոնք բղխում են արդ գծից: Ի՞նչ կստացվեր: Կստացվեր վոչ թե կուսակցության միասնականություն, այլ նրա իսպառ բացակայություն: Կուսակցության մեջ այնպիսի մարդկանց ներկայությունը, վորոնք կուսակցական քաղաքանության հիմնական խնդիրների նկատմամբ իրենց առանձին գիծն ունեն—անհամատեղելի կուսակցության գծի հետ:

միշտ կխախտի կուսակցության շարքերի կարգապահությունը՝ դիսցիպլինան։ Այլ ևս կուսակցություն չեր լինիլ, այլ կլիներ մարդկանց մի խմբակ—ամեն մինն իր առանձնահատուկ բացատրություններով, իր առանձին մտքերով, իր առանձին առաջարկներով, վորոնք չեն ուզում հաշտվել կուսակցական կարծիքի կուսակցական գծի հետ։ Այս պատճառով կուսակցությունը վտարել ե և պիտի վտարի այն բոլորին, վորոնք լենինյան ուսմունքին, վորի վրա կուսակցությունն իր աշխատանքն և կոռոցում, հակադրում են իրենց սեփական թեորիաները։

Այն հանգամանքը, վոր կուսակցությունը խորի թեորիաների դեմ պարզաբ և մղում, բոլորովին չի հշանակում, թե կուսակցությունն անթուլատրելի ին համարում առնասարակ քննության նկութ դարձնել կուսակցական քաղաքականության վերարբյալ այս կամ այն խնդիրը։ Անկարելի ին լերիակայիլ այնպիսի կուսակցություն, վոր այս կամ այն գործնական հարցի առթիվ վիճարանություն չունենա։ Բայց պիտի տարրերել կուսակցության քաղաքականությունն ամենի լավ անցկացնելու մասին լեզած վեճը կուսակցության բաղականության գեմ լեզած պարզաբանությունը անդամ ամբողջ խմբակ վեճ սկսի վոչ թե այն մասին, թե ինչպես կարելի ին ամենի լավ իրադրուել XV համագումարի վորոշումը կողեկանիվացման մասին, այլ վեճի նկութ դարձնելը նույն համագումարի հիմնական գիծը կողեկանիվացման մասին, պնդելով, թե կողեկանիվացումը վասնզավոր ե և անպիտք։ Պարզ ե, վոր այս պիտի վիճարանություն կուսակցությունը չի թույլատրիլ։

Արդյոք սա նշանակում է, թե կուսակցությունն իր շարքերում արգելում և ամեն տեսակ վեճ ու քննադատություն՝ հիմնական խնդիրների, կուսակցական գծին վերաբերող հարցերի շուրջը և միայն գործնական խնդիրների քննությունն և թույլ տալիս։ Վոչ, իհարկեց Բոլոր նոր հարուցվող հիմնական խնդիրների շուրջը, վորոնց նկատմամբ զետ կուսակցական վորոշում չկա, կուսակցությունը գիտկուսիաներ և թույլ տալիս։ Այդ դիսցիպլինան պիտի վագարի, հենց վոր կուսակցությունն իր վորոշումը կաւացնի։ Այնպիսի գեղքեր ել են լինում, լիրը կուսակցությունը ցանկանում է իր բոլոր անդամների վորձով ստուգել կուսակցության կողմից արգեն անցկացրած գծի ճշտությունը։ Այդպիսի գեղքերում, կուսակցական հերթական համագումարից բավական առաջ, կուսակցության կենտկոմի թուլտվությամբ դիսցիպլինան սկսվում, վորին կարող են մասնակցել և պիտի մասնակցեն կուսակցության բոլոր անդամները։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՅԻ ԿԱՌԱՒՑՎԱԾՔԸ

Կուսակցական համագումարների վորոշումով խոտիվ արգելվում և ամեն անսակ ֆրակցիաների ու խմբավորումների կազմակերպվելը կուսակցության մեջ: Ֆրակցիաներ ու խմբավորումներ ասելով կուսակցությունը հասկանում է այնպիսի կազմակերպությունների ու միությունների յիրեան դաշն իր մեջ, վորոնք գոյանում են կուսակցությունից չըդխող հայացքների, պահանջների ու կարծիքների հիման վրա: Պարզ է, վոր այդպիսի միություններ կարող են առաջ գալ միայն իրենց առանձին հայացքները պաշտպանելու նպատակով՝ կուսակցության հալացքների հանդեպ: Սա կհասցնի իր խմբակցական, ֆրակցիոն գիսցիպինայի յիրեան դալուն, վոր հակագիր կլինի կուսակցական դիսցիպինային: Այսպիսով ֆրակցիաներն ու խմբավորումները կուսակցության մեջ նոր կուսակցությունների սաղմեր կդառնան: Այս և պատճառը, վոր կուսակցությունն այնքան վճռական կերպով պարբարում է իր շարքերում ֆրակցիաներ յիրեալու գեմ:

Կուսակցության մեջ ֆրակցիաներ և խմբավորումներ թույլտալը կնշանակեր վոչ այլ ինչ, բայց լիթե կուսակցության բաժանվելն առանձին մանր կուսակցությունների: Ֆրակցիաներ ու խմբավորումներ ունենալու գեպքում կուսակցությունը դասակարգալին պայքարի մարտական զեկավարից անխուսափելի կերպով կդառնար պայքարի վայր առանձին ֆրակցիաների և խմբավորումների համար: Սա սպառնալիք և թե կուսակցության, թե հեղափոխության, թե սոցիալիստական շինարարության գոյությանը:

### ՀԱՐՑԵՐ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչու չի կարող յերկու պրոլետարական կուսակցություններին:

2. Ի՞նչու չի կարող գրուզացիական կուսակցությունների:

3. Կարելի՞ յե արգյուք վեճեց ունենալ կուսակցության մեջ:

4. Ի՞նչ և ժրակցիան կուսակցության մեջ:

### ՀԱՄԿԵ (Բ) ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կուսակցության կառուցվածքը պատասխանում և բանվոր դասակարգի պահանջներին՝ վորպիս ամուր, սաղմական, միանական առաջապահ: Կուսակցության կառուցվածքի հիմք կազ-

մում են բջիջներն՝ ըստ ձեռնարկությունների։ Հենց ալս հանդամանքն ոգնում ե, վոր կուսակցությունը զերծ մնա բանվոր դասին խորթ տարրերից։ Վորեւ զործարանում աշխատող բջիջն իր կազմի մեջ ե ընդունում միայն նրանց, վորոնք աշխատում են ալդ զործարանում։ Իսկ նրանք իրար լավ են ճանաչում, այսպես վոր հազիվ թե բախտախնդրի մեկը կարողանա բջիջի միջոցով կուսակցության մեջ սողոսկել։

Արտադրա-բջիջային կառուցվածքով կուսակցությունը մի ալլ նայատակի ել ե հանում։

Յուրաքանչյուր ձեռնարկության մեջ, ամեն մի գործարանում նա կարող է ներքաշել իր շաքրերը միայն իսկական առաջադեմ, կուլտուրական և փորձված բանվորների, վորոնք իրոք վոր ավյալ ձեռնարկության բանվորության առաջապահը հանդիսանան։ Կուսակցության արտադրա-բջիջային կառուցվածքն ապահովում է կուսակցության յուրաքանչյուր անդամի առորյա սիստեմատիկ աշխատանքին հսկելը և ալդ աշխատանքը ղեկավարելը։ Յեկ վերջապես, բջիջները կուսակցության համար ապահովում են նրա առորյա կապը բանվորական և գլուղացիական (գյուղական բջիջում) մասսաների հետ՝ անմիջորեն ըստ աշխատանքի տեղի։ Կապվելով մասսաների հետ, կուսակցական բջիջը տարածում է նրանց վրա կուսակցության ազգեցությունը և իրականացնում է նրա ղեկավարող ղերը։ Բջիջն այնուեղ, ուր նա կադամկերպված է կատարում և այն բոլոր աշխատանքը, ինչ կատարում է կուսակցությունն ամբողջ ԽՍՀՄ-ում։ Կուսակցությունը ևս իր աշխատանքը տանում է բջիջների միջոցով։ Այս պատճառով ել բջիջը կոչվում է կուսակցության պատվանդանը, նրա հիմքը։ Բջիջը կազմակերպում է իր անդամների աշխատանքը, ցուցմունքներ և տալիս նրանց, ուղղում է նրանց սիստեմները, սառուցում է նրանց աշխատանքը և այլն։ Բջիջը կուսակցության գիծն է տանում։ Նա կազմակերպում ու ղեկավարում է անկուսակցականներին։ Նա հետեւում է իր անդամների աշխատանքին՝ կոռպերացիալում, խորհուրդներում, արհմիություններում և ալլ մասսայական կազմակերպություններում, թե կարողանում են արդյոք կուսակցության գիծը տանել։

Կուսակցության ներքին կյանքը կառուցվում է ղեկավառական կենտրոնացումի հիմունքների վրա։ Սա նշանակում է, թե կուսակցության մասսաներն ընտրում են բոլոր կուսակցական որգանները—բջիջի բլուրուից մինչև կուսակցության կենտ-

րոնական կոմիտեն: Սա նշանակում է, թե կուսակցության այս որդանները հաշվետու լին իրենց ընտրող կուսակցական կազմակերպությունների առաջ: Սա նշանակում է նույնպես, թե կուսակցության վոր կազմակերպությունն ել ուզենա, կարող և քընչության առնել բոլոր և ամեն տեսակ կուսակցական, հանուր բազաքան և աեզական խնդիրներ և վորոշումներ հանել: Սակայն կուսակցությունը, վոր կառուցված և գեմոկրատորեն, ձիենոււլն ժամանակ կենտրոնացման սկզբունքն ունի: Սա ամենից առաջ նշանակում է, թե բոլոր կուսակցական որդանները զեկավարող մարմնի իրավունքներ ունեն: Նրանք վոչ միայն իրենց ընտրող մարմինների վճիռներն են իրականացնում, այլև այդ մարմինների ժողովների, կոնֆերանսների ու համագումարների ընդունիչումներին այդ կազմակերպությունների կուսակցական կրանքն են զեկավարում՝ ամբողջ կուսակցության վճիռների և քաղաքականության հիմունքներով:

Կուսակցության մեջ կենտրոնացում նշանակում է նաև այն, թե լուրաքանչյուր ստորադաս կազմակերպություն յենթակա յեղերազասին: Բջիջն ու նրա բյուրոն յենթարկվում են սալոնական կամ գավառական կոմիտեի վորոշումներին: Ռայոնականներն ու գավառական կազմակերպությունները յենթակա յեն նահանգականին, նահանգգաղաքանները—յերկրայինին, յերկրայինը՝ կուսակցության կենտրոնական կոմիտեին: Կուսակցության կենտրոնական կոմիտեն յենթակա յե կուսակցության համագումարին, վոր կուսակցության մարմինն են հանդիսանում:

Կուսակցության գերադաս մարմինների ցուցմունքներն ստորագաններին պիտի կատարիլին կուսակցական կարգապահության կարգով: Յեթե տվյալ կուսակցական կազմակերպությունն իր ստացած ցուցմունքների ու վճիռների հետ համաձայն չե, կարող և բողոքարկել Բայց քանի վոր այդ վորոշումները կամ վճիռները փոխված չեն, ճշտությամբ պիտի կիրառվեն կրանքում: Բողոքարկելը կուսակցական կազմակերպության իրավունք չի տալիս չիրագործել բողոքարկված վորոշումը:

Դեմոկրատական կենտրոնացման և կուսակցության անդամների կարգապահության վրա հիմնված կուսակցական կառուցվածքի մեջ և գտնվում նրա հսկա ուժը: Կուսակցությունն ուղած բողեջին կարող և իր անդամներին զորահավաքի յենթարկել և նրանց ուշադրությունը տվյալ խնդիրների վրա կենտրոնացնել: Հոկտեմբերերյան հեղափոխության ժամանակ կուսակցու-

թլան հրամանով նրա բոլոր կազմակերպությունները մարտի անցան։ Քաղաքացիական կոմիսների ժամանակ կուսակցությունն իր անդամներին մասսաներով եր ուղարկում ճակատները՝ կովելու հանուն աշխատավորության գործի ներկայումս, յեր յերկրի ինդուստրալիզացիան և կառարկում, կուսակցությունն և ցույց տալիս, թե տվյալ ժամանակի համար աշխատանքի կարեսը շրջանները վորոնք են, սրան համապատասխան ել դասավորում և իր ուժերը, և նրա բոլոր անդամները, վորոնք աշխատում են շինարարական զանազան շրջաններում, աշխատում են ճշտությամբ կատարել կուսակցության առաջարրած խնդիրները։

### ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության մեջ անկարելի կլիներ կենտրոնացումն առանց կարգապահության Առանց կարգապահության կուսակցությունը հզոր չեր լինիլ Այս պատճառով կուսակցության մեջ տիրում և խիստ, յերկաթե կարգապահություն, վորին պարտավոր են յենթարկվել նրա բոլոր անդամներն ու կազմակերպությունները—անկախ կուսակցության մեջ նրանց գրաված դիրքից Խոտափուն կարգապահության յենթարկվելու պահանջն առնենից անհրաժեշտ ու կարենոր պահանջն ե, վոր կուսակցությունը ներկայացնում է իր անդամներին։ Այլ կերպ չի յել կարող լինել Յեվ խիսկապես, ասենք մի բոպե, թե կուսակցության մեջ խիստ կարգապահություն չկա։ Կուսակցությունը մի վորոշում և կայացնում։ Կուսակցության անդամները պարտավոր են վոչ միայն յենթարկվել այդ վորոշմանը, այլև պալքարել և աշխատել, վոր նաև անխախտ կերպով կիրառվի կյանքում։ Թուլ կարգապահությունը հնարավորություն կտար վորոշումներին վերաբերվել «հենց ալնպես»։

«Եհ, վոր ե, կանցնի»—կուսակցության վորոշումների համար կասեր նրա անկարգապահ անդամը։ Հետեանքն այն կլիներ, վոր կուսակցությունը լոկ դատարկ խոսարան կդառնար։ Նա վորոշումներ կկայացներ, այդ վորոշումները թղթի վրա կմային, կուսակցությունը կգործեր յիրուցան կերպով, ում խելքն ինչպես կկտրեր։ Առանց կարգապահության կուսակցություն չի լինիլ, առանց յերկաթե կարգապահության կուսակցությունը չեր կարող լրիվ կերպով կատարել սոցիալիստական շինարարության և իրենց ազատագրման համար պալքարող մասսաների ղեկավարի գերը»։

1. Ի՞նչ է պեմոկատական կենտրոնացումը:
2. Ի՞նչու Քաբրիկաներում յևի գործառներում կուսակցությունը բշխներ ե ասեղծում:
3. Ինչու կուսակցության մեջ կարգապահություն ե պես:

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուսակցության մեջ մտնող լուրաքանչյուր բանվոր ու զուգացի իր վրա մեծ պարտականություններ ե վերցնում: Յեթև մեկը կուսակցության անդամ ե դառնում, գրանով նու վոչ մի առանձին իրավունք չի ձեռք բերում, բացի նոր աշխարհ կառուցողների առաջին շարքերում լինելու իրավունքից: Սակայն կուսակցության անդամի կոչումը նրա վրա շատ մեծ պարտականություններ ե դնում: Կուսակցության լուրաքանչյուր անդամ իր ըստոր ուժերը պիտի նվիրի բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի գործին, պիտի կարողանա իր ըոլոր անձնական շահերը լինմարկել այն խնդիրներին, վորոնք առաջազրում ե կուսակցությունը, անկուսակցական մասսայի համար պիտի հանդիսանա տոկունության, գիտակցության, կարգապահության և սոցիալիզմի կառուցման ու միջազգային պրոլետարական հեղափոխության գործի հաջողության համար պայքարողի որինակ:

Կուսակցության անդամն անկուսակցական մասսայի համար որինակ պիտի հանդիսանա: Վոչ կուլտուրական, հիշոցարան, հարքեցող, շրջնորկի, անտարբեր մարդը միանգամայն վնասակար և կուսակցության համար: Սա գտնան թեկնածու յեւ կուսակցության անդամը միշտ ամենքի աչքի առաջ ե, վորովհետև նա հասարակական աշխատանք և տանում: Յեվ յեթե նա վորպես քաղաքացի կարգին մարդ չե, նա արհամարդանքից ու ծաղրից բացի վոչինչ չի շահիլ կուսակցության այսպիսի անդամը միայն կվարկաբեկի կուսակցությունը: Այս պատճառով կուսակցությունն իր անդամների մասնավոր կրանքը չի բաժանում նրանց հասարակական աշխատանքից:

Կուսակցությունն իր անդամից պահանջում ե, վոր նա ակտիվ կերպով մասնակցի կուսակցական և հասարակական աշխատանքներին: Պետք ե ի միտ առնել, վոր կուսակցության անդամի ակտիվությունը չափվում ե վոչ թե նրա արտասահմած քառե-

րով, այլ ամենորյա կուսակցական և հասարակական աշխատանքով:

Կուսակցության անդամն իրազեկ պիտի լինի բոլոր կուսակցական վորոշումներին. նա պիտի կազմած լինի լայն բանվորական ու աշխատավորական մասսաների հետ, ուշադիր լինի նրանց ցագ ու կարիքին, ուսումնասիրի նրանց կարիքները, հաղորդի այդ բոլորի մասին կուսակցական կազմակերպություններին, խորհրդակցի, քննի ընկերների հետ, թե ինչպես ավելի լավ և նրանց բավարարելը: Նա պիտի ծանոթանա հասարակական կազմակերպությունների հետ, իմանա, թե աշխատանքն ալյուստելի ինչպես և ընթանում, անրավականություն ու բողոքներ չկան, հարց բարձրացնի այդ բողոքների մասին, քննի նրանց, իրազեկ դարձնի կուսակցական կոմիտեին—մինչև վոր այդ թերությունները վերանան: Կուսակցության անդամը պիտի կարողանա մասսաների մեջ նախաձեռնություն ու ակտիվություն առաջանել մեր տնտեսական ու կուլտուրական աշխատանքի թերությունների, մեր ապարատի բլուրովրատիվմի դեմ պալքարի գործում, պետք և մասսաներին ոգնի՝ կարգավորելու հասարակական վերահսկողությունը ապարատի աշխատանքների նկատմամբ, պետք և մասսաների մեջ ցանկություն ու կարողություն առաջ բերի դեպի այդ վերահսկողությունը, զեպի պալքարը՝ բլուրովրատիվմի դնմ:

Կուսակցության անդամը պիտի գլուղում անդադար աշխատի կազմակերպել գլուղական չքավորությունը և միջին ակադիվը: Բատրակության և չքավորության շահերը կուլտակներից պաշտպանելու գործում նա առաջին տեղը պիտի բռնի: Նա պիտի աշխատի զլուղում զրագիտությունը բարձրացնել, կուլտուրական կյանք ստեղծել, պիտի հոգա, վոր լրագիրը, գիրքը և սաղիոն տարածվեն, պիտի պալքարի հարբեցության ու խուլիգանության դեմ և այլն:

Վորպեսզի կարողանա իր առաջ դրած խնդիրները լավագույն կերպով լուծել, կուսակցության անդամը պիտի միշտ աշխատի բարձրացնել իր քաղաքական և կուլտուրական մակարդակը և նույնն անհելու իր ընկերներին:

Մեր յերկրի կուսակցական և հասարակական կյանքում վոչ մի անկյուն չկա, վոր չվերաբերեր կուսակցության անդամին: Ամեն տեղ նա պիտի որինակ դառնա, ամեն տեղ նա պիտի լինի վոչ թե պոչում, այլ առաջինը:

## Ց Ա Ն Կ

### ԶՐՈՒՅՑ ՑԱԹԵԲՈՒՐԴԻ

#### ՄԵՐ արզունաբերությունը

	Եջ
Կառիտալիստական և սոցիալիստական արդյունաբերություն	3
Մեր ֆարբիկանների ու գործարանների աճումը	6
Դիմավոր ուշադրությունը պիտի զարձնել մեքենաների ար-	
ատպրության վրա	9
Արդյունաբերության վրա ծախավող գրամը վճրանելից և	12
Արտադրության սացիոնալիզացիան	14
Բացիոնալիզացիան ի՞նչ և առաջ բանվորին ու գլուզացուն	18
Գլուսարարություն	20
Արտադրողական խորհրդակցություններ	21
Յոթժամյա բանվորական որ	22
Գործադրկություն և 7-ժամյա բանվորական որ	25

### ԶՐՈՒՅՑ ՈՒԹԵԲՈՒՐԴԻ

#### Կուլտուրական հեղափոխություն յև կոմսոմոլի անելիքները

Մասսաների անկուլտուրականությունը գլխավոր խոչնդուն	27
և սոցիալիստական շինարարության	
ի՞նչ և կուլտուրան	32
Մեր վերաբերմունքն անցրալ կուտառեալի նկատմամբ	34
Պրոլետարիատի ղեկավարությունը կուլտուրական հեղափո-	
խության ասպարիզում	36
Աշխատավորական մասսաների վերադաստիարակության	
ինդիրը	39
Պալքար բուրժուական ազգեցությունների ղեմ	41
Նոր մարդ գաստիարակելու խնդիրը	44
Պալքար ղիտության համար	45
Կոմսոմոլը և պալքար ղիտության համար	47
Պալքար աշխատանքի կուլտուրալի համար	50
Աշխատավորության կենցաղի վերակառուցումը	50

## ԶՐՈՒՅՑ ԻՆՆԵՐԱՐԴԻ

### Մենք սոցիալիզմ ենք կառուցում

Մեր անտեսական լետամիացությունը . . . . .	52
ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության տեսակները . . . . .	55
Մենք սոցիալիստական անտեսություն ենք կառուցում . . . . .	60
Դասակարգեր . . . . .	63
Դասակարգային կոխի . . . . .	66
Սոցիալիստական շինարարության դասակարգային թշնամիները . . . . .	68
Բանվորների ու գյուղացիների միությունը . . . . .	73

## ԶՐՈՒՅՑ ՏԱՄԵՐԱՐԴԻ

### Պրոլետարիատի գիկատուրան

Կապիտալիստական լերկըներում մոմ ձեռքումն և իշխանությունը . . . . .	77
Պրոլետարիատի գիկատուրան ԽՍՀՄ-ում . . . . .	82
Պրոլետարիատի գիկատուրան և սոցիալիզմի կառուցումն . . . . .	85
Բանվոր դասակարգի գեկավարող գերը սոցիալիստական շինարարության մեջ . . . . .	88
Խորհուրդները պրոլետարական գիկատուրայի ձեռն են . . . . .	92
Ազգությունների միությունը . . . . .	93
Բլուրովրատիզմ . . . . .	97
Բլուրովրատիզմի դեմ պարտքելու ուղիները . . . . .	102

## ԶՐՈՒՅՑ ՏԱՄՄԵԿԵՐԱՐԴԻ


### Համեև բանվոր դասակարգի կուսակցություններ

Բանվորների պարտքելու կապիտալիստների դեմ . . . . .	106
Համեև պրոլետարիատի առաջապահն և . . . . .	109
Համեև-ի կազմը . . . . .	112
Կուսակցությունն ինչպես և գեկավարում աշխատավորությանը . . . . .	113
Ցերկու կուսակցության գոյության անթուլատրելիությունը . . . . .	118
Կուսակցության միասնականության անհրաժեշտությունը . . . . .	121
Կուսակցության սխեմայի կոռուցվածքը . . . . .	123
Կամեև (ը) կազմակերպական պարտակաները . . . . .	123
Կուսակցական կարգման պահանություն . . . . .	126
Կուսակցության անդամի պարտականությունները . . . . .	127

5. Վորագեսպի կարելի լինի խմբակի անդամներին լրացիք կարգալ սովորեցնել և, իր աշխատանքում սպազործել այն անդեկությունները, վոր լրացիքը հաղորդում և, անհրաժեշտ և հանձնարարել խմբակի անդամներին հաջորդ զրուցի համար նյութեր համարել վոչ միայն անդամներից, այլև թիրթերից:

6. Վորագեսպի կարելի լինի ստուգեր, թե խմբակի անդամներն ինչ չափով են լուրացրել կարգացած զրուցի գլխավոր միաժը, լուրաքանչյուր զրուցի վերջում զրված են հարցեր, վորոնց պետք և պատասխանել Ամենից լավ և ընդունել հարցերին պատասխան տալու հետեւալ կարգը. Հարցը բարձր կարգացվում և, խմբի անդամները նրան հերթով պատասխանում են, այդ պատասխանները քննության են առնվում և վերջն արդ հարցի համար ընդհանուր պատասխան և մշակվում: Այդ պատասխանը հարցի հետ միասին զրվում և պարագաների արձանագրության մեջ, իսկ խմբակի լուրաքանչյուր անդամ զրում և իր անդամ պատճեն:

Խմբակի անդամներն իրենց ձեռք բերուծ գիտելիքները պետք և աշխատեն իրենց զործնական աշխատանքում կիրառել Թրա համար լուրաքանչյուր պարագաների վերջում պետք և խմբակում քննել այն խնդիրը, թե ինչ կարող և բջիջն անել իր աշխատանքի արև կամ ընագավառը բարելավելու համար:



ԳԱԱ ՀՀ ՆԱԽԱՐԱՐ Գիտ. Գրադ.



FL0003119

A II  
23796



ԿԲՆԲ 60 ԿՈՊ.

384.

Учебник  
для комсомольских политчиток  
в деревне.  
Часть II.